

ՄԻՈՆ

ԾԲ. ՏԱՐԻ — ՆՈՐ ԾՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ

1978

Ապրիլ - Յունիս

Թիւ 4 - 6

1978

April - June

No. 4 - 6

SION

VOL. 52

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press
Jerusalem



ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՅԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ կեանքին մէջ աղէտներ կան, որոնք իրենց հարուածին ահաւորութեամբ կը զգեստեն ու յաճախ կ'անդգայացնեն, երբեմն նոյնիսկ խլելով անոնցմէ վերադրելու ամէն միջոց ու կարելիութիւն: Իսկ մարդկային պատմութեան մէջ կան բացառիկ պարագաներ, երբ նման աղէտի հանդիպած ժողովուրդ մը ինքզինքին մէջ կը գտնէ բաւարար ուժ եւ կամք՝ ոտքի նետուիլու եւ ապրելու:

Հայր այդ բացառիկ պարագան կը ներկայացնէ: Տարօրինակ բարենիշ մը ասիկա իրեն՝ ինք որ իր արիւնտտ պատմութեան ընթացքին նուազագոյն քանի մը անգամ տենդային այդ ձգտումը ցոյց տուած է եւ ապրած: Եւ սակայն, դէպի կեանք այդ ձգտումը չէ եղած զուտ բնազդական արարք մը, այնպէս՝ ինչպէս բոյսերը իրենց տերեւներն ու ճիւղերը կ'ուզեն դէպի արեւին ճառագայթները: Ծիչդ է որ Հայ կեանքին բազմիցս վերնծիրդումը նախ եւ աւելնէն առաջ ապրելու տենջի գրեթէ բնազդական գործնականացումն է. բայց այդ առաջին քայլը միշտ առնուած է՝ որպէսզի ապրելով՝ Հայը կարենայ իմաստ մը տալ տաժանքով ստացուած իր կեանքին, բեղմնաւորել ու արդիւնաւորել դայն, ի շահ իրեն, չուրջիններուն եւ բոլորին: Յեղային մեծամոլութեան սնամէջ հաստատում մը չէ ասիկա, որովհետեւ Հայուն կեանքը եւ Հայուն դարաւոր մշակութիւնը այս կը փաստեն: Հայը «Բանին սպասարկուն» է, Գեղեցիկին հիացողը, արժեւորողն ու գնահատողը այն բոլորին՝ որոնք կը բխին հոգիէն ու մտածողութենէն, որոնք բարի են եւ ուղիւն ուղիւ, որոնք ճշմարիտ են եւ բարոյացնող: Թող խամբի՝ Հայուն քով նկարագրի այս հաստատ գիծը, եւ ան տարբերութիւն պիտի չունենայ ու պիտի չգանազանուի այն շատ մը ցեղերէն՝ որոնց գոյութիւնը այս աշխարհին վրայ բնւ մըն է միայն: Պատահականութեան կամ քմահաճոյքի մը արգիւնք չէր 1915 Ապրիլ 24-ին ամենէն առաջ Հայ միաթին եւ սիրտին տրուած գրեթէ մահացու հարուածը: Մեզ ոչնչացնել նկրաող չար ոգին շատ լաւ գիտէր ար-

ժէքը Հայ կրօնականին ու գրագէտին, Հայ արուեստագէտին եւ բժիշկին:

Ինչպէս անհատներ՝ նոյնպէս եւ ժողովուրդներ կ'ապրին ու կը ստեղծագործեն նպատակի մը համար: Այլապէս մարդկոյնին կեանքը պիտի նմանէր խոտի գոյութեան՝ աննպատակ եւ անպրգին: Ժողովուրդներու մէջ ստէպ յայտնուող հզօր իմացականութիւններն են որ ուղղութիւն կու տան, կը գծեն այն ճանապարհը որմէ պիտի ընթանան բաղմութիւններ յաջորդող հարիւրամեակներուն: Այս բոլորը սակայն այն հաւաքականութիւններուն մօտ՝ որ խաղաղութիւնը կը տիրէ, որ մարդիկ կը կոխեն իրենց հայրենի հողին վրայ հպարտ ու ինքնավստահ, որ անորոշ ու մութ ապագան երախարաց դէմ յանդիման չի գտնուիր իրենց:

Մենք որ այսօր Հայ սփիւռքը կը կազմենք, ոչ միայն հզօր իմացականութիւններու, այլ մարգարէական յայտնատեսութեամբ օժտուած անձնաւորութիւններու պէտք ունինք, որպէսզի մեզի ցոյց տան, իրբեւ նոր օրերու «կրակէ սիւներ» այն ուղին՝ որուն պարտաւոր ենք հետեւիլ անշեղ ու հաստատ, եթէ կ'ուզենք պահել Հայու մեր դիմագիծը եւ օր մը, երջանկաբեր օր մը, մեր ոտքերը կոխել այն հողին վրայ որ տակաւին արիւն կը բուրէ: Որովհետեւ, չի բաւեր միայն խօսիլ ծրագիրներու մասին եւ ըլլալ խօսքի ու բառի վարպետներ: Որովհետեւ, չի բաւեր միայն տարին սնդամ մը յուշահանդէսներ կազմակերպել եւ ողբալ կամ սիգանալ, ու ասլտամէն բան մոռացութեան տալ: Մեզի կը պակսի Տեսիլքը մեր ապագային, այն դերպանցօրէն հմայիչ լոյսը՝ որ պայծառացնէր մեր ներկան, չունչ տար ու կեանք ու կորով՝ դէպի իրեն յառաջանալու, եւ որ մեզի լսելի դարձնէր ձայնը դարերէն եկող՝ մեր կոչումը պատգամող:

Եւ իրապէս, Հայ ըլլալ՝ կը նշանակէ կոչում ունենալ այս կեանքին մէջ, ապրիլ լոյսը ունի տարբեր Յայնէն, Ամերիկացիէն կամ Սաւանայիէն: Այդ կոչումը մեզ կը պարտաւորեցնէ անընդմէջ դժգոյսութիւններու, զրկումներու, դժուարութիւններու եւ այլ նեղութիւններու: Այո՛, դժուար է Հայ ըլլալ ու Հայ ապրիլ. հզօր կամք անհրաժեշտ է, դիմանալու կորով, հաստատամտութիւն եւ մանաւանդ՝ հաւատք մեր ապագային, մեր գալիքին, մեր երջանկութեան: Դժուար է Հայ ըլլալ, սակայն միաժամանակ մեծագոյն պատիւ է այդպէս ծնած ըլլալ: Կեանքը զոր կ'ապրինք՝ մարտահրաշխանութիւն լիցուն է, պայքարներով, հոսանքն ի վեր ընթանալու ճիգերով: Ան սակայն այն կեանքն է՝ որ մեզ մեր նպատակին կ'առաջնորդէ, անոր՝ որուն համար հոսեցաւ բիւրաւոր Հայերու մարբամարութիւնը: Անոնց Երազը իրականացնելու կոչուածներն ենք մենք. հաւատք ունենանք մեր վրայ, ողեղինուինք, պայքարին, արեւին յանուն այդ Երազին, եւ, ինչպէս մեծ գրագէտը կը պատգամէ, եթէ Աստուծոյ կողմէ մեզի հարցուի թէ վերստին ծնունդի մը պարագային ո՛ր ազգին կ'ուզենք պատկանիլ, պատասխանենք:

«Տէր, հակառակ բոլոր տառապանքներուն եւ բոլոր նեղութիւններուն, մեզ վերստին Հայ ըրէ»:

Ա. Գ.

ԿՐՕՆԱԿԱՆ

Խ Ա Ի Ա Ր Ո Ի Մ (*)

Հայր՝ եթէ կամիս՝ անցն գրածակն այս յիմէն:

Այն վայրկեանէն ի վեր, երբ Յուդա դուրս ելաւ վերնատունէն, գիւղեր էր արդէն. կանոյ առած էր խօսակցութիւնը երկնքի եւ երկրի միջեւ: Գիւղերուան մութը միայն արթուն էր, Գեթսեմանիի պարտէզին մէջ, ուր իջած էին Յիսուս եւ իր աշակերտները: Յուդա դացած էր դէպի քահանայապետներն ու դպիրները, մատնութեան ճամբով առաջնորդելու համար զանոնք դէպի Յիսուս, իսկ միւսները՝ թոյլ տուած էին որ խաւարը թափանցէ իրենց աչքերէն ներս, մթնցնելու չափ իրենց հաւատարմութիւնը: Քնացած էին: Մոռցած էին տակաւին մի քանի ժամ առաջ, խոնարհութիւնը Տիրոջ, երբ զենջակ մը մէջդին, ոտքերու լուացումով սկսած էր տառապանքի իր դիչերը: Քուներ այնքան ծանր կշռած էր իրենց աչքին, որ վերջին ընթրիքի հացը եւ գինին, իրենց խորհրդաւորութիւնը կորսնցուցած, յիշատակ մը նոյնիսկ չէին: Մինակ էր Ան, արեան իր քրտինքին մէջ: Կը փորձէր վերահաստատել կապը իր հօր հետ եւ առաջին անգամ ըլլալով, իրեն համար բան մը կը խնդրէր. կը խնդրէր, սակայն Անոր կամքին ձգելով որոշումը: Կը խնդրէր որ անցնէր մութին մէջ զծուած բաժակը եւ չմօտենար իր շուրթերուն:

Միակ պատասխանը, սակայն կու գար մութէն. մարդոց թանձր չարիքէն, որոնք կը յամառէին իրենց հանգատաւէտ մեղքին մէջ: Զէին հանդուրժեալ նոր ձայն մը, որ յանդիմանութեան եւ դատապարտութեան սլաքներ ուղղէր օրէնքի վարդապետներուն՝ դպիր եւ Փարիսեցի, որոնք Աստուծոյ պատիրանները վերածած ոսկեղօծ պատմուճանի, ինքնապատահ քայլերով կ'երթային Տաճար եւ Յուդայի առաջնորդութեամբ կու գային լուցնելու այդ Ձայնը: Որս փնտռող գիւղերային կենդանիներու աչքերուն պէտ, անոնց ջահերը կը ծածկէին մութը, երբ անոնց առաջնորդին համբոյրը կը հոտուրտար իր դոհը, անասնական կրքոտութեամբ:

Ձարին ժամն էր եւ մարդոց դարաւոր մեղքերը պէտք էր գային դէպի «զառն Աստուծոյ», լեցնելու համար մութին մէջ կախուած բաժակը: Մարդը պէտք է տար երկարութիւնը մութ ճամբուն որ հեռացուցած էր զինք աստուածային դրախտէն: Պէտք էր չափէր միհր իր անկումին՝ մեղքի տիղմին մէջ: Պէտք էր կշռէր ծանրութիւնը իր մարմինին որ քաշած էր զինքը դէպի անդունդը մահուան: Պէտք էր այդ գիւղերուան մէջ, թանձրանար խաւարը ապականութեան որ վանած էր մարդկային դէմքէն՝ դբոջմը Արարիչին: Անհրաժեշտ էր որ մեղքին զերութեան մէջ իր հողին կորսնցուցած մարդը՝ ոճրագործ իր ձեռքը երկարէր մինչեւ Որդին, սպաննելու համար Հայրը՝ Անոր մէջ:

(*) Քարոզ՝ խօսուած Խաւարման գիշերը:

Եւ իր մոլորանքին մէջ, մարդը կարծեց սպաննել զԱստուած, սպաննելով անոր մարմինը: «Ո՞ւշ հանէ դայն» դռնէն Պիղատոսի առջեւ, կարծելով երկաթէ դամով խաչին կապել յաւիտենականութիւնը:

Աստուակի ոյժով ուղեցին խօսեցնել աստուածային յոռութիւնը եւ բանտի չարչարանքներով կարծեցին նուազեցնել Անոր բարութիւնը:

Աշակերտէն մինչեւ քահանայապետը եւ ծառայէն մինչեւ տէրը, բոլորն ալ, իրենց ուրացումներով եւ մատնութեամբ կամ իրենց խարաղանով եւ փուշէ պոսակով զրեցին Անոր մարմինին վրայ լման ցուցակը մարդկային մեղքերուն:

«Զի ահա դառն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի»:

Պատարագի ժամն էր: Աստուածային արիւնով միայն կրնար մաքրուիլ բաժակը, որ մարդիկ լեցուցած էին իրենց մեղքին մրուրով: «Այս է արիւն իմ...»: Աստուածային սէրը միայն կրնար յաղթել մահուան: Եւ այդ սէրը, «իջեալ ի վերուստ» քամեց Փրկիչը խաչի փայտին, իրրեւ «քահանայապետ եւ պատարագ»: Ուշի Ս. Սեղանին վրայ, ինք մատոյց ինքզինք, իրրեւ զոհ, մեր մեղքերու թողութեան համար, որովհետեւ ոչ մէկ մարդկային ոյժ բաւարար էր վերականգնելու չափ անկեալ մարդը՝ իր փառքին մէջ: Գինն էր Ան մեր փրկութեան:

Ուշին վրայէն հոսող իր ներումի խօսքը «Հայր, թող դոցա, զի ոչ պիտեն զինչ գործեն», քաւութեամբ կ'ողողէ մարդերու մեղանշումը եւ կը վերականգնէ մեզ աստուածային որդեգրութեան մէջ:

Բաժակը այժմ փոխուած է խաչի: Մարդացեալ Աստուածը կ'ընծայուի իրրեւ վերջին զոհը Հին Ուխտին եւ առաջին պատարագը՝ Նորին: Բաժակը այժմ տապանակն է Նոր Ուխտին՝ կնքուած «մասն մեր» թափուած աստուածային արիւնով: Լրումն է «օրինաց եւ մարգարէից»: Գեթսեմանիի բաժակին մէջ լեցուած մեղքերուն մրուրը խմուած է այժմ եւ աստուածային չրթունքները՝ փոխած են անոր լեզի գինին՝ հաղորդութեան խորհուրդի: «Այս է արիւն իմ Նորոյ Ուխտի...»: Հրաւէրն է ան՝ խաչէն արձակուած՝ զէպի մարդերուն ամբողջ: Հին Ուխտի բնորեալ ժողովուրդը, որ «հալածեց մարգարէները եւ քարկոծեց իրեն զրկուածները» կոչուած է այժմ պատարագի նոր սեղանին, ուր հրաւիրուած են բոլոր ազգերը, «ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի»:

Երկաթէ դամեր չեն որ կը բռնեն Փրկիչը խաչափայտին վրայ, այլ սէրը Աստուծոյ զէպի իր ստեղծած մարդիկ, որոնց համար աշխարհ զրկեց իր Միածին Որդին, «զի մասն մեր մարմնացաւ»: Մարմին առաւ ան, որպէսզի այդ մարմինին վրայ բարձած մեր մեղքերը, վերականգնէ մեզ աստուածային սիրոյն մէջ:

Բեթղեհէմէն յայտնուեցաւ իր սէրը եւ Գողգոթային վրայ հասաւ իր լրումին: Եւ խաչը, Աստուծոյ սիրոյ ճամբան, բացուեցաւ մեր առջեւ, որպէսզի մկրտութեամբ արդարացած, մեր կեանքը բնենք խաչի ճամբայ մը, մեզ

տանող Քրիստոսի արեան հաղորդութեան: «Սա է կեանք, յոյս, յարութիւն . . .»: Այդ բաժակէն պիտի վերածնինք շարունակ իրրեւ որդիներ Աստուծոյ եւ ժառանգորդներ արքայութեան: Խաչելութեան գիշերէն պիտի ծնի յարութեան արշալոյսը, անոնց համար, որոնք կրնան ըսել Առաքեալին նման. «Աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհին»: Ան որ իր անձը ուրացած, կը հետեւի խաչի խորհուրդին, իր մարմինի մութը կը յեցնէ իր հոգին լոյսով, կ'ըլլայ «տաճար Աստուծոյ կենդանւոյ»:

Խաչէն կաթեցաւ Աստուծոյ սէրը գէպի մարդը. խաչին ճամբով է որ պէտք է բարձրանայ մարդուն սէրը գէպի Աստուծոյ: Եւ այդ սիրոյն մէջէն՝ յարութեան յոյսը պիտի ըլլայ իրականութիւն, որովհետեւ հոգեպէս պիտի վերածնինք նոր կեանքի մը, իրրեւ «որդիք լուսոյ եւ որդիք տունջեան»:

Այն ատեն պիտի իջնէ խաղաղութիւնը ձեր հոգիներէն ներս, ան խաղաղութիւնը զոր մեր Տէրը խոցտացաւ իր աշակերտներուն, Վերջին Ընթրիքին, երբ ըսաւ. «Իմ խաղաղութիւնս կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի . . .»: Խաղաղութեան դաշինք մը կը կնքուի Աստուծոյ հետ երբ, դրած խաղաղութիւնը սիրտի, հոգիի եւ խիղճի, մերկացած մեր մեղքերէն, ինկած խաչին ոտքը, կ'ունենանք յայտնութիւնը յաւիտենականին:

Երանի անոր որ՝ խաչ հանած ժամանակաւորը, Աստուծոյ սիրոյն մէջ կը գտնէ յաւիտենականութիւնը, այս կեանքի ներկային մէջ իսկ:

Շ . . .

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

«ՄԵՍԻԱ»ՅԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ

Պատմական անուամով Յիսուս-Քրիստոսի ամբողջ կեանքի եւ առաքելութեան միակ մնացուցիչ ու տեսանելի վկայութիւնը եկեղեցին է՝ անհատների մի «համայնք», որ կոչւում է նաեւ «Աստուծոյ ժողովուրդ»։ Այս «համայնք»ը Լազմակերպութեան ո՛չ դաւանանքի, ո՛չ էլ ինչ-որ գաղափարախօսութեան, այլ մի Անձի շուրջ, որին եկեղեցին լատիներէն կերպով բնորոշեց «Մեսիա» կամ «Օծեալ» մակդիրներով։ Յունարանները այս մակդիրը բառացիօրէն թարգմանեցին «Քրիստոս», որ ժամանակի ընթացքում դարձաւ պարզ յատուկ անուն, թէեւ Աւետարանի մէջ այն հաւանաբար ունի մասնաւոր դեր՝ պատմական իմաստով։ Յովհաննէսը իր Աւետարանում եղբակացնում է՝ «Յիսուսը Քրիստոս է» (Յովհ. Ի 31)։ (Չորրորդ Աւետարանը նախապէս բաղկացած էր միայն 20 գլուխներից, 21րդ գլուխը աւելացուած է հետագայում)։ Կասկած չկայ, որ միւս աւետարանիչներն էլ նոյն ձեւով պիտի բնութագրէին իրենց դրութեան նպատակները։ Սակայն շատ տարօրինակ կարող է թուալ մեր այն դիտողութիւնը, թէ չորս աւետարանիչները, որոնք արձանագրել են Յիսուսի դործերը եւ խօսքերը՝ շատ հազուադէպ են դորձաձուլում «Քրիստոս» մակդիրը, իսկ դորձաձուլիւ էլ երկընտրանքի մէջ են։ Միայն մէկ բացառութեամբ (Յովհ. Դ 25-26)։ Չորրորդ Աւետարանի մէջ Յիսուսը երբեք ներկայացուած չէ որպէս «Մեսիա»։ Սրանից բացի, Աւետարանների մէջ հանդիպում ենք նաեւ այն դարձմանքի երեւոյթիին, երբ Յիսուսը մի քանի առիթներով զգուշացնում է իր աշակերտներին, որոնք յստակօրէն գիմում են իրեն՝ «Մեսիա» անուանելով նրան։ Միայն երկու անգամ, երբ դորձաձուլում է այդ անուանումը՝ Յիսուսը մատնուում է անորոշութեան ե թւում է, թէ ընդունում է այն։

Նախ քննարկենք այդ երկու առիթները։

Առաջինը գտնում ենք երեք Աւետարանների մէջ։ Մի անգամ Կեսարիայի շրջանում, անցողակի մի խօսակցութեան ժամանակ Յիսուսը հարցնում է իր աշակերտներին. «Մարդկանց կարծիքով ես ո՞վ եմ»։ Ժողովրդի տեսակէտները իմանալուց յետոյ հարցնում է նրանց. «Իսկ ձե՞ր կարծիքով ես ո՞վ եմ»։ Պետրոսը պատասխանում է. «Դու Քրիստոսն ես»։ Մինչեւ այստեղ բոլոր Աւետարաններն էլ համանման են։ Մարկոսի համաձայն (որին հետեւում է նաեւ Դուկասը), Պետրոսը ստանում է հետեւեալ պատասխանը. «Որ իր մասին (Յիսուսի - Վ. Ն.) մարդկանց չպատմեն»։ Մատթէոսը ունի տարբեր եւ շատ ուշադրաւ մի կարծիք ըստ որի, Յիսուսն ընդունելով հանդերձ Պետրոսի յաւատարարութիւնը, պատասխանում է աշակերտներին՝ «որ մարդու չասեն թէ ինքը Քրիստոսն է»։ Յովհաննէսն էլ նոյնն է պնդում, թէեւ ոչ շատ բացառապէս կերպով։ Ըստ Յովհաննէսի, Պետրոսը «Մեսիա» անուանումը հաստատելուց աւելի պարզապէս անուանում է այն. «Դու ես Քրիստոսը՝ Աստուծոյ որդին»։ Այս ամբողջ դէպքի նկարագրութիւնը մի քիչ առեղծուածային է պարզապէս նրա համար, որ ստոյգ չգիտենք Յիսուսն ընդունե՞ց թէ չընդունեց «Մեսիա» մակդիրը։ Ըստ Մատթէոսի՝ այս, իսկ ըստ միւս երեք աւետարանիչների թէեւ Յիսուսը չընդունեց այն բացէ ի բաց, բայց եւ այնպէս, չմերժեց էլ մերժեալանապէս (Մտթ. Ժ 2 13-16, Մրկ. Ը 27-30, Դուկ. Թ 8-21, Յովհ. 2 67-69)։

Այժմ անդրադառնանք երկրորդ առիթին: Առաջին երեք Աւետարանների համաձայն, երբ Յիսուսին բերեցին քահանայապետի մօտ հարցաքննելու, հարցրեցին նրան. «Դո՞ւ ես Գրիստոսը»: Մարկոսի կարծիքով Յիսուսն առանց որևէ երկմտութեան պատասխանում է. «Ես եմ». բայց Մատթէոսի՝ Յիսուսը պատասխանում է. «Դո՞ւ ասացիր»: Որեւէ ստույգ վկայութիւն չունենք, թէ այս արտայայտութիւնը դրական-հաստատական պատասխան էր: Իսկ Ղուկասի կարծիքով Յիսուսը բոլորովին անպատասխան թողեց վերոյիշեալ հարցը՝ «Եթէ ասեմ էլ ձեզ, պիտի չհաւատաք»: Յովհաննէս Աւետարանիչը թէեւ չունի հարցաքննութեան այս դրուագը, բայց նրա Աւետարանի մէջ կան արձագանքներ նման մի դիմադրութեան, որ Յիսուսի հետեւորդները պահանջում են նրանից. «Եթէ Գրիստոսը դու ես՝ համարձակ յայտնիր մեզ»: Յիսուսը բաւականանում է իր նախկին պատասխանով. «Ասացի ձեզ եւ չհաւատացիք» (Մատթ. ԻԶ 63-64, Մարկ. ԺԴ 61-62, Ղուկ. ԻԲ 67-70, Յովհ. Ժ 24-25):

Այստեղ նոյնպէս հանդիպում ենք միեւնոյն առեղծուածին՝ Յիսուսն ընդունե՞ց «Մեսիա» կոչուել թէ ոչ: Թերեւս կարելի է այս հարցին գոհացուցիչ պատասխան տալ, եթէ հնարաւոր լինի մանրամասնօրէն վերականգնել հարցաքննութեան տեսարանը:

Հրեաների մեղադրանքը Յիսուսի նկատմամբ շատ պարզ էր: «Հրեաների թաղաւոր» մեղադրանքը մտադրուած մի զրպարտութիւն էր Հռոմէացի կառավարիչների ուշադրութիւնը գրաւելու համար: Այս արտայայտութիւնը հրէական շրջանակներում չէր գործածուում: Պիղատոսի «Դո՞ւ ես Հրէից թաղաւորը» հարցին Յիսուսը պատասխանեց վերապահութեամբ՝ «Դու ես ասում» (այդպէս կարծիր եթէ կ'ուզես): Այստեղ եթէ Յիսուսը մերժէր այդ մակդիրը կամ տխրոսը՝ արածը հաւասար պիտի չլինէր խոստմնագոյնութեան: Նա յաճախ թոյլ էր տուել, որ հակառակորդները մահուան դատապարտէին իրեն այս միեւնոյն մեղադրանքը հիմք ունենալով (Մատթ. ԻԷ 11, Մարկ. ԺԵ 2, Ղուկ. ԻԳ 3, Յովհ. ԺԸ 33-37):

Ինչպէս տեսնում ենք, «Մեսիա» պաշտօնը զանազան ձևերով հասկացւում էր թէեւ, բայց միշտ սերտ առնչութիւն ունէր Աստուծոյ ժողովրդի վերջնական նախատաղրի հետ: Աւետարանների մէջ կարդում ենք, թէ Յիսուսը պարտականութիւն ստանձնեց ստեղծելու «Նոր Ուխտ»ի ժողովուրդ, որ նրա առաքելութեան նպատակն էր եւ որի իրագործման համար նրա որդեգրած տեսակէտները միշտ էլ չէին համապատասխանում ժամանակակիցների ակնկալութիւններին «Մեսիա»ի նկատմամբ, որից աւելի յարմար անուանում չկար Յիսուսի պաշտօնը արտայայտելու համար: Նա չէր կարող անտեսել իրեն միտաւորուած առաքելութիւնը եւ ոչ էլ կարող էր արհամարհել իր ունեցած հեղինակութիւնը: Հետեւաբար «Դո՞ւ ես Մեսիան» հարցին չէր կարող ժխտական պատասխան տալ: Բայց Յիսուսը չէր ուզում, որ հառարակ ժողովուրդը իրեն ճանաչէր իրրեւ «Մեսիա» գոնէ մինչեւ նրա առաքելութեան աւարտը: Ժողովրդական շրջանակների մէջ «Մեսիա»-կանութեան գաղափարը կապուած էր քաղաքական ու զինուորական գործօնների հետ՝ «Որդի Դաւթի» անունան համազօր իմաստով: Յիսուսը չէր ցանկանում ստանձնել այս քաղաքական պաշտօնը եւ, ուրեմն, որեւէ արտայայտութիւն, որ կարող էր թողնել այն տպաւորութիւնը ժողովրդի վրայ՝ նա խուսափում էր այն գործածելուց:

Սակայն «Մեսիա» յորջորջումը, որ Յիսուսը չթաւեց քաջայայտօրէն, իր իսկ կեանքը փրկելու միտումով, ունէր շատ յստակ կարեւորութիւն: Նա «Մեսիա»ն էր իր հասկացած րոմանդակութեամբ: Հետեւաբար մեր վերո-

չիշեալ հարցը այլ կեդ պէտք է կանոնցել. «Նա ինչպիսի՞ր Մեսիա կ'ուզէր լինել» :

Անմիջապէս պէտք է ասել, թէ Յիսուսը որեւէ ձեռով չէր ուզում, որ իր առաքելութեանը վերադրեն քաղաքական նպատակներ : Երբ Պետրոսը «մեծարում է» Յիսուսին որպէս «Մեսիա» (անշուշտ քաղաքական իմաստով), Յիսուսը բարկանում է եւ պատուիրում իր հետեւորդներին, որ խուսափեն իրեն վերադրելու այդ մակդիրը եւ անմիջապէս փոխում է խօսակցութեան նիւթը՝ տեղացնելով. «Պէտք է, որ Մարդու Որդին շատ շարժարանքներ քաշի» : Յիսուսի այս տխուր դուշակութիւնը Պետրոսի սրտով չէր եւ վերջինս փորձում է փոխել Տիրոջ դուշակութեան ողբերգական բովանդակութիւնը : Սակայն Յիսուսը չընդունեց Պետրոսի նմանօրինակ սրբազրուամբ եւ յանդիմանեց նրան. «Հեռացիր ինձնից, Սատանայ, որովհետեւ դու Աստծոյ պատուիրանների մասին չ'ես, որ մտածում ես, այլ մարդկային պէտքերի» (Մարկ. Ը 31-33) : Յիսուսի եւ Պետրոսի միջեւ տեղի ունեցած այս վիճարանութեան հիմնական պատճառներից մէկը տեսակէտների խիստ հակադրութիւնն էր : Ըստ Պետրոսի, «Մեսիա»-ն զերծ էր մարդկային ամէն տեսակ թուլութիւններից, տառապանքներից եւ Ժամանակակից Հրեաների մեծ մասը համակարծիք էր նրան : Ըստ ուրիշ բնութագրի «Մեսիա»-ն մարմնացումն էր բւժի, զօրութեան եւ անվերջ յաղթանակների :

Ըստ երեւոյթին Պետրոսը եւ իրեն համակարծիք բազմութիւնը մոռացել էին կամ անտեսում էին Հին Կտակարանի մէջ յիշուած «Մեսիա»-յից ոչ պակաս մի կարեւոր կերպարի գոյութեան մասին, որի առաքելութեան հիմնական նպատակը ուրիշների համար տառապելն էր : Նման կերպարի յաճախ ենք հանդիպում Եսայի Մարգարէի զրբի երկրորդ մասում, ուր «Տիրոջ ծառա»-ն կանչուել եւ ուղարկուել է Աստծոյ կողմից՝ ծառայելու նրան հողով ու մարմնով, վկայելու նրա ճշմարտութիւնները՝ անսահման տառապանքներ կրելով : Երբ առաջին դարերի Եկեղեցին ստանձնեց քարոզելու պարտականութիւնը՝ իր իսկ հիմնադրի գործունէութիւնը եւ «ողբերգական ճակատագիր»-ը ներկայացնելու համար դիմեց Եսայի Մարգարէի «Տիրոջ ծառայ»-ի կեանքը, գործը եւ մահը պատկերող հատուածներին (Ես. ԽԲ 13-53 12, 40-55 գլուխները) :

Իրականում Մատթէոս Աւետարանիչը առանց վարանելու կրկնում է Եսայի Մարգարէի այն հատուածը, որը բնութագրում է «Տիրոջ ծառայ»-ի կերպարը՝ նկարագրելու համար Յիսուսի առաքելութիւնը.

«Ահա իմ ծառան, որին ձեռնառու պիտի լինեմ,
եւ իմ բնորածը, որին իմ սիրտը հաւանեց.
Իմ հոգին առեցի նրան.
Նա պէտք է աղգերին իրաւունքներ սահմանի.
Նա չի գողայ եւ չի աղաղակի.
Եւ իր ձայնը ամէնքին լսելի չի դարձնի»

(Ես. ԽԲ 1-4, Մատթ. ԺԲ 18-20)

«Տիրոջ ծառայ»-ն ունէր յատուկ մի առաքելութիւն՝ «Ու հիմա այսպէս է ասում Տէրը, որ ինձ որովայնից իրեն ծառայ լինելու համար ստեղծեց, որ Յակոբին դարձնեմ դէպի Նա եւ Իսրայէլացիները պէտք է հաւաքուեն դէպի Նա» (Ես. ԽԲ 5) : Այս օրինակին հետեւելով է, որ Յիսուսն իր առաքելութիւնը համարում է «Միայն Իսրայէլի տան կոթած ոչխարները» դռնելու, հաւաքե-

լու մէջ (Մատթ. ԺԵ 24, Ղուկ. ԺԹ 9-10)։ Այս համոզումը Յիսուսի ամբողջ առաքելութեան հիմնաքարն է։

Եթէ ընդունենք այն տեսակէտը թէ «Տիրոջ ծառայ»ի առաքելութիւնը յաւաքէս բնութագրում է նաեւ Յիսուսի առաքելութիւնը, այն ժամանակ «Տիրոջ ծառայ»ի ճակատագիրը, որ «չարերի մեղքը վերացրեց, եւ յանցաւորների համար միջնորդութիւն արեց» (բարեխօսեց — Վ. Ն.), (Ես. ԾԳ 12), մատնանշում է նաեւ Յիսուսին սպասուող ճակատագիրը՝ «Որովհետեւ Մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու եւ իր կեանքը շատերի համար որպէս փրկութիւն նուիրարեցելու (Մարկ. Ժ 45)։ Յիսուսն իրեն հետեւողներին ուղարկութեանն է ներկայացնում «Տիրոջ ծառայ»ի ղէպը՝ «Մեռիւք»-ի կոչումը ճիշդ մեկնելու մտադրութեամբ։ Այս երկու խոհալ կերպարների («Տիրոջ ծառայ»ի եւ «Մեռիւք»-ի) միաձուլումը Յիսուսի անձնաւորութեան մէջ շատ պարզ երեւում է բոլոր Աւետարաններում։

Վերցնենք Մարկոս Աւետարանիչի նկարագրութիւնը։ Նա ցուցադրում է Յիսուսի մկրտութեան տեսարանը, երբ «Ջրից ելնելուն պէս շտապ երկինքը բացուած տեսաւ եւ աղանակերպ հոգին, որ իջնում էր իր վրայ եւ երկնքից մի ձալն յառեց, որը ասում էր. «Դու ես իմ սիրելի որդին, որին հաւանել եմ ես» (Մարկ. Ա 10-11)։ Այս նկարագրութիւնը պարունակում է մի շարք խորհրդանշական տարրեր, որոնք որոշ բացատրութիւն են պահանջում։ «Երկնքից մի ձալն յառեց» արտայայտութիւնը վերցուած է Հին Կտակարանից. «Դու ես իմ որդին» դարձում էր հանդիպում ենք Սաղմոսների մէջ (Բ 7)։ «Միւսի... որին հաւանել եմ»՝ «Տիրոջ ծառայ»ն է եւսայի Մարգարէի դրօշ մէջ (ԽԲ 1)։ Ըստ այս հատուածի Յիսուսը զինուած է Ս. Հոգու շնորհներով իր առաքելութեան յանձնարարութեան համար, նախորդում է «Երկինքը բացուած տեսաւ» եւ «աղանակերպ» պատկերներին։ Այլ խօսքով, Մարկոս Աւետարանիչը այս համառօտ, բայց կուս խորհրդանշանների ընտրութեամբ տաղանդաւոր մի նկարիչի պէս գծում է Յիսուսի կեանքի ու դործունէութեան ընդհանուր ուրուագիծը։ Յիսուսն իր ուսերին է վերցնում հօր առաքելութիւնը իբրեւ «Մեռիւք», «Որդի Աստծոյ», «Տիրոջ ծառայ», որոնց ճշմարտութիւնը, իսկութիւնը վկայում է «Մի ձալն երկնքից»։

Եւ ճիշդ այս ենթահոգի հիման վրայ պէտք է աշխատել հասկանալ այն յայտնի հատուածը, որ նկարագրում է Տիրոջ փորձութիւնը, ուր սատանան աշխատում է դանդաղան գրաւիչ առաջարկներով դաշթակեցնել Յիսուսին, որոնք, անշուշտ, բոլորն էլ մերժւում են Յիսուսի կողմից՝ հաւատարիմ Ս. Գրքի պատուիրաններին, վկայակոչելով հատուածներ Բ Օրինաց գրքից (2 13, 16, Ը 2-3, Մատթ. Դ 2-10, Ղուկ. Դ 2-12)։ Հետաքրքրութեան համար արժէ մէջբերել այն պատգամը, որ Մովսէսը տեսց Խորայէլացիներուն՝ անապատի փորձութեան աւարտին. «Ու յիշիր այն ամբողջ ճանապարհը, որ քո Տէր Աստածը այս քառասուն տարում քեզ անապատի մէջ պտըտեցրեց՝ քեզ խոնարհեցնելու, փորձելու ու սրտիդ միջինը լիցանալու համար, թէ արդեօր դու նրա պատուէրները պիտի պահես», թէ ոչ։ Կամ «Զեր Աստծուն չփորձէք ինչպէս Մատթայի մէջ փորձեցիք» (Բ Օր. 2 16)։ Այս մէջբերումը այժմ համեմատենք Մատթէոս Աւետարանիչի Յիսուսի փորձութեան տեսարանի հետ. «Այն ժամանակ Յիսուսը անապատ տարուեց սուրբ Հոգու կողմից, որ սատանայից փորձուի եւ քառասուն ցերեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելուց յետոյ արթնացաւ։ Եւ փորձողը նրան մօտենալով ասաց, եթէ դու Աստծոյ Որդին ես, ասա, որ այս քարերը հաց դառնան։ Նա պատասխանեց, դրուած է, թէ ոչ

միայն հացով է մարդը ապրում, այլ այն բոլոր խօսքերով, որ Աստծոյ բերնից են դուրս գալիս: Աւետարանիչը երկու փորձութիւններէ մէջ տեսնում է անմիջական նմանութիւն, «Նոր Իսրայէլ»-ի հիմնադիրը ենթադրեալ է իր ժողովրդի կրօն փորձութիւններէն եւ տանում է յիրաւի մեծ յաղթանակ, ոչ միայն իր, այլեւ Աստծոյ ժողովրդի համար, որպէս նրա հաւաքական կերպարը, նրա հոգեւերի, մտահոգութիւնների, ակնկալիքների ներկայացուցիչը: Ինքն իրենցով ժողովրդին ներկայացնելը ոչ թէ երեւակայութեան արդիւնք էր, այլ գիտակցօրէն ինքնանոյնացում, միահիւսում ու միաձուլում ժողովրդին: Սա է ներքին իմաստը հետեւեալ, եւ այլ նման, արտայայտութիւնների. «Քանի որ սա (բարիքը — Վ. Ն.) իմ ամենափոքր եղբայրներից մէկին արեցիք, ուրեմն ինձ եւս արեցիք» (Մատթ. ԻԵ 40), կամ «Ով այսպիսի մի տղայ կ'ընդունի իմ անունով՝ ինձ կ'ընդունի»: Այս եւ նման այլ նախադասութիւնների, մտքերի վերոյիշեալ մեկնութիւնը նկատի առնելով կարելի է աւելի լատ հասկանալ այն երեւոյթը, որին աւետարանիչները շատ կարեւոր տեղ են յատկացնում Աւետարանների մէջ: Դա Յիսուսի փոխարարներութիւնն էր իր ազդից մերժումը ներքէն եւ իր բարեկամութիւնը՝ տառապողների հետ: Այս առնչութեամբ էլ հասկանալի է դառնում այն հանգամանքը, որ երբ Յիսուսը կոչ է անում աշակերտներին հետեւելու իրեն՝ հետապնդում է երկու նպատակ. ա) հետեւողներ (կողմնակիցներ) հաւաքադրել, ք) նոյնանման նպատակներ իրականացնել: Այս կատարեալ վստահութիւնը իր հետեւողների հանդէպ ճաջաբեց իրեն ասելու. «Նա որ ձեզ կ'ընդունի՝ կ'ընդունի ինձ»: Սա իրեն հետեւողներից պաշտօնաբար էր նաեւ անսահման զոհողութիւն, ինքնանուիրում անմնացօրդ. «Կորո՞ղ էք խմել այն գաւաթը, որ ես եմ խմելու, եւ մկրտուել այն մկրտութիւնով, որով ես եմ մկրտուելու» (Մարկ. Ժ 39): Վերջին ընթրիքի ժամանակ նա իր աշակերտներին տուեց մի գաւաթ գինի, ասելով. «Այս գաւաթը իմ արեան Նոր ուխտ է, որ շատերի համար պէտք է թափուի» (Ա. Կորնթ. ԺԱ 25, Մարկ. ԺԴ 24): Այս խօսքերով Յիսուսը ակնարկում էր հին աւանդութեան, որով վեհ դասինք կամ ձեռնարկ էր վաւերացում՝ ողջ մէկին զոհ մատուցելով: Սակայն այս հին սովորութեան հետ կապուած արտայայտութիւնը ստանում է աւելի բարձր հոգեկան իմաստ: Նման արտայայտութիւնների ենք հանդիպում նաեւ մարդարեւութիւններում «Տիրոջ ծառայ»-ի առնչութեամբ, որի ամբողջ կեանքը պիտի լինէր մի զոհողութիւն ուրիշների փրկութեան համար: Իր աշակերտների հետ գաւաթակից լինելը մի տեսակ հրապարակային ապացոյց էր համարաւորութեան՝ աշակերտների եւ Յիսուսի միջեւ:

Այդ նոյն ճակատագրական պահին էր, որ Յիսուսն արտասանեց իր այն խօսքերը, որոնք ժամանակի ընթացքում դարձան քրիստոնէական հաւատի հիմնախարիստներից մէկը. «Եւ քանի որ նրանք ուտում էին, Յիսուսը հացը վերցրեց, օրհնեց ու կտրեց եւ տուեց նրանց ու ասաց. «Վերցրէ՛ք, այս է իմ մարմինը» (Մարկ. ԺԴ 22, Մատթ. ԻԶ 26, Ղուկ. ԻԲ 19, Ա. Կորնթ. ԺԱ 24): Յիսուսի պատուիրաններից ոչ մէկը չունի վերոյիշեալի վաւերականութիւնը: Այդ խօսքերի իմաստը բազմաթիւ ուսումնասիրութիւնների նիւթ է մատակարարել, որոնց ընթացքը անկարելի է այստեղ ցոյց տալ: Միայն թէ արժէ յիշել, որ Ա. դարում իսկ Պողոս Առաքեալը արդէն «Հացի բաշխումը» մեկնաբանում էր իբր «Քրիստոսի մարմնի հաղորդութիւն» (Ա. Կորնթ. Ժ 16, Հուդ. ԺԲ 5, Եփ. Դ 12), որին կապուած է Պողոսի մէկ այլ կարծիքը, թէ եկեղեցին եւս «Քրիստոսի մարմինն է», որի իւրաքանչիւր անդամը «Քրիստոսի մէջ» է, ինչպէս որ Քրիստոս «իր մէջ» է. . .

Նոր Կոստանտնուս կան մի շարք նախադասութիւններ, ուր Յիսուան իրեն կոչում է «Որդի Մարդոյ»: Ինչո՞ւ Յիսուան ընտրեց խօսելու այս անուղղակի ձևը: Պարզապէս, որպէս նշան՝ թէ ինքը ունի մի որոշակի պաշտօն, թէ՛ եւ ուրիշներ պիտի հարցնէին թէ «Ո՞վ է այն Որդին Մարդոյ» (Յովհ. ԺԲ 34): Ի դուր չէ, որ «Որդի Մարդոյ» խօսքերի մեծ մասը կապուած է «Տէրութիւն»-ի ինքնատիպ կերպարի աշխարհայեացքին, յատկապէս, երբ Յիսուսը անարկում է իր տառապանքներն ու մահը, թէ պէտք է «Որդին Մարդոյ» կրի բազմաթիւ շարժարանքներ, կամ «Որդին Մարդոյ» եկաւ տալու իր անձը իրեն «փրկանք շատերի համար»: Այս շարքի մարդարէութիւնները ոչ թէ խոլունի հեռատեսութեան արդիւնք են, այլ թելադրուած են իրեն վստահուած առաքելութեամբ: Նրա մարդարէութիւններից ոմանք լրիւ կատարուեցին: Յիսուսը մի քանի անգամ շատ ուշադրաւ մտքեր արտայայտեց, որով մարդարէացաւ իր «մեռելներից յարութիւն» առնելը. եւ «Մի քիչ ժամանակ անց ինձ պիտի շտեմնէք, եւ դարձեալ մի քիչ ժամանակ անց պիտի տեսնէք» (Յովհ. ԺԶ 16-18):

Անշուշտ շատ դժուար է ասել, թէ այս մտքերից ո՞ր մէկն է անադարտ ներկայացնում Յիսուսի ինքնատիպ հայեացքները, որովհետեւ պէտք է ընդունել, որ Յիսուան իր քարոզների, զրոյցների, խօսքերի մէջ երբեմն պարզ էր ու որոշ, երբեմն էլ՝ խորհրդաւոր եւ դժուարամատչելի: Սակայն անխիճելի է այն իրողութիւնը, որ Յիսուսի համոզմունքն էր, թէ մահից է որ կը ծնուի նոր կեանք, որը քրիստոնէական վարդապետութեան գրաւականներից մէկն է: «Մեռելներից յարութիւն առնել»ը հաստատում է հանդերձեալ կեանքի գոյութեան հաւատը, իսկ «Եւ դարձեալ մի քիչ ժամանակ անց ինձ պիտի տեսնէք»-ը հաստատում է նրա անձնական յարաբերութեան վերանորոգման իրողութիւնը, որ ժամանակաւոր կերպով ընդհատուէր մահուան հետեւանքով:

Համեմատաբար աւելի բարձր է «Որդի Մարդոյ» արտայայտութիւնների երկրորդ խմբի կամ շարքի ընդթիւր, որը վերաբերում է Յիսուսի երկրորդ զալտեան՝ «Որովհետեւ Մարդոյ Որդին իր Հօր փառքով պիտի գայ» (Մատթ. ԺԶ 27), «Եւ այն ժամանակ պիտի տեսնեն Մարդու Որդու դարձաւորութեամբ պարուրուած եւ մեծ գօրութիւնով» (Մարկ. ԺԳ 26), «Քանի որ ինչպէս փայլակը երկնքի տակ՝ մէկ կողմից փայլատակելով... նոյնպէս պիտի լինի Մարդու Որդու զալտեան օրը» (Ղուկ. ԺԷ 24): Անշուշտ, այս արտայայտութիւնների լեզուն շատ պատկերաւոր է, որոնց իմաստը կապուած է Վերջին Դատաստանի տեսարանի հետ, որը իր հերթին զուգադիպում է Որդու երկրորդ զալտեանը: Այս հարցի վրայ լոյս սփռող օժանդակ նիւթը վերաբերում է Աստծոյ Արքայութեան դադափարին, որը եւ իրականութիւն է եւ յոյս: Ուրեմն Արքայութեան վերաբերեալ նման հայեացքներ պաշտպանելու համար Յիսուսը օգտագործում է աննշանական խորհրդանշներ, ինչպէս օրինակ, մեռելների կապալիցութեամբ, որոնք «Բոլորը նրանով կենդանի են» (Ղուկ. Ի 38) եւ «Նրա առջեւ պիտի հաւաքուեն բոլոր ազգերը» (Մատթ. ԻԻ 32): Սրանք ղէպերի ժամանակագրական չփոթութիւն չեն, որոնք պատահելու են մօտ ապագայում եւ որոնց համար հնարաւոր է տարեթուեր նշանակել, այլ խորհրդանշներ են, որոնք խորհրդանշում են մի իրականութիւն, որին մարդ տեսնում է հասնել, երբ նրա հոգին մոռացութեան է մատնում անցեալը, ներկան եւ ապրանքան: «Երկնքի թաղաւորութեան» խորհրդի ամբողջական իմաստը սա է: Այս նոյն խորհուրդը դարձաւ պատմական փաստ՝ շնորհիւ այն աննախընթաց միջադէպի, որի կենտրոնական դէմքը Յիսուան էր: «Աղքատներ, երանի ձեզ,

որովհետեւ ձերն է Աստծոյ Թագաւորութիւնը» (Ղուկ. 2 20) : Մի անգամ իր աշակերտներէ ծոմ չպահելու կապակցութեամբ դանդաւորութիւններն Յիսուսը պատասխանեց . «Միթէ կարելի՞ է, որ Հարսանքաւոր տղաները, քանի որ փեսան իրենց հետ է, ծոմ պահեն» (Մարկ. Բ 20) : Ամէն դէպքում, այն ընթերցող որին պիտի քննարկ մասնակցէին, բոլորովին տարբեր էր լինելու «...Որպէսզի դուք իմ սեղանից ուտէք ու խմէք իմ Թագաւորութեան մէջ» (Ղուկ. ԻԲ 30) : Մակայն դրան մասնակցելու պատրաստակամութեան որոշումը Յիսուսը պահանջում է անմիջապէս, որովհետեւ այն զուգարդիպելու է Դատաստանի օրուն : «Հիմա է այս աշխարհի դատաստանը» դրում է Յովհաննէս Աւետարանիչը... որից պէտք է ոմանք անապատը արձակուեն («Քո հաւատը քեզ փրկեց, դեռ խաղաղութեամբ», Ղուկ. Է 50), իսկ ոմանք պէտք է դատապարտուեն («Բայց ձեզ զուշացնում եմ, որ Սոդոմացիներէ երկրի համար աւելի հեշտ է լինելու դատաստանի օրը, քան թէ՝ ձեզ համար», Մատթ. ԺԱ 24) : Դատաստանը թէ՛ ւտելի է ունենալու պատմութեան մէջ, բայց ունի մի այնպիսի նշանակութիւն, որ դուրս է պատմութեան սահմաններից եւ հենց այս արտապատմական նշանակութիւնն է, որ ի յայտ է դալիս Յիսուսի ընտրած դատաւարութեան դրամատիկ պատկերներով : Այլ խօսքով, Յիսուսի առաքելութիւնը եւ նրա գործերի ընդհանուր գումարը ունեցան երկու բացարձակ անմիջական ազդեցութիւն՝ նախ փոխեց իր ժամանակակիցների մարդկային յարաբերութիւններն ու կենցաղին վերաբերուող սկզբունքները, եւ երկրորդ ընթացքը՝ տուեց նրան ինքնուրոյն, յաւիտենական իմաստ :

Այս տեսանկիւնից միայն կարելի է լաւագոյնս հասկանալ նրանց այն արտայայտութիւնները, որոնք մարդարէանում են «Որդի Մարդոյ»-ի երկրորդ զալուստը, որոնց ամենահիմնական յատկանիշը տրուած է Յիսուսի այն պատասխանի մէջ, որ նրա հարցաքննութեան ժամանակ պատասխանեց քահանայապետին . «Ես եմ Մարդու Որդին, որին պիտի տեսնէք Զօրութեան աջ կողքին նստած, եւ երկնքի ամպերով եկած» (Մարկ. ԺԴ 62) : Այս համարի լեզուն էլ շատ վերացական է եւ պատկերները շատ կտրուկ : Բայց նմանօրինակ երկու այլ պատկերներ էլ կան Հին Կտակարանի մէջ, որոնցից առաջինը ցոյց է տալիս թէ Ամենակալ Աստուածը Թագադրում է իր ընտրեալին (Մեսիայի նախատիպարին) հետեւեալ բառերով . «Տէրը իմ Տիրոջ ասաց՝ նստիր իմ աջ կողմս մինչեւ որ քո թշնամիներդ ոտքերիդ պատուանդան դարձնեմ» (Սաղմ. ԺԺ 1) : Այս մէջբերումը սերտօրէն կապուած է Դանիէլի զբքի հատուածներից մէկի հետ . «Դիշերային տեսիլքների մէջ տեսնում էի, որ երկնքի ամպերով պարուրուած Մարդու Որդու նման մէկը դալիս է ու մինչեւ հիշաւուրցը եկաւ, այն նրա աջիւ մօտեցրին» (Դան. Է 13) : Այս համարները ներկայացնում են Աստծոյ վերջին յաղթանակը Իսրայէլի համար : Իսկ Յիսուսի առնչութեամբ, այս մարդարէութիւնը նշանակէ ընդորոշում է նրա յաղթանակը, որ տանելու է իր իսկ կեանքի գնով : Դանիէլ Մարդարէի տեսիլքը դարձաւ պատմական իրականութիւն Յիսուսի կեանքով ու մահով : Յիսուսը այն պատմական Անձն էր, որ ներկայացնում էր Աստծոյ Ժողովրդին եւ յաղթեց կեանքի ամէնից անյաղթահարելի զօտարութիւնները, ինչպէս դրում է Պօղոս Առաքալը . «Արդ... Քրիստոսի հետ յարութիւն առանք» (Կող. Գ 19) : Սա էր զալուստը «Մարդու Որդու»՝ պատմական առումով : Իսկ իր վերջին, երկրորդ զալուստը, թէ՛ եւ «դուրս» է պատմութիւնից, սակայն նրա հիմնական բնոյթը Յիսուսը արդէն հաստատեց իր Անձով ու Առաքելութեամբ :

ՎԻԷԺ ՍՐԿ. ՆԵՐՍԷՍԵԱՆ



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



Ս. Էջմիածին, Ս. Զատիկ, 1978

Ներքին Ամենապատուութիւն
Տ. եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան
Պատրիարք Երուսաղէմի Հայոց
Եր ու ս ա դ է մ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ»

Սիրելի Սրբազան եղբայր Մեր,

Յարուցեալ Փրկչի իջման Սուրբ Սեղանէն այսօր երջանիկ ենք Ձերդ Ամենապատուութեան բերելու նուիրական աւետիսը Սուրբ Յարութեան հրաշքին, որ աշխարհն ու պատմութիւնը յեցուց կենարար ու ստեղծարար շնորհներով եւ մանաւանդ սիրոյ եւ խաղաղութեան շունչով:

Մեր օրերուն առաւել քան անցեալի մէջ, տագնապներով լի մարդկութիւնը ծարան ունի Քրիստոսի փրկարար սիրոյն եւ շրեորհներուն, հասնելու համար ազգութիւններու միջեւ համերաշխ գործակցութեան եւ իրաւ խաղաղութեան նաւահանգիստը:

Այսօր, Սուրբ Զատիկի լուսաբացին, քող համայն աշխարհին ու նաեւ մեր Մայր եկեղեցիին եւ մեր հարազատ ժողովուրդին առատապէս բաշխուին ամենայազօր շնորհները Սուրբ Յարութեան Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի:

Սուրբ Յարութեան շնորհներով, նաեւ առաւել լոյս եւ առաւել հոգեշէն եղանդ Ձերդ Ամենապատուութեան, Սուրբ Աթոռիք զինուորեալ միաբանութեան ուխտապահ անդամներուն եւ համայն մեր հաւատացեալ զաւակներուն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Զ Գ Ի Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս, 20 Մարտ 1978

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արք. Տէրսէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Սիրելի եղբայր ի Քրիստոս,

Մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուս Քրիստոսի հրաշափառ Տօնի առիթով ուրախութիւն է Մեզ համար ողջունել Ձեր սիրելի եղբայրութիւնը եւ ի խորոց սրտի մաղթել Ձեզի քաջառողջ կեանքի եւ բեղուն գործունէութիւն:

Կ'աղօթենք առ Յարուցեալն Փրկիչ որ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան պարգեւէ նորանոր իրագործումներու շրջան մը՝ յարութեան շունչով եւ պատգամով կենսաւորեալ:

Մնամք եղբայրական սիրոյ ողջունելու

Աղօթակից

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ

ԵԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍ

Խ Ո Ր Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

His Holiness YEGHISHÉ
the Armenian Patriarch of Jerusalem

Your Holiness,

Dear brother and fellow-servant, beloved in the Lord!

On the great day of saving grace for the world — the Day of Glorious Resurrection of Christ that has brought to people the spiritual renewal and revival and opened for them the way to the eternal life full of felicity, may We extend Our brotherly Easter greeting of general happiness:

CHRIST IS RISEN !

This chosen and holy day — the Easter — is a sign of saving hope and an infinite source of the incessant joy and strength for all the children of the Church of God.

May the Resurrected and Life-Giving Lord Who has illuminated human hearts with the abiding light of His saving Resurrection and Who has granted us the joy of hope for the triumph of love, justice and lasting peace all over the world bestow His rich and unabated mercies and the gift of His grace upon Your Holiness in your blessed service for the good of the Holy Church and your flock looked-for by God.

CHRIST IS TRULY RISEN !

With abiding love in Christ Resurrected and heartfelt greetings embracing Your Holiness,

PIMEN, Patriarch of Moscow and all Russia

Easter 1978

(Translated from Russian)

Lambeth Palace, SE1 7JU

EASTER 1978

Your Holiness,

"He was known to them in the Breaking of the Bread"

On the road to Emmaus the two Apostles walked with their Risen Lord but did not yet know him. Even so their hearts burned within them as he talked on the road opening the Scriptures and showing how the Christ should suffer. This living interpretation of the past was authenticated in their recognition of Jesus in the Eucharistic meal which followed when they reached the village that first Easter Sunday evening.

Reflecting on the truth here given us in the Easter Gospel, can we not discern the Church of the present day on its pilgrim way in the company of the Holy Spirit? On this journey is not the Church, taught by the Spirit, in continuous dialogue with its past as it seeks to make effective the claims of the Gospel of Christ on contemporary society? Nevertheless, as at Emmaus, Christian truth is fully disclosed only within the worshipping community; it is in the Easter Eucharist that the Holy Spirit appropriates Word and Sign to be the means of the transformation of a fearful people into the Body of the Risen Lord.

At this Eastertide we therefore send Your Holiness our affectionate greetings in the name of our Risen Lord, who is indeed known to us in the Breaking of the Bread.

Your affectionate Brother in Christ,

DONALD CANTUAR

Archbishop of Canterbury

Primate of All England and Metropolitan

His Holiness Yeghishe Derderian,
Armenian Patriarch of Jerusalem

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Կեդրոնական վարչական ժողով

Մարտ 20, 1978

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ Տէր,

Քրիստոսի Հրաշափառ Տօնին առիթով մեր մտածումները կ'ուղղուին դէպի աստուածակոխ Սուրբ Վայրերը, ուր դարերէ ի վեր Սուրբ Յակոբեանց Միաբանութիւնը կառչած կը մնայ Հայոց Միջազգային իրաւունքներուն ու վարկին:

Այսօր, Նորին Ամենապատուութիւնդ, մեր նախահայրերուն յատուկ հաւատով ու նուիրումով կը շարունակէ այդ նախանձախնդիր առաքելութիւնը, ամէնէն դժուարին ժամանակներու մէջ:

Խաղաղութեան իշխանին ծննդեան ու բնակութեան վայրը այսօր ամէնէն աւելի ենթարկուած է վախի եւ աւերածութեան վրտանգին եւ մեր սրտագին մաղթանքն է որ Սուրբ Յարութեան Տօնը առաջին հերթին ամբողջական ու վերջնական խաղաղութիւն պարգեւէ աշխարհի այդ մասին, ուր Պատրիարքական Սուրբ Աթոռդ պատմական դեր մը ունի կատարելիք մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Սուրբ Զատկուան Տօնին առիթով ջերմօրէն կը շնորհաւորենք Ձեզ եւ Ձեր նուիրեալ Միաբանութիւնը, Ձեր Աստուածահաճոյ առաքելութեան մաղթելով ամբողջական յաջողութիւն:

Խորին յարգանքով՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Դուն եկեր ես նորէն մանկութեանս օրօրան,
 Իմ տանջող ֆաղցրութիւն, հոգիիս միակ լոյս,
 Իմ մաքուր—մաքուր ծոց, սրբութեան իմ խորան...
 Դուրսը մութ է հիմա, անձրեւ է ու մըշուշ:

Մեղմ կըրակի պէս այրիւր դուն անշէջ,
 Քովէդ անցնողներն որ փչէ մը տաքնան,
 Վայրկեան մը հանգչին ջերմիկ լոյսիդ մէջ,
 Օրինանքի խօսքով քեզմէ հեռանան:

Տէր, կը բաւէ ա՛լ մահուան ահն ու դող,
 Հող էինք՝ նորէն քող դառնանք մենք հող.
 Կուգեմ շեշտ մահուան դէմքին ա՛լ նայիլ,
 Կուգեմ ա՛լ իրմով իր դէմ պաշտպանուիլ:

Մըտիկ ըրէ, Տէր, քու արքայութիւնը չեմ ուզեր ես,
 Թող որ իմ հոգին նախքէ երկրի վրայ քոչունի մը պէս,
 Ու նորեկներու խիւղ ու երագին մասնակցի սիրով,
 Բաժնեկից ըլլայ անոնց վըշտերուն, ցաւին սըրտակէզ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁ ՄԱՏԵԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

(Սկիզբը տեսնել «ՍԻՈՆ», Յուն.-Մարտ 1978)

Դ. ՎՈՒԼԳԱՏԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԵԹՈՒՄ Բ-Ի

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԸ

Առհասարակ տարածուած կարծիք է, որ ԺԳ դարն այն շրջանն է, երբ Հայկական թարգմանութեան բնագիրն սկսել է խաթարուել լատինական Վուլգատայի ազդեցութեան տակ, եւ այդ իրողութիւնը, եթէ զա ճիշդ է, կապուած է Հայկալիլիեան Հեթում Բ թագաւորի անուան հետ:

Նախ ասենք, որ զրականութեան մէջ հին Վուլգատա եւ նոր Վուլգատա անուններով յայտնի են երկու բնագրեր. հինը, որ կոչուած էր նաեւ Խաւալա (խաւական), յունարէն եօթնամենեց բնագրից էր թարգմանուել, բայց Դ դարում այդ թարգմանութիւնը հիմնովին սրբազրուել էր Հերոնիմոս Սարիդոնացու կողմից, Հին Կապադոքիանի մասին հիմք ընդունելով երբայական սկզբնագիրը: Այստեղ մեր խօսքը վերաբերում է նոր կամ Հերոնիմեան Վուլգատային, որը պաշտօնապէս ընդունուած բնագիրն է Հռոմէական Եկեղեցու կողմից:

Վուլգատայի ազդեցութեան առաջին նշանները Կիլիկիան Հայկատանում են երևան եկել ԺԳ դարում ընդօրինակուած Աստուածաշնչերում՝ «Փրօտանկաց» (լատինական) դիտարաժանութիւնների մուծմամբ: Վուլգատայի դիտարաժանութիւնները համատեղում էին Հայկական բնագրի նախկին դիտարաժանութիւնների հետ: Այդ նորութիւնը, որ հետզհետէ տարածուեց եւ, գիտական առումով որպէս զրական երեւոյթ, վերջնականապէս ընդունուեց մեղ մօտ, հանդէս էր եկել 1295 թ. Հեթում Բ թագաւորի համար գրուած յայտնի Աստուածաշնչով, որն այժմ գտնուում է Երեւանի Պետ. Մատենադարանում 180 համարի տակ եւ որ յիշատակեցինք վերելում: Այդ նորութեան զրական կողմն այն էր, որ զրանով անսահման հնարաւորութիւն ստեղծուեց Աստուածաշնչի Հայկական եւ օտար բնագրերի համեմատական ուսումնասիրութեան համար:

Սակայն մեր օրերում Հեթում Բ-ի կատարած զործի մասին բանասիրութեան մէջ տիրում է այն թիրիմացութիւնը, թէ նա, լատինական դիտարաժանութիւններից բացի, Հայկական թարգմանութեան բնագիրը սրբազրութիւնների ու խմբագրման է ենթարկել լատինական Վուլգատայի հիման վրայ: Այսպիսի կարծիք են ունեցել անցեալում Լակրոզը, Վիտտն Լոբայնները, Բրենդենկամպը եւ Էյխորնը, որոնց միացել է Մենարոյ Վրդ. Տէր Մովսիսեանը⁶⁵, եւ մեր ժամանակներում՝ Մակլերը⁶⁶: Այս հարցը հետաքրքրում էր նաեւ մեզ՝ մեր հետազօտութիւնների ընթացքում:

Նախորդ տողերում Սիմաքոսի խնդրոյ առարկայ եղած յուսանցային ընթերցումի տեղափոխումը բնագրի մէջ՝ մեզ մտածել էր տալիս, թէ զա Հատնարար պատահական երեւոյթ էր եւ թէ այսպէս կամ այնպէս կարող էր

⁶⁵ Տե՛ս՝ М. Тер-Мовсесян, "Ист. пер. Библии на арм. яз.", стр. 59-60. Վկայակոչում է նախորդ գիտնականներին:

⁶⁶ F. Macler, "Le texte arménien de l'Evangile d'après Matthieu et Marc", p. 24-25.

կապ ունենալ Վուլգատայի ընթերցման հետ, որովհետև Սիմաքոսի երբայա-
կան ընթերցումը համապատասխանում է Վուլգատային, քանի որ վերջինս
էր երբայական բնույթից է թարգմանուել: Իսկ այն հանդամանքը, թէ այդ ներ-
մուծումը հայկական բնույթի մէջ՝ առաջին անգամ մեզ յայտնի է Երեւանի №
180 ձեռագրով, որը, ինչպէս նշեցինք, Հեթում Բ-ի Աստուածաշունչն է, գրե-
ւած 1295 թ., կարող էր մասնակ տալ, թէ այս ներմուծումը Հեթում Բ-ին վե-
րադրուած փոփոխութիւններից մէկն է: Բայց այստեղ տակաւին հարց է առա-
ջանում, թէ արդեօք չկան եւ մի օր չեն յայտնուի նոյն ներմուծումն ունեցող
ուրիշ ձեռագրեր, որոնք 1295 թուականից առաջ գրուած լինեն: Միւս կողմից՝
Հեթում Բ-ի բնագրի մէջ նկատուող այդ փաստը դեռ բնագրական իրական փո-
փոխութիւն չէ, որովհետև, ինչպէս տեսանք, Սիմաքոսի ընթերցումն այն-
տեղ ներմուծուած է հին ընթերցումի հետ համատեղման կարգով եւ ոչ փո-
խարինման: Այսպէս որ՝ մեր կարծիքով դժուար է այս միակ եւ այն էլ որբա-
դրական հանգամանք չկրող օրինակի վրայ հիմնուելով տուրք տալ այն մեղա-
դրական կարծիքին, թէ Հեթում Բ-ը խաթարել է հայկական բնույթը: Բայց
մեզ համար հարցը սրանով չի փակուում, որովհետև Հեթում Բ-ի հասցէին եւ
դա՛ւ ժեղագրանքները լուրջ երեւոյթ են կրում եւ պէտք է հանդամանօքէն
տարզուեն:

Ի՞նչ է ասուում:

Մենք ձեռքի տակ չունենք ոչ Բրենդենկամպի եւ ոչ էլ Էյխորնի որ-
շածները, որոնք Մեսրոպ Վրդ. Տէր Մովսիսեանի կողմից են յիշատակուում,
բայց չենք կասկածում, որ նրանց աղբիւրները կը լինեն Լակրոզն ու Վիստոն
եղբայրները, քանի որ իրենք հայադէտներ չեն: Իսկ Վիստոն եղբայրների կար-
ծիքն այս հարցում բաւականին զուսպ է եւ հաղիւ թէ կարելի լինի նրանց պատ-
կերացնել մեղադրողի դերում⁶⁷: Իսկական մեղադրողը Լակրոզն էր:

Լակրոզը թիւրիմացութիւնների մէջ է եղել այս հարցում: Նա է, որ
հրապարակ է հանել այն կարծիքը, թէ 1666-68 թթ. Ամստերդամում Ոսկան Ե-
րեւանցու հրատարակած Աստուածաշնչի նախադադափար օրինակը Հեթում Բ-ի
ձեռագիր Աստուածաշունչն է եղել եւ այդ կարծիքը մինչեւ այսօր յարատեւել
է բանասիրական գրականութեան մէջ: Իսկ ի՞նչ հիման վրայ էր Լակրոզը կապ-
մել այդ կարծիքը:

Դա երևում է նրա երկու նամակներից, որոնցից առաջինը 1733 թ.
ուղղուած է Անտոնիոս Աբարդոսին⁶⁸, իսկ երկրորդը՝ Ալբերտոս Բենդեկիոսին,
գրուած մօտաւորապէս 1734 թ.⁶⁹: Նա ասում էր, որ Փարիզի Արքայական Մա-
տենադարանում Հեթում Թաղաւորի ձեռագիր Աստուածաշնչից գտնուում են
«փակերական հատուածներ» (fragmenta authentica), որոնց մասին նա տեղե-
կութիւն էր ստացել Զ. Զ. Սքրոդերից: Թէ ի՞նչ էին ներկայացնում այդ հատ-
ւածները՝ երևում է Լակրոզի հաղորդած հետեւեալ տեղեկութիւններից.

1. Հեթում Թաղաւորի Աստուածաշունչը գրուած է Քրիստոսի 1295
թուականին եւ Հայոց 744 թուականին: Թուականը նշուած է Հեթումի «նախա-
բան»ում (praefatio):

2. Պարունակում է Հեթումի «ոտանաւոր նախաբանը» (praefatio
metrica, իմա՝ «Ոտանաւոր բարեպաշտի թաղուորին Հայոց Հեթմոյ»):

3. Պարունակում է Հերոնիմոսի բոլոր նախադրութիւններն ու առա-

⁶⁷ Տե՛ս՝ "Mosis Chorenensis Historiae Armeniacae, libri III", Londoni 1736, p. XI.

⁶⁸ "Thesauri epistolici Lacroziani tomus III", p. 4.

⁶⁹ Ibidem, p. 69.

Ջարանը (Praefationes et Prologus galectus), որ լատիներէնից հայերէնի է թարգմանել Հեթումը, անշուշտ Լաւրոզի կարծիքով:

Յայտնի չէ, թէ Լաւրոզն ի՞նչ էր հասկանում վաւերական հատուածներ ասելով. Հեթում Բ-ի Աստուածաշնչից (բնագրից) իսկական մասեր, որոնք բնկել էին Փարիզ, թէ նրանից հաւատարմօրէն արտադրուած մասեր⁷⁰: Բնութիւնը դէպքերում՝ նա հաւատացած էր, որ դրանք Հեթում թագաւորի Աստուածաշնչի մասերն են:

Լաւրոզն հետաքրքրողը հայկական բնագրի հարգատուութեան հարցն էր:

Փարիզեան «վաւերական հատուածներ»-ի հետ համեմատութեան դրանելով Ոսկանեան Աստուածաշնչի բնագիրը, որի մէջ խիստ զգալի են Վուլգատայի հիման վրայ կատարուած բնագրական խախտումները, նա գտնում էր, որ այդ եղծումների հեղինակը ոչ թէ Ոսկան Երեւանցին է, այլ Հեթում թագաւորը: Նրա կարծիքով՝ Հեթումը հայկական բնագիրը Վուլգատային յարմարցնելու համար այնքան ջանասէր ու մանրակրկիտ աշխատանք էր կատարել, որ նոյնիսկ Հերոնիմոսի յարակից գործերն էլ էր Վուլգատայից թարգմանել. Հեթումեան այս բնագիրն, ըստ Լաւրոզի, այնուհետեւ տիպական էր դարձել: Աստուածաշնչի ընդօրինակութիւնների համար եւ Ոսկանի հրատարակութիւնն էլ ուրիշ բան չէր, եթէ ոչ լոկ նրա վերարտադրութիւնը: Այստեղից էլ այն եզրակացութիւնը, թէ հայկական անեղծ բնագիրը գտնելու համար հարկ է հայտատանում որոնել այնպիսի ձեռագրեր, որոնք ընդօրինակուած լինեն նախահեթումեան շրջանում:

Այս եզրակացութիւնը, դիտնականների համար այնքան ուշադրաւ, բնականաւար իր ուժը պիտի պահէր մինչեւ մեր օրերը, այնպէս որ Ֆ. Մակլերը եւս, 1919 թ., հաշուի նստելով դրա հետ, գտնում էր, որ «Հայկական Աւետարանի բնագրի վերաբերեալ հետազոտութիւնների համար պէտք է ամէն դէպքում ընտրել նախակիւիկեան շրջանի ձեռագրեր»⁷¹:

Բայց այս եզրակացութիւնը հիմնուած էր աւաղի վրայ: Թիւրիմացութիւնն այնպէս էր, որ «վաւերական հատուածներ»ը Հեթում թագաւորի աշխատանքն էին համարուում: Մենք, որ այսօր ձեռքի տակ ունենք Հեթում Բ-ի ձեռագիրը Աստուածաշնչը, ի վիճակի ենք ստույգ խօսք ասելու այդ մասին:

Հեթումեան ձեռագիրն իրօք գրուած է Քրիստոսի 1295 եւ Հայոց 744 թուականին, բայց այդ թուականը նշուած է ձեռագրի ոչ թէ նախաբանում, որպիսին գոյութիւն չունի, այլ վերջում գտնուող նրա յիշատակարանում. ձեռագիրն իրօք պարունակում է Հեթում թագաւորի ոտանաւորը, բայց այդ ոտանաւորը գտնուում է ոչ թէ նրա նախաբանում կամ նախաբանից յետոյ, այլ՝ վերջում գտնուող յիշատակարանից յետոյ. եւ վերջապէս ձեռագրում ոչ մի հետք չկայ Հերոնիմոսի նախագրութիւններից ու առաջաբանից, որոնք, Լաւրոզի կարծիքով, պիտի թարգմանուած լինէին Հեթում թագաւորի կողմից:

Հաշուի առնելով այս հիմնական տարբերութիւնները եւ Լաւրոզի այն հաւատարմութիւնը, թէ Ոսկան Երեւանցու օգտագործածը փարիզեան «վաւերական հատուածներ»ն են, մենք գալիս ենք այն համոզման, որ այդ հատուածներն ուրիշ բան չէին, եթէ ոչ Ոսկանի կողմից պատրաստուած նիւթեր, ի մի բերուած գանազան աղբիւրներից եւ ամփոփուած երեք տետրակների մէջ. այսպէս՝

1. Հեթում Բ-ի Աստուածաշնչի յիշատակարանը (հանուած Երեւանի

⁷⁰ Զարմանալի է, որ այս ձեռագրի հետքերը չեն երևում Փարիզի հայերէն ձեռագրերի ցուցակում, որ հրատարակել է Ֆ. Մակլերը:

⁷¹ F. Macler, "Le texte arménien de l'Evangile d'après Matthieu et Marc", p. 24-25.

№ 180 ձեռագրից) : Լակրոզը կարծում էր, թէ սա Հեթումի նախարանն է, որովհետեւ այս տետրակը ամէնից առաջ էր գետեղուած :

2. Հեթում Բ-ի ոտանաւորը (հանուած նոյն № 180 ձեռագրից) : Լակրոզը կարծում էր, որ սա Հեթումի ոտանաւոր նախարանն է, որովհետեւ այս տետրակը նախորդից յետոյ էր գետեղուած :

3. Հերոնիմոսի նախադրութիւններն ու առաջաբանը՝ թարգմանուած նոյնինքն Ոսկանի կողմից (հանուած լատիներէն Վուլգատայից) : Լակրոզը կարծում էր, որ այս թարգմանութիւնը եւս Հեթումից էր, որովհետեւ այս տետրակը Հեթումի նախորդ երկու հատուածներից յետոյ էր գետեղուած :

Յայտնի է, որ Ոսկանն իր հրատարակութեան մէջ մուծել է միայն վերջին երկու հատուածները (տետրակները) :

Կարելի է հաստատօրէն ասել, որ Լակրոզը ձեռքի տակ չի ունեցել Հեթումի Աստուածաշնչի որեւէ ընդօրինակութիւն, որպէսզի նրա վրայ հիմնէր իր կարծիքը : Նա կաթողիկեայ թղթերից մէկի հետ կապուած բնագրական մի հատուած քննելու համար զիջելով Ոսկանի հրատարակութեանը եւ նրա բնագիրը նոյն համարելով Հեթումի բնագրի հետ, անսոսանք է յայտնում, որ Հեթումի ժամանակաշրջանից աւելի հին ձեռագրեր յայտնի չեն՝ խնդիրը պարզելու համար. ուրեմն՝ եթէ նա Հեթումի բնագիրը ձեռքի տակ ունեցած լինէր, նրանով էլ տեղեւորեալը պարզած կը լինէր իրեն յուզող հարցը, տեսնելով, որ Ոսկանինը եւ Հեթումինը տարբեր բնագրեր են եւ թէ Հեթումինը հայկական էնոց այն հին ու անեղծ բնագիրն է, որ իր՝ Լակրոզի կարծիքով պէտք էր որունել նախահեթումի ժամանակաշրջանի ձեռագրերում : Պարզենք մեր առածը :

Առ Անտոնիոս Աբարդոս ուղղած նամակում Լակրոզը գրաւում էր Յովհաննու Ա. թղթի մի հատուածով, որը բանասիրութեան մէջ յայտնի է «Comma Johannaicum» անունով⁷² : Այդ հատուածը, որ, ըստ լատինական բրնձարի, թղթի Ե. գլխի 7 տունն է (6 եւ 8 տների յարակից մասերով), Վուլգատայից է առաջացել⁷³ եւ է հետեւեալը՝ ըստ Ոսկանեան լատինացած բնագրի.

6. ... երէ Գրիստոս է ճշմարտութիւն.

7. Զի երեք եմ, որք վկայեմ յերկինս՝ հայր, բանն եւ հոգին սուրբ. եւ երեքինս մի եմ.

8. Եւ երեք եմ, որք վկայեմ յերկրի՝ հոգի, քուր, եւ արիւն. եւ երեքինս մի եմ⁷⁴ :

Այս բնագիրն էր յայտնի՝ Ոսկանի օրերից : Հետագայում Աստուածաշնչի Զօհրապեան քննական հրատարակութեամբ յայտնի դարձաւ, որ հայկական ընթերցումը տարբեր էր, այսինքն՝

6. ... զի հոգին իսկ է ճշմարտութիւն.

7. Սոքա երեքինս եմ որ վկայեմ.

⁷² S. Aug. Bludau, "Das Comma Johannaicum in den orientalischen Übersetzungen und Bibeldrucken", Oriens Christianus, III, Roma, 1903. Հայերէն ամփոփումը՝ Հանգէս Ամսորեայ, 1904, էջ 62 : Է. Գ. Գալէմբարեան, «Թուղթ Յովհ. Ա. կաթողիկեայց, գլուխ Ե., համար 7-8՝ առ հայոս», անդ, 1906, էջ 225-234 : Է. Պ. Ֆերմարեան, «Թուղթ Յովհաննու Ա. գլ. Ե, § 6-8», անդ, 1908, էջ 63-64 : Այս հարցով դրադուել են նաեւ Լակրոզին ժամանակակից վիստոն եզրայրները, տե՛ս՝ "Mosis Chorenensis Historiae Armeniacae, libri III", p. XVIII-XIX.

⁷³ "Biblia Sacra Vulgatae editionis juxta exemplaria ex Typographia Apostolica Vaticana Romae 1592 et 1593", t. IV, Ratisbonae, 1862, p. 425. Աստուհետեւ այս հրատարակութիւնը կը նշենք "Vulg" ձեռով :

⁷⁴ Տե՛ս՝ Վաստուածաշնչի Հնոց և Նորոց Կտակարանաց ներ պարունակող (հրատ. Ոսկան Երևանցու), Ամստերդամ, 1666, մասն Բ, էջ 663 :

Աստուհետեւ այս հրատարակութիւնը կը նշենք «Ոսկ.» ձեռով :

8. Հոգին, եւ ջուրն, եւ արիւնն. եւ երեքին մի են (Ձօհր. 761)⁷⁵ :

Այսպէս է նաեւ յունարէն բնագրում⁷⁶, որի հարազատ արտայայտիչն է հայկականը: Ի դէպ՝ այսպէս ունեն նաեւ Երեւանի Պետ. Մատենադարանի հետեւեալ ձեռագիր Աստուածաշնչերը, որոնք 1262-1292 թթ. չրջանից են. No 4243 (էջ 58բ), No 345 (էջ 745բ) եւ No 179 (էջ 477ա) :

Լակրոզը ճիշդ էր կռահում, որ հայկական Սահակ-Մեսրոպեան բրնազիրը պիտի չունենար Վուլգատային յատուկ առանձնայատկութիւնը. եւ որովհետեւ համոզուած էր, որ այդ յաւելումն առաջին անգամ Հեթումի օրինակում էր կատարուել, ապա նրա համար մեծ անակնկալ կը լինէր, եթէ յանկարծ պարզուէր, որ Հեթումի Աստուածաշնչը, տարբերուելով Ոսկանեանից, տալիս էր հայկական հին ընթերցումը: Եւ ահա՝ այդպէս էլ մենք Երեւանի No 180 ձեռագրում դտնում ենք այն. «Զի հոգին իսկ է ճշմարտութիւն. ոտքա երեքին են որ վկայեն՝ հոգին, եւ ջուրն, եւ արիւնն. եւ երեքին մի են» (էջ 516բ)⁷⁷ :

Այս փաստը նախ ցոյց է տալիս, որ Հեթումի բնազիրը Լակրոզի ձեռքի տակ չի եղել, երկրորդ՝ ապացուցում է, որ Հեթումի ձեռագրում հայկական թարգմանութեան բնազիրը անաղարտ էր, հակառակ Լակրոզի կարծիքին :

Հեթումի բնազրի անաղարտութեան մասին բերենք ուրիշ օրինակներ եւս :

Առ Կորնթացիս Ա թղթի ԺԲ գլխի 29 տան մէջ հայկական բնազիրն ունի մի նախադասութիւն.

Միքէ ամենեքին գորութիւնք իցեն (Ձօհր. 783) :

Այս նախադասութիւնը նոյնպէս գալիս է յունարէն բնազրից (NTG 336) . Լատիներէն Վուլգատան այս նախադասութիւնը չունի. չունի նաեւ Ոսկանի հրատարակութիւնը, բայց Հեթումի օրինակը հարազատօրէն պահել է այդ մասը (ձեռ. No 180, էջ 532ա) :

Ղևտական գրքի Գ. 16 ըստ հին թարգմանութեան կարգում ենք Ձօհր. տպեան հրատարակութեան մէջ.

Եւ հանցէ քահանայն ի սեղանն պտուղ ի հոտ անուշից՝ տեառն. գամեմայն նարպ՝ տեառն (Ձօհր. 65) :

Ձօհրագրանի օլտաղործած 8 ձեռագրերը բոլորն էլ այսպէս ունեն: Նոյն ընթերցումն ունի նաեւ Հեթումի օրինակը (ձեռ. No 180, էջ 51ա) : Թարգմանութիւնը լիովին համապատասխանում է յունարէն Եօթանասնից բրնազրին (Sept. I 191) : Բայց Վուլգատան երրայական բնազրից այլ կերպ է թարգմանել այս (Vulg. I 163) եւ դրա ազդեցութեամբ էլ Ոսկանը փոփոխել ու խմբադրել է այն.

Եւ հանցէ քահանայն ի սեղանն պտուղ ի հոտ անուշից տեառն. ամեմայն նարպ տեառն եղիցի (Ոսկ. Ա 104) :

Ճիշդ է, որ յունարէն բնազիրը կարող էր նաեւ այսպէս հասկացուել.

⁷⁵ Տնատումը մենք ենք փոխել. տե՛ս յաջորդ ծանոթագրութիւնը :

⁷⁶ Հմմտ. "Novum Testamentum graece; recensiois Tischendorffianae ultimae textum cum Tregellesiano et Westcottio-Hortiano contulit et brevi adnotatione critica additisque locis parallelis illustravit Oscar de Gebhardt", ed. stereotypa octava. Lipsiae, 1901, p. 292-293.

Այսուհետեւ այս հրատարակութիւնը կը նշենք "NTG" ձեռք :

Ըստ յունարէն բնագրի հրատարակութեան՝ Ձօհրագրանի կատարած անասումը սրբագրութեան էր կարօտում :

⁷⁷ Նայն ընթերցումն ունի նաեւ Հեթում Բ-ի ձեռագրը, գրուած 1286 թ., տե՛ս՝ Երեւանի Պետ. Մատենադարանի ձեռ. No 979 (էջ 282բ) :

բայց Ոսկանը յունարէն չգիտէր, ուստի եւ նա այստեղ եւս Վուլգատային է հետեւել:

Ստակաց զբքի Լ. 30 տունը Սահակ-Մեսրոպեան թարգմանութեան մէջ ունի՝

Եւ ոչ քիկունս դարձուցանէ յամասնոց (Ձօհր. 448):

Ձօհրապեանի հրատարակութեան համար օգտագործուած 8 ձեռագրերը բոլորն էլ այսպէս ունեն՝ համապատասխանելով յունարէն Եօթանոսնից բնագրին (Sept. II 466): Այս հարադատ ընթերցումն ունի նաեւ Հեթում Բ-ի օրինակը (ձեռ. № 180, էջ 329բ): Իսկ Ոսկանի հրատարակութիւնը չեղում է.

Եւ ոչ զքիկունս դարձուցանէ ի քշնամոյ (Ոսկ. Բ 112):

Այս սրբագրութիւնը թէեւ Վուլգատայից բառացի թարգմանութեամբ չէ, բայց նրա աղղեցութեամբ է կատարուած (Հմմտ. Vulg. II 422):

Բերենք մի օրինակ եւս, որը շատ ուշագրաւ է:

Առ Հոսամայեցիս Ը. 38 տան մէջ, ըստ Ձօհրապեանի հրատարակութեան, Սահակ-Մեսրոպեան թարգմանութիւնն ունի.

Ոչ մահ, եւ ոչ կեանք, եւ ոչ հրեշտակք, եւ ոչ իշխանութիւնք, եւ ոչ որ կանս, եւ ոչ հանդերձեալքն եւ ոչ զօրութիւնք (Ձօհր. 772):

Այսպէս ունեն Ձօհրապեանի բոլոր ձեռագրերն էլ. եւ դա լիովին համապատասխանում է յունարէն բնագրին՝ «Ὅυτε θάνατος οὔτε ζωή, οὔτε ἄγγελος οὔτε ἀρχαί. οὔτε ἐσθωτά οὔτε μέλλουτα. οὔτε δυναμεις» (NTG 309). Ի հարկէ՝ այսպէս ունի նաեւ Հեթում Բ-ի օրինակը (ձեռ. № 180, էջ 526բ): Սակայն Ոսկանի հրատարակութեան մէջ այս մասը խմբադրուած է.

Ոչ մահ, եւ ոչ կեանք, եւ ոչ հրեշտակք, եւ ոչ իշխանութիւնք, եւ ոչ զօրութիւնք, եւ ոչ որ կանս, եւ ոչ հանդերձեալքն, եւ ոչ կարողութիւն (Ոսկ. Բ 612):

Այս փոփոխութիւնն ուղղակի հիմնուած է Վուլգատայի վրայ, որ է՝ «Neque mors, neque vita, neque angeli, neque principatus, neque virtutes, neque instantia, neque futura, neque fortitudo» (Vulg. III 283-4):

Թէ ի՞նչ ձևով է տեղի ունեցել խմբադրումը՝ ցոյց կը տայ հետեւեալ համադրական սխալները.

Դասական բնագիր (ըստ Եօթանոսնից)	Ոսկանի բնագիր (ըստ Վուլգատայի)
1. Ոչ մահ (οὔτε θάνατος)	= Ոչ մահ (neque mors)
2. եւ ոչ կեանք (οὔτε ζωή)	= եւ ոչ կեանք (neque vita)
3. եւ ոչ հրեշտակք (οὔτε ἄγγελος)	= եւ ոչ հրեշտակք (neque angeli)
4. եւ ոչ իշխանութիւնք (οὔτε ἀρχαί) =	եւ ոչ իշխանութիւնք (neque principatus)
5.	= եւ ոչ զօրութիւնք (neque virtutes)
6. եւ ոչ որ կանս (οὔτε ἐσθωτά)	= եւ ոչ որ կանս (neque instantia)
7. եւ ոչ հանդերձեալքն (οὔτε μέλλουτα) =	եւ ոչ հանդերձեալքն (neque futura)
8. եւ ոչ զօրութիւնք (οὔτε δυναμεις) =
9.	= եւ ոչ կարողութիւն (neque fortitudo)

Ուշագրաւ է նաեւ Բարութ Ա. 17 տան խնդիրը, որը դարձեալ Վուլգատայի առանձնաշատութիւններից է: Այս տունը, որ քերականօրէն կապուած է նախորդ տան հետ, յունարէնում ունի. «ὧν ὑμᾶς τομεν ἐννοτι Κυρίου» (Sept. III 352), այսինքն մեր թարգմանութեամբ՝ «մեզաք առաջի տեսան», իսկ հայերէն դասական թարգմանութիւնն ունի միայն՝ «առաջի տեսան», ա-

ունց «մեղաք» բառի: Այսպէս է Չօհրապեանի բոլոր ձեռագիր օրինակներում (Չօհր. 592)⁷⁸ եւ այսպէս է նաեւ Հեթում Բ-ի օրինակում (ձեռ. № 180, էջ 429): Բայց Վուլգատան այստեղ ունի մի ամբողջ նախադասութիւն՝ «Peccavimus ante Dominum Deum nostrum et non credidimus, dissidentes in eum» (Vulg. III 196), եւ ըստ այնմ էլ Ոսկանը թարգմանել ու մոծել է Հայկական բնագրի մէջ:

Մեղաք առաջի տեսնոն աստուծոյ մերոյ եւ ոչ հաւատացաք ապաւստմբալք ի նմանէ (Ոսկ. Բ 306):

Այս օրինակները, որոնց չարքը կարելի է դեռ երկարել, ցոյց են տալիս, որ Հեթում Բ-ի բնագիրը լատինական Վուլգատայի հիման վրայ մոծւած աղաւաղումներից զերծ է եւ նախադադափար չի հանդիսացել Ոսկանեան հրատարակութեան համար:

Մի քանի այլ օրինակներով կարելի է նաեւ տեսնել, որ Հեթում Բ-ի Աստուածաշունչը ե գարի մեր թարգմանութեան հարադատ օրինակներից է առ հասարակ:

Սաղմոսներից ԿԳ 7 տունը մեր ձեռագրերից չատերում աղաւաղուած է, ինչպէս կարելի է տեսնել Չօհրապեանի հրատարակութեան մէջ:

Պատրաստեցան ի քննել զքննութիւն (Չօհր. 409):

Չօհրապեանի օգտագործած բոլոր ձեռագրերն էլ այս ընթերցումն ունեն՝ առանց բացառութեան: Այսպէս է նաեւ, բնականաբար, Ոսկանի հրատարակութեան մէջ (Ոսկ. Բ 53): Իսկ Հեթում Բ-ի օրինակը, մեր հնագոյն եւ բնորակաւ ձեռագրերի հետ միասին, տալիս է այլ ընթերցում (ձեռ. № 180, էջ 299):

Պատրաստեցան ի քննել զքննութիւն (Չօհր. 409):

Այսպէս ունեն նաեւ Երեւանի ձեռագրեր № 345 (էջ 418բ)՝ 1270 թրւականից, № 177 (էջ 307բ)՝ 1292 թրւականից, № 179 (էջ 268ա)՝ նոյն թուականից, № 206 (էջ 269բ)՝ 1318 թրւականից եւ այլն: Եւ այս ընթերցումն է, որ ճիշդ է՝ համապատասխան յունարէն Եօթանասնից բնագրին (Sept. II 292):

Սաղմոս ԺԺԳ. 9-10 տներում դասական թարգմանութիւնն ունի:

Տուն Իսրայէլի յուսացաւ ի տէր, օգնական ընդունելի է նոցա. տուն Ահարոնի յուսացաւ ի տէր, օգնական ընկերելի է նոցա (Չօհր. 424):

Այսպէս ունեն Չօհրապեանի օգտագործած բոլոր ձեռագրերը: Այսպէս ունի նաեւ Հեթում Բ-ի օրինակը (էջ 312ա): Բայց Ոսկան Երեւանցին սրբապգրել է՝ «...օգնական եւ ընդունող է նոցա... օգնական եւ ընկերոջ է նոցա» (Ոսկ. Բ 78):

Այս ձեռով նաեւ՝

Երեմ. ԺԵ. 10. Հեթումն ունի՝ «զարութիւն իմ պակասեաց յանիծանելիաց իմոց» (էջ 413բ). Ոսկանի մօտ՝ «գորութիւն իմ պակասեաց յանիծողաց իմոց» (Բ մասի էջ 256-7):

Դ թագ. ԺԳ. 14. Հեթումն ունի՝ «այլ զի գործամաց գործոյն» (էջ 170ա). Ոսկանի մօտ՝ «այլ զի գործունեաց գործոյ» (Ա մասի էջ 385):

Դ թագ. ԺԶ. 2. Հեթումն ունի՝ «ամաց քանից էր Ահապ» (էջ 171բ). Ոսկանի մօտ՝ «ամաց քանիւնցից էր Ահապ» (Ա մասի էջ 389):

Ա Հոսմ. Զ. 19. Հեթումն ունի՝ «որպէս պատրաստեցէք զանդամս

⁷⁸ Չօհրապեանի մօտ առաջի տեսնոն բառերը հաշուել են 16 տան մէջ, որի հետեանքով 17 տունը բացակայում է, այնինչ՝ ըստ յունարէնի՝ այդ երկու բառերը կազմում են 17 տունը:

ձեր ծառայս պղծութեան» (էջ 525ր) . Ոսկանի մօտ՝ «Որպէս պատրաստեցիք զամսինս ձեր ծառայս պղծութեան» (Բ մասի էջ 609) :

Մատթ. ԻԳ. 32. Հեթումն ունի՝ «Եւ դուք լցիք զչափ հարց ձերոց» (էջ 462ա) . Ոսկանի մօտ՝ «Եւ դուք լցիք զչափ հարցն ձերոց» (Բ մասի էջ 461) :

Հեթում Բ-ի օրինակում յատուկ անուններն ամէնուրեք պահել են զասական տառադարձութեան ձևերը՝ Յովսիա, Յովհաննէս, Յովսէփ, Մովսէս, Ահարովն, Յակըվր, Սեգովր . եւ դա առանձնապէս աչքի է ընկնում, երբ համեմատում ենք Ոսկանի հրատարակութեան հետ. Յօսիա, Յօհաննէս, Յօսէփ, Մօսէս, Ահարօն, Յակօր, Սեգօր :

Այս բոլորից յետոյ պարզ է, որ Թիւրիմացութիւն է այն կարծիքը, թէ Հեթում Բ-ի ձեռագիր օրինակը Ոսկան Երեւանցու հրատարակած բնագիրն էր եւ հանդիսանում էր Վուլգատայի հիման վրայ սրբագրութիւնների ենթարկուած բնագիր :

Ե. ՎՈՒԼԳԱՏԱՅԻ ԻՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ

ԲՆԱԳՐԻ ԽԱԹԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Պէտք է զգուշանալ Աստուածաշունչ մատեանի խաթարուած օրինակներին : Խաթարում պէտք է համարել բնագրի դիտակցարար կատարուած սրբադրութիւնները՝ օտար եւ անհարադատ բնագրերի հիման վրայ : Հայկական բնագրի այդպիսի խաթարման փորձեր կատարուել են՝ հիմք ունենալով լատինական Վուլգատա-ն :

Վուլգատայի ազդեցութեան տեսակէտից ուշադրութեան արժանի է նախ մի փաստ, որը վերաբերում է ԺԶ դարին եւ լեհահայ միջնադարին : Երեւանի Պետ. Մատենադարանի № 2267 ձեռագրում Սողոմոսարանից եւ Բ Օրինաց գրքից բերուած են մի շարք քաղուածներ (էջ 43ա-52բ), որոնք Լուսիկ սարկաւադի ձեռքով են գրուած Լիւովում՝ 1581 թուականին : Այդ քաղուածները ներկայացնում են որոշ սրբագրութիւնների ենթարկուած մի բնագիր, որի հետքերն ամենեւին չեն երեւում Զօհրապեանի քննական հրատարակութեան տարբերակներում :

Ուշադրութեան արժանի են յատկապէս Բ Օրինաց գրքի ԺԲ գլխին պատկանող որոշ մասեր, որոնք գտնուում են ձեռագրի 47ա-47բ էջերում : Դրանցից են հետեւեալ օրինակները .

Ընկալեալ բնագիր (Զօհր. 131)

Ձեռագիր № 2267

- | | |
|--------------------------------------|---------------------------------------|
| 24. Մաշեալք սովով եւ կերակրով քոչնոց | = Իւծեալք [եւ] գազամաքեկք գգէշ արկեալ |
| 24. Քարշել զնոսա ընդ երկիր | = Այսր եւ անդր քարշեցեմն |
| 32. Յորքոյ Սողոմայ է որք ևնցա | = [Յ]այգոյն Սողոմայ էր տունկիք |
| 33. Առանց քժղութեան | = Անհնարին |
| 35. Սխալեցի (ոսն ևնցա) | = Հարցի գգարի |
| 38. Զնարպ գոհից ևնցա | = Զնարպս սպանդիցն |

Դժբախտաբար այս քաղուածներն ամբողջական նախադասութիւններ չեն ներկայացնում, այլ միայն առանձին բառեր՝ հայերէն-կոմաներէն հաւաստումներով⁷⁹, ուստի եւ բնագիրը հանգամանօրէն ուսումնասիրելու հնարա-

⁷⁹ Մենք կոմաներէնը բաց ենք թողել՝ հայերէն մասերը համեմատելու համար բնականաւոր բնագրի հետ :

ւորութիւն չեն տալիս: Սակայն կարծում ենք, որ Լեհաստանի պայմաններում կատարուած այս սրբազրութիւնների ծագումը պէտք է որոնել Վուլգատայում: Լեհաստանի սահմաններում ընդօրինակուած ձեռագիր Աստուածաշնչիւրի չարքում անշուշտ կը գտնուեն այնպիսիներ, որոնք կը համապատասխանեն Լուսիկ սարկուազի օգտագործած օրինակին:

Հայկական բնագրի խաթարման փորձերը, սակայն, հիմնականում ժէ դարում են կատարուել: Ղազար Բարերդացին Հայկական Աստուածաշնչի նախկին գլխարաժանումներին առնթեր լատինականները զետեղելով հանդերձ, ինչպէս էր Հեթում Բ-ի օրինակում, որպէս նորութիւն՝ աւելացրել էր նաեւ լատինական գլուխների անհամարները. բացի այդ՝ նա վերջում զետեղել էր նաեւ Աստուածաշնչի նիւթերի երկու այրբնական ցանկեր, մէկը՝ ըստ հին գլխարաժանումների, միւսը՝ ըստ լատինական գլխարաժանումների եւ տրանահամարների: Ղազար Բարերդացին այս ձեռով կարգաւորած իր Աստուածաշնչիւր 1619 թ. Լիովում ընդօրինակել է տուել Միթքոյի որդի Թորոս զբրչին⁸⁰: Նրա կատարած աշխատանքի այս հանգամանքները նկատի առնելով՝ Զօհրայեանը մտածում էր, որ բնագրի հարադատութիւնն էլ կասկածելի է. «Ոչ համարձակիմ երաշխաւոր լինել... ուրեք ուրեք նաեւ բնարանին անհույ լինելոյ» (Զօհր. 6): Ղազար Բարերդացու այս Աստուածաշնչի աղղեցութեան տակ գտնուող օրինակներ էին՝ Զօհրայեանի կատարած տպագրութեան համար օգտագործուած զբրչարերից չորրորդը եւ հինգերորդը (Զօհր. 6): Նրանից անկախ, բայց նման հանգամանքներ ներկայացնող մի օրինակ էր նաեւ Զօհրայեանի օգտագործած եօթերորդ զբրչարերը, որը 1656 թ. ընդօրինակութիւն էր՝ Յովհաննէս դպիր Լեհացու ձեռքով. այս օրինակը եւս զերծ չէր ուրեք ուրեք յարատոյ անհաւատարմութեան՝ մանաւանդ ի Նոր Կտակարանի, եւ ի համաձայնելն զբրչին զգլխակարգութիւնն ընդ լատինականին՝ երեւէր ձեռն մխել եւ ի բնարանն» (Զօհր. 6-7):

Սակայն Հայկական թարգմանութեան խաթարման խոշոր փորձերը Վատիկանի կողմից են արուել: 1637 թ. Սեպտեմբերից սկսած Պրոպագանդայի որոշմամբ ձեռնարկուումներ են լինում Հայկական հին թարգմանութիւնը համեմատելու Վուլգատայի հետ եւ սրբագրելու. այս աշխատանքներին մասնակցում են Իտալացի երկու հայերէնագէտ հոգեւորականներ՝ Յովհաննէս Պիրոմալլին եւ Պօղոս Պիրոմալլին, եւ երեք Հայեր՝ փրանկիսկեան կրօնաւոր Գաւ-

⁸⁰ Այս Աստուածաշնչին այժմ գտնուում է Երեսնի Պետ. Մատենադարանում, ձեռ. № 351: Հիւանալիօրէն նկարագրագրուած է: Յիշատակարանում՝ «Շնորհիւ ... աւարտեալ եղև Աստուածաշնչն մատենայն յերկիրս Ռուսաց, ի մայրաքաղաքս Իւով, ի գունն Հաճկատար Աստուածածին վանուցս ... ի ամս կենարարին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՁձԹ-ին՝ ի թուականին Հայոց Մեծաց Ռկլ-ին ... և յետնեալս ամենայնի գրել ետու զոսեա գիրն Թորոս զպիր գրագրին, և զոսկէ գիրն և զծագրիկսն և զամանս ի պատկերացն ես իմ հոգանիւթ մատամբս զծագրեցի ... այլ և զանազան գունով ծագկեցի, և զեղեցկանկար պատկերօք կերպագրել ետու ...: Արդ ... խնդրեմ ի ձեզանէ որ զիս ըզնուստ Ղազար Բարերդացիս յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձերս եւն (էջ 598բ-599ա):

Պետ. Մատենադարանն ունի նաեւ այս Աստուածաշնչի մի ընդօրինակութիւն՝ ձեռ. № 201, որի գրիչն է՝ Աստուածատուր քհն. Զուգայեցի, թուականը՝ 1660, վայրը՝ Շոշ (Աղասան):

Ղազար Բարերդացու մասին, որը կոչուում էր նաեւ Վալաքացի, տե՛ս Հ. Գ. Գալէմբերեանի ընդարձակ ծանօթագրութիւնը՝ Հանդես Ամստերդամ, 1906, էջ 227: Տե՛ս նաեւ Հ. Պ. Տէր-Պօղոսեան, Ղազար վ. Բարերդացի, անդ, 1906, էջ 17-30, 129-140 (շար.):

պարբ, գոմինիկեան կրօնաւոր Յովհաննէսը եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Զաքարիա Վանեցու ներկայացուցիչ Յովհաննէս Անկիւրացին, որը լատինական սեռումբ կոչուած էր Յովհաննէս Մոլինոս⁸¹։ Յայտնի է, որ այս աշխատանք-ներն արդիւնքը եղել էր Նոր Կտակարանի համեմատութեան աւարտումը 1639 թ. Մարտին⁸², բայց Հին Կտակարանի մասին տեղեկութիւններ չունենք։

Այնու ամենայնիւ Վատիկանի կատարած այդ ձեռնարկումները որոշ արդիւնքներ տուին հետագայում Պօղոս Պիրոմալլիի ջանքերով։ Վերջինս 1642-47 թթ. իջմիածնում ծանօթութիւն հաստատելով Ոսկան Երեւանցու հետ, նրան գաղափարակից ու գործակից է դարձնում իրեն։ Այդ մասին Հ. Միք. Չամչեանն ասում է.

«Եւ յայտ նուագի՝ յորժամ ի Հայս էր Պօղոս կրօնաւոր, գտեալ զՈսկան վարդապետ՝ խօսեցաւ ընդ նմա վասն որբադրութեան Աստուածաշնչին. յայնժամ վերստին բաղդատութեամբ յաւելին երկոքին նոքա այլ եւս փոփոխութիւնս, և խանդարեցին բազում ուրեք զվայելչութիւն շարադրութեանն, ուրեք ուրեք եւ զմիտս բանին, այլազգ իմանալով»⁸³։ Ստեղծարուած այս բնագիրը 1666/68 թթ. տպագրութեամբ լոյս տեսաւ Ամստերդամում եւ յայտնի է Ոսկանի Աստուածաշունչ անունով։

Աստուածաշնչի Ոսկանեան հրատարակութիւնը, որպէս տպագրական գործ, մեծ գովեստի է արժանացել, բայց բնագրական տեսակէտից չափ է քրննադատուել։

Բնագրի մասին խօսելով՝ Չամչեանն ասում է, որ Ոսկանը «նախ՝ Թարգմանեաց ի լատինէ ի հայս այլատարազ իմն շարադրութեամբ զգիրս Զորբորդ Եղրատայ եւ զգիրս Յեսուայ որդւոյ Սիրաքայ», «այլայլեաց եւ զբանս Աստուածաշնչին՝ բաղդատելով զայն ընդ լատինականին. եւ այս աչն է՝ զոր արար ընդ Պօղոս կրօնաւորի Լատինացւոյ», «փոփոխեաց զշարադրութիւնս իւրաքանչիւր գրոց բոտ նոր ոճոյ ոմանց, բաց ի Սաղմոսէն. թէպէտեւ յայն եւս հասոյց ձեռն. որով եւ եղծաւ քաղցրութիւն քերթուածոց նոցին»⁸⁴։

Զօհրապեանը եւս նոյնպիսի գնահատական ունի Ոսկանի մասին. «Աստուածաշունչ իւր՝ ըստ իմաստիցն ձեւացաւ խոնարան այլ եւ այլ թարգմանութեանց՝ հելլենականին եւ լատինականին. իսկ ըստ քերթողական արուեստին՝ խոնարածայնութիւն նախնի հայկական վայելչարանութեան՝ ընդ նորահնար օտարալուր բարբառոյ։ Թողում եւ զոր ողջոյն գիրս Սիրաքայ՝ եւ Զորբորդ Եղրատայ՝ հանդերձ թղթով ինչ Երեմիայ մարգարէի, իբրեւ ամբողջական մասունս՝ թարգմանեալ ի լատինականէն՝ իւրովն իսկ թերութեամբ հրմուսութեամբ բարբառոյն այնորիկ, յաւել ի մերս խուժաղոժ հայկարանութեամբ» (Զօհր. 8)։

Այսպէս եւ ուրիշ քննադատներ, որոնք նախանձախնդիր են եղել հայկական բնագրի անադարտութեանը։

Մենք Ոսկանեան Աստուածաշնչի բնագրի մասին նախորդ էջերում փաստօրէն յայտնեցինք մեր կարծիքը՝ Հեթում Բ-ի դրչադիր Աստուածաշնչի մասին խօսելիս, ապացուցելով, որ վերջինս Ոսկանեան հրատարակութեան նախագաղափար օրինակը չէ։ Բայց միաժամանակ պիտի աւելացնել, որ Ոսկան Երեւանցին օգտագործել է Հեթում Բ-ի օրինակը։

⁸¹ Հ. Գ. Դալմեմարեան, «Հայ Աստուածաշունչի տպագրութեան ջանքեր Ոսկանէն յառաջ», Հանդէս Ամստերդ., 1914, էջ 14։

⁸² Անդ, էջ 14։

⁸³ Հ. Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 621։

⁸⁴ Անդ, էջ 600։

Ոսկան Երեւանցու ուղղակի վկայութեամբ մեզ յայտնի է դառնում, որ նա Հեթում Բ-ի զբաղմունքներն է ոչ որպէս նախագաղափար՝ իր հրատարակութեան համար, այլ որպէս հիմք՝ իր սեփական բնագիրը կազմելու համար:

1668 թ. Ոսկան Երեւանցին ամբողջական Աստուածաշնչի հետ միաժամանակ լոյս էր ընծայում նաեւ Նոր Կտակարանն առանձին, որի յիշատակարանում նա բացատրում էր, որ ինքը տպագրութեան համար իր ձեռքով պատրաստել էր («իմով ձեռամբ գծեալ») մի բնագիր («բուն նախադադար»)․ այդ բնագիրն հիմքը («սրբագրութեան դադար») Հեթում Բ-ի զբաղմունքից տրտապրում մի օրինակ էր («զկնի Հեթումյ թաղաւորին աստուածաշունչ», կարգա՝ աստուածաշունչին), որի վրայ նա կատարել էր բնագրական սրբագրութիւններ («ի ստուգարանութիւնս աշխատեալ»)․ այդ սրբագրութիւնները համար նա վստահելի աղբիւր էր համարել լատինական Աստուածաշունչը («հաւաստացուցիչ դադմատականն պարզարանօղ դադար»)․ դրա հիման վրայ սրբագրել էր թէ՛ բառեր եւ թէ՛ նախադասութիւններ («թէ՛ առ բառս եւ թէ՛ առ բանս»)․ այդ օրինակի վրայ նա կատարել էր նաեւ լեզուական քերականական բազմաթիւ ուղղումներ («թէ՛ բոլոր քերթողականի արհեստի՝ եւ թէ՛ գրչութեան արհեստի»), եւ այլն: Բայց այս փաստերը տեսնենք նոյնինքն Ոսկան Երեւանցու շարագրութեամբ.

«Ծնորհօք եւ օժանդակութեամբ...: Արդ՝ հանդիպօղացդ ամին ընթերցմամբ կամ ստացմամբ հայցեմ բազմաւ աղերսիւ, անմեղադիր լինիլ սղալանացն, զի բոտ կարի ջանացաք ի սրբագրելն՝ քէ՛ ըստ Բերթողականի արհեստի եւ քէ՛ գրչութեան արհեստի, քէ՛ առ լծորդս, եւ թէ՛ առ թիւս նոցունց, առ հոլովս անուան եւ բայի, եւ թէ՛ առ թիւս նոցունց, առ նախադրութիւնս եւ առ պարտադաս նոցունց եւ դիտաւորութիւնս. նաեւ ի ստուգարանութիւնս աշխատեալ՝ որոյ բուն նախագաղափար լեալ է իմով ձեռամբ գծեալ Նոր Կտակարան՝ զկնի Հեթումյ քաղաւորին աստուածաշունչ սրբագրութեան գաղափար՝ առ սոսայն հաւաստացուցիչ դադմատականն պարզարանօղ գաղափար՝ քէ՛ առ բառս եւ քէ՛ բանս, զի մի՛ երկրայական թիւրութիւն ինչ ի ներս անկցի, որպէս զոյ բնառեալ ի մէջ զբոց մերոց ի զբայն անհմտից եւ անխորթից» եւ այլն⁸⁵:

Այս յիշատակարանից անտարակուսելիօրէն պարզում է, որ Ոսկան Երեւանցին արքայական Աստուածաշնչի ընդօրինակութիւնն («սրբագրութեան դադար») օգտագործել է պարզապէս իր սեփական բնագիրը («բուն նախադար») կազմելու համար: Եւ այս բնագիրն է, որ նա հրատարակել է:

Այստեղ մենք արդէն կարող ենք որոշակիօրէն տեսլ, որ Աստուածաշունչի հայերէն դասական թարգմանութեան բնագիրը եւ Ոսկանեան բնագիրը որակապէս տարբեր բնագրեր են:

Ժամանակին, անդրադառնալով արքայական Աստուածաշնչի եւ Ոսկանի հրատարակութեան աղբիւր խնդրին, Կարապետ Վրդ. Տէր Մկրտչեանը գրել է.

«Հեթումի Աստուածաշունչը մենք գտնում ենք ծայրէ ի ծայր սրբագրութեամբ ու փոփոխութիւններ ինքնակրկն մի օտար գրչով, որ լուսանցքներում համարաբար է աւելացրել, տողամէջ սրբագրութիւններ արել, տնտել եւ այլն: Այդ գրիչն անշուշտ ուրիշ մէկը չէ, բայց եթէ Ոսկան. շատերի կողմից նկատողութեան է առնուել արդէն եւ երբեմն չափից աւելի խստութեամբ

⁸⁵ Տե՛ս՝ «Նոր Կտակարան», Ամստերդամ, 1668, էջ 933-934:

դատաւարտուել Ոսկանի հրատարակութեան գլխաւոր թերութիւնը, որ նա լաւ-
աւինքէն թարգմանութեան հետեւելով աղճատել է շատ տեղ ձեռքում ունեցած
հայերէն օրինակը եւ կամայական փոփոխութիւններ մտցրել նորա մէջ: Այդ
փոփոխութիւններն ահա նա արել է բուն ձեռագրի վրայ՝ պատրաստելով ու-
յաթմարցնելով այն տպագրութեան համար, եւ բոլոր նորա անտեղի սրբագրու-
թիւնները մտել են ի հարկէ տպագրի մէջ»⁸⁶:

Աւելացնենք, որ Ոսկանի սրբագրութիւնները գրչագրի վրայ՝ թէեւ
շատ են, ինչպէս ասում է յօդուածագիրը, բայց եւ դեռ բոլորը չեն. ճիշդ է
նուեւ այն, թէ Ոսկանը «բաւական զգուշութեամբ է շարժել» (վարուել) իրեն
հիմք ծառայող գրչագրի հետ եւ թէ «միայն արտաքին տառական սրբագրու-
թիւններ է արել, կամենալով միակերպութիւն մտցնել նոյն խօսքի դանազան
ընթերցումաների մէջ եւ ուղղել այն սխալները, որ կարծում էր, թէ գրչագիր-
ներէից են»⁸⁷: Մեր կատարած համեմատութիւններից պարզուած է, որ Ոսկանի
կատարած լեզուական եւ մանրամասն ընտելական-իմաստային նշանակութիւն
ունեցող սրբագրութիւններից շատ-շատերը չեն երեւում Հեթումի գրչագրի
վրայ:

Ոսկանեան ընագիրը հետզհետէ տարածուեց Աստուածաշնչի մի քանի
նոր հրատարակութիւններով՝ Կ. Պոլսում (1705 թ.), Վենետիկում (1733 թ.),
Պետերբուրգում (1818 թ.) եւ Սիբիրում (1817 թ.): Դեռ չենք հաշուած
Հին եւ Նոր Կտակարանների առանձին մասերի դանազան հրատարակութիւն-
ները, որոնք Ոսկանեան Աստուածաշնչից էին գալիս:

Ոսկանեան ընագրի հետեւողութեամբ խանդավառ էր ենթարկուել
նաեւ ծաշոց գիրքը: Թագէտս երէց Համազասպեանը 1686 թ. Վենետիկում հր-
ատարակել էր ծաշոցը՝ իրեն ընագիր ընտրելով, ինչպէս ինքն էր ասում,
Հեթում Բ-ի ձեռագիր ծաշոցը, գրուած 1286 թ.⁸⁸: Կասկած ունենալով թա-
գէտս երէցի հաւատարմութեան նկատմամբ՝ Զօհրապեանը գրում էր, որ նա
«ոչ ոսկաւ աշխատութեամբ կարծեմ յարմարեալ զայնչափ ընթերցուման՝
բոտ Ոսկանեանն զազափարի՝ աղաւաղեալ զթագաւորականն ազնիւ օրինակ»
(Զօհր. 7): Հետագայում Էփմիածնի միտրան Վահրամ Վրդ. Մանկունին, որը
Վաղարշապատում ծաշոցի նոր հրատարակութիւն է կատարել՝ իրեն ընագիր
ընտրելով Հեթում Բ-ի նոյն ձեռագիր ծաշոցը, իր առաջարկութեամբ հաստատում
էր այն, ինչ որ միայն ենթադրել էր Զօհրապեանը, յիշեցնելով, որ «ծաշոցքն
տպագրեալք մինչեւ ցայժմ՝ համաձայն էին առհասարակ Աստուածաշնչին
խանդարելոյ ի տեղիս տեղիս վրիպական սրբագրութեամբք Ոսկանայ վարդա-
պետի Երեւանցոյ»⁸⁹:

Համեմատելով ծաշոցի արքայական ձեռագիրը 1686 թ. հրատարա-
կութեան հետ՝ մենք եւս հաստատեցինք, որ վերջինում իշխում են Ոսկանեան
ընագրի ընթերցումները:

⁸⁶ Կարապետ Վրդ. Տէր Մկրտչեան, «Աստուածաշնչի նոր հրատարակութիւնը»,
Արարես, 1902, էջ 1070-1071:

⁸⁷ Անդ. էջ 1071:

⁸⁸ Հեթում Բ-ի համար ընդօրինակուած այդ ձեռագիր ծաշոցն այժմ գտնու-
ւում է Երևանի Պետ. Մատենադարանում՝ 979 համարի տակ: Ընտիր օրինակ է:
Գրչութեան թուականը 1286 է, բայց գրիչն ու վայրը յայտնի չեն: Ունի հոյա-
կապ մանրանկարներ, որոնք վերագրում են Թորոս Թաթևին:

⁸⁹ Մանկունու յառաջարանը, տե՛ս՝ «Ծաշոց գիրքը Հայաստանեայց Եկեղեց-
ւոյ», Վաղարշապատ, 1872, էջ 9:

Զ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԸ

Սակայն հայկական բնագրի անադատութեան հարցը, որն անխուզիբ մտահոգութեան առարկայ դարձաւ:

Սովետական պետի դրադեցնէր յաջորդ սերունդներին, շատերի նախանձախն-

Մխիթար Սեբաստացին, 1733 թ. նորից հրատարակելով Աստուածաշունչը, թէեւ Ոսկանեան բնագրի վերատարգմութիւնն էր տալիս, բայց միաժամանակ քննական որոշ վերաբերմունք էր ցուցաբերում այդ դործում: Իր ձեռքի տակ ունենալով մի քանի զբչագիր օրինակներ, նա, ինչպէս ասում է իր հրատարակութեան վերջաբանում, Հին եւ Նոր կտակարանների բնագրում ուղղակի սրբագրել է ժամանակի ընթացքում զբչական աղաւաղումների ենթարկուած մասեր: Օրինակ՝ Յես. Դ 4 տան մէջ Ոսկանն ունէր՝

Անեցոյց տէր գնեսու առաջի ամենայն ազգին Խորայէլի. եւ երկնչէին ի Մօսիսէ որչափ ժամանակս եւ եկեաց (Ոսկ. Ա 218-9):

Մխիթար Սեբաստացին բնագրում ուղղում է կատարել՝

Անեցոյց տէր գնեսու առաջի ամենայն ազգին Խորայէլի. եւ երկնչէին ի նմանէ որպէս ի Մօսիսէ՝ որչափ ժամանակս եւ եկեաց⁹⁰:

Այսպէս նաեւ՝ Մատ. ԻԳ. 32. Ոսկանը բացայայտ աղաւաղմամբ ունէր՝

եւ դուք լցիք զչափ հարցն ձերոց (Ոսկ. Բ 461):

Մխիթարի հրատարակութեան մէջ ուղղուած է՝

եւ դուք լցե՛ք զչափ հարցն ձերոց⁹¹:

Այս սրբագրութիւնները համապատասխանում են մեր ձեռագրերի տուեալներին, բայց դրանց թիւը հաւանաբար շատ մեծ է:

Բացի այսպիսի սրբագրութիւններից՝ Մխիթար Սեբաստացին նաեւ բնագրական բազմաթիւ զիտողութիւններ է նշանակել իր հրատարակութեան լուսանցքների վրայ՝ առանց փոփոխելու Ոսկանեան բնագիրը: Այդ զիտողութիւնները, որոնց նպատակը նոյնպէս եղել էր պարզել հայկական բնագրի կրթած զբչական աղաւաղումները, ներկայացնում էին 1645 թ. Փարիզում հրատարակած Լօթրնլեզուեան Աստուածաշնչի հետ կատարուած համեմատութիւնները, որոնք, ինչպէս երևում է, երբեմն տալիս էին եւ ո՛չ արհամարհելի արդիւնքներ: Օրինակ՝ Դ Թագ. Զ. 23 տունն ունի մի այսպիսի անիմատ ընթերցում.

եւ արկ առաջի նոցա խոտս տակաւ մեծաւ (Զօհր. 235):

Այսպէս է Զօհրապեանի օգտագործած ձեռագրերում եւ մեզ ծանօթ բոլոր ձեռագրերում. այսպէս է նաեւ Ոսկանի մօտ, այն տարբերութեամբ, որ նա արկ բառը սրբագրել է եւ դարձրել է արկ (Ոսկ. Ա 378): Այստեղ, սակայն, խօսքը խոտս տակաւ աղաւաղ բառերի մասին է: Մխիթար Սեբաստացին, նախադասութիւնը Ոսկանից տունելով հանդերձ, ուղղում է առաջարկել՝ լուսանցում աւելացնելով այսպիսի նշում. Սեղանս խորտկաւ մեծաւ⁹², եւ այդ մասին խօսել է իր վերջաբանում⁹³:

Ձեռագրական հիմքեր չունեցող այսպիսի ճշգրտումները զիտողութիւն-

⁹⁰ «Աստուածաշունչ գիրք», Վենետիկ, 1733, էջ 194:

⁹¹ Անգ. էջ 954:

⁹² Անգ. էջ 337:

⁹³ Անգ. էջ 1274:

ներքի ձեռով թողնելով լուսանցներում՝ Մխիթարը զգուշաւորութիւն էր հանդէս բերում . բայց տուեալ դէպքում նրա մատնանշած ուղղումն այնքան ուշադրաւ էր, որ Պետերբուրգում 1817 թ. տպագրուած Աստուածաշնչում, որը Մխիթարի հրատարակութիւնից էր արտատպուած, անմարան մուծուել է բրնազրի մէջ:

Եւ էարկ առաջի նոցա սեղանս խորտկաւ մեծաւ⁹⁴:

Ձեռագրական տուեալների վրայ չյննուող այս դիտողութիւնը, որը վերաբերում է ոչ թէ Ոսկանի բնագրին, այլ առհասարակ հայկական դասական թարգմանութեան ձեռագրերին, իրաւամբ ուշադրութեան արժանի է համարուել հայկական Բառարանի հեղինակների կողմից⁹⁵:

Մխիթար Սեբաստացու քննական այս վերաբերմունքը հայկական թարգմանութեան բնագրական հարցերում, որպէս հետեւողական դիժ, երեւում է Աստուածաշնչի եւ նրա տարբեր մասերի այն հրատարակութիւններում, որոնք հետագայում յոյս աշխարհ եկան Վենետիկի Մխիթարեանների ֆանդիւրով:

1752 թ. լոյս տեսած Նոր Կտակարանի անուանաթերթերում նշուած էր՝ «Տպագրեալ ըստ ուղղագոյն հին օրինակաց ձեռագրաց»: Դժբախտաբար՝ կատարուած աշխատանքի էութեան մասին դադարաւոր չենք կարողանում կազմել, որովհետեւ այս տպագրութիւնը ձեռքի տակ չունենք:

1766 թ. հրատարակուած Նոր Կտակարանի յիշատակարանից տեղեկանում ենք, որ տպագրութիւնը կատարուել է «ըստ յառաջագոյն տպագրեալ օրինակաց», բայց ենթադրուել էր բարեփոխումների. ինչպէս հրատարակիչներն են ասում՝ որոշ պակասներ լրացրել էին. «Որ ինչ ուրեք ուրեք պակաս դայր ի բուն օրինակէն որպէս ցուցանէին զըշագիւր օրինակք, եւ թարգմանութիւնք այլոց լեզուաց, լցուցաք զայնս ի նոցանէ»: զրանից բացի՝ որոշ աշխատանքներ էին կատարել լեզուական աղճատումներից բնագրին ազատելու ուղղութեամբ. «Ի բազում տեղիս եւս եղաք ըստ ձեռագրաց՝ որչափ հնար էր, մանաւանդ ի հոլովմունս ածական անուանց. իսկ յայլ իրս, այսինքն ի խնդրանութիւնս բայից եւ ի լծորդութիւնս նոցա ի կրաւորական, կամ ի ներդրածական, ոչ մերձեցաք ինչ, որպէսդի մի՛ տաղտկալի արասցուք, զոր ինչ յատկութիւն հայկական լեզուին պահանջէ»:

1789 թ. Նոր Կտակարանը նորից են հրատարակում Մխիթարեանները՝ բնագրական նոր սրբագրութիւններով: «Վերստին բաղդատեալ ընդ բուն ձեռագիր օրինակաց, — զրուած է յիշատակարանում, — սրբագրեցաք ոչ միայն ի սխալանաց սպրդելոց ի տպագրութիւնս, այլ նաեւ ուրեք ուրեք՝ մանաւանդ ի թուղթան Պօղոսի ուղղագրեցաք ըստ ընտրելագոյն ձեռագրաց, յորում մասին թերի գտանէր Նոր Կտակարանն մեր ըստ ձեռագրաց տպագրեալ յամի տեսոն 1752, առ նուագութեան ձեռագիր օրինակաց յայնժամ»: Հրատարակիչների մտահոգութիւնը եղել է ըստ հնարաւորին վերացնել այն փոփոխութիւնները, որ բնագրի մէջ մտցրել էր Ոսկան Երեւանցին, «որ ի տպագրել զառաջին գլխաւորածաշունչ մեր հայկական՝ ընդդէմ հաւատարմութեան ըստ հաճոյից ձեռներէց եղեւ այլայլել բազում ուրեք բացի շարագրութենէն եւ զրնաբանն իսկ՝ իբր ուղղագրելով եւ համաձայնելով թարգմանութեան Աստուածաշնչին Լատինացոյց, թերեւս սխալական եւ թերի համարեալ զմերն, որ ըստ

⁹⁴ «Աստուածաշնչինչ գիրք»: Պետերբուրգ. 1817, էջ 310:

⁹⁵ «Նոր Բառագիրք Հայկական լեզուին», հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 839 (տե՛ս «տակ» բառը):

քանչև ի յօրինուածով թարգմանեալ է ի նախնեաց անտի մերոց ի Յունական բնագրէ»։ Այնու ամենայնիւ զգուշաւորութիւնը նրանց թոյլ չի տալիս մի անգամ ից քարուքանդ անել ամէն ինչ, այնպէս որ Յովհաննու Ա թղթում կատարուած յայտնի աղաւաղման մասին յիշատակարանում ուշադրութիւն հրաւիրելով եւ այն քննադատելով հանգերձ՝ բնագրում նոյնութեամբ թողնում են Ոսկանի մուծած Վուլպատեան ձեւը, միայն փակագծերի մէջ առնելով տուեալ Հատուածը։

Նոյն 1789 թ. Մխիթարեանները հրատարակում են նաեւ Սաղմոսը՝ «ըստ ընտիր օրինակաց», ինչպէս նշուած է անուանաթերթում։

Կաշկանդումների վերջնական յաղթահարումը վերապահուած էր Մխիթարեան յայտնի դիտնական Հ. Յովհ. Զօհրապեանին, որը 1805 թ. առաջին անգամ հրատարակ հանեց հայկական Աստուածաշնչի դասական բնագիրը ելուտ տարրեր հրատարակութիւններով՝ միահատոր եւ քառահատոր։ Այս հրատարակութեան անուանաթերթում նշուած էր՝ «նորոգապէս ի յոյս բնծայեալ յընարեւալոյն գրադիր զազափարէ՝ համեմատութեամբ այլ եւ այլ օրինակաց»։

Հրատարակութեան նախարանից տեղեկանում ենք, որ Զօհրապեանի օգտագործած հիմնական ձեռագիրը (Վենետիկի Մխիթարեան Մատենադարանի ձեռ. № 1) 1319 թ. արտագրուած էր, հաւանաբար Կիրիկիայում, ԺԳ դարի մատենագիր Գէորգ Սկեւաջու օրինակից։ Միւս օրինակները, որոնք որպէս օժանդակ են օգտագործել սոյնի հետ «ի ստուգարանութիւն կամ յուղղագրութիւն, եւ ի լրումն թերութեանցն», էին Աստուածաշնչի (Հին եւ Նոր Կտակարաններ) ուրիշ 7 օրինակներ, Աւետարանների աւելի քան 20 օրինակներ եւ Գործքի ու Առաքելական թղթերի 14 օրինակներ։ Զօհրապեանը այս օրինակների տարբերութիւնները նշել է տողատակում՝ «ի պէտս մերոց ուսումնաւորաց», չմոռանալով նաեւ յանուանէ նշանակել Ոսկանեան բնագրի տարբերութիւնները, որպէսզի նրանք զանազանուեն։

Զօհրապեանի Աստուածաշունչը հայկական դասական բնագրի առաջին քննական հրատարակութիւնն էր։ Չարմանայի է, որ Վենետիկի Մխիթարեաններն իրենց այս յայտնի հրատարակութիւնից յետոյ 1816 թ. նորից էին ապագրում Նոր Կտակարանը՝ «ըստ օրինակի տպելոյ յամին 1789», ինչպէս շրջմուտած է գրքի ճակատում. բայց սա ըստ երեւոյթին Ոսկանեան բնագրի աղբիւրցութիւնն արտայայտող վերջին հրատարակութիւնն էր։

Հայկական բնագիրը Զօհրապեանից յետոյ ունեցաւ մի ուրիշ նշանաւոր հրատարակիչ եւս՝ յանձին նրա միաբանակից Հ. Աբալէն Բագրատունու, որը 1860 թ. նորից յոյս բնծայեց Աստուածաշունչը՝ «ըստ միաբան վաղեմի բրչադրագ մերոց եւ յոյն բնագրաց»։ Վերնագրային այս նշումը ցոյց է տալիս, որ Բագրատունու հրատարակութիւնը Զօհրապեանի հրատարակութեան սոսկ վերաբաղադրութիւնը չէր։ Թէեւ Բագրատունին որեւէ նախարան կամ յիշատակարան չի կցել իր հրատարակութեանը, բայց նրա կատարած աշխատանքի էութիւնը չի վրիպել մասնագէտների ուշադրութիւնից։ Կարապետ Վրդ. Տէր Մկրտչեանը, որը հետագայում Աստուածաշնչի բնագրական հարցերով էր զբաղւում էջմիածնում, գտնում էր, որ Բագրատունին, իրեն հիմք բնդունելով Զօհրապեանի հրատարակութիւնը, վերջինիս յուանցներում գտնուող տարբերութիւններից եւ Մխիթար Սեբաստացու հրատարակութեան դիտողութիւնների հիման վրայ որոշ ուղղումներ էր կատարել, իսկ Եօթնասնից յունարէն բնագրից օգտուել էր իմաստը ճշդելու, նախադասութիւնները ընթերցումները որոշելու եւ կէտադրութեան համար. Կարապետ Վարդապետի զնահատ-

ժամը՝ Բաղրատունին «սուաջինն է եղել, որ բուն գիտական եղանակով ձեռքի տակ եղած օրինակներից մի ընդհանուր բնագիր է կաղմել, և իւր ընդարձակ բմբռնման ու հայերէնի մեծ հմտութեան շնորհիւ յաջողել է առհասարակ ուղիղը դանել»⁹⁶ :

Պարզ է, որ Զօհրապեանի և Բաղրատունու այս հրատարակութիւններից յետոյ Ոսկանեան բնագիրը վերջնականապէս դուրս եկաւ շրջանառութիւնից : Ե դարի մեր թարգմանութեան բնագիրը լոյս աշխարհ գալով՝ յաղթականօրէն մուտք գործեց գիտութեան բնագաւառում, առաքելայ դարձաւ բանասիրական բաղձապիտի ուսումնասիրութիւնների, ուսումնասիրութիւնների, որոնց համար յուսալի արդիւնքներ չէր կարողացել ապահովել Ոսկանեան հրատարակութիւնը. վկայ՝ նոյնիսկ միայն այն թիւրիմացութիւնը, որին զոհ էր գնացել Լակրոզը՝ Յովհաննու Ա թղթի յայտնի հատուածի հարցում, ինչպէս նշեցինք վերելում :

Է. ԻՆՁ Է ՄՆՈՒՄ ԱՆԵԼՈՒ՝ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲՆԱԳԱՒԱՌՈՒՄ

Հայ դասական բնագրի վերականգնման ուղու վրայ, ի հարկէ, վերջնական հանգրուաններ չեն նաեւ Զօհրապեանի և նրանից բխող՝ Բաղրատունու հրատարակութիւնները : Բանասէրների կողմից պատահական և մասնակի աւելումներով յաճախ է նշուել, որ ձեռագրերում գոյութիւն ունեն բնագրական աւելի հին և աւելի ճիշդ ընթերցումներ : Ներկայ յօդուածի նախորդ էջերում, ժ. Գ. դարի ձեռագրերի հիման վրայ, մի քանի տեղ մենք եւս առիթ ունեցանք աւելցնել իւրօրինակ նշելու, որ Զօհրապեանի հրատարակած բնագրի որոշ մասեր սրբագրութեան են կարօտում. օրինակ՝ Բ թագ. Գ. 33. «Միթէ որպէս մեռանիցի անգամ, մեռաւ Արեւներ» նախադասութիւնը, որը, Զօհրապեանի օգտագործած բոլոր ձեռագրերի համաձայն, բնագրի մէջ է գտնուում, հին ձեռագրերում արտաբնագրային ընթերցում է, լուսանցագրութիւն է. կամ թէ՛ Սաղմ. ԿԳ. 7 տան մէջ Զօհրապեանի հրատարակած բնագրի «պատրաստեցան» բառը, որը նրա օգտագործած ձեռագրերի միակ ընթերցումն է, հին ձեռագրերում «պարտասեցան» է : Եւ հին ձեռագրերի հիման վրայ առաջացող այս ճշգրտմանն արդարանում են յունական բնագրի համեմատութիւններով :

Անտարակոյս Զօհրապեանի հրատարակած բնագրի նմանօրինակ թեթիւթիւններ լոկ արդիւնք են այն իրողութեան, որ նա, դժբախտաբար, ձեռքի տակ չի ունեցել հին և ընտիր օրինակներ : Ինչպէս նշեցինք՝ նրա օգտագործած ձեռագրերի մէջ հնարոյնը, որի վրայ և յենուել է, 1319 թուականից էր : Ուստի և հասկանալի է, որ հայկական բնագրի վերականգնման դործում բանասիրութեանը դեռ մնում են անելիքներ, և այդ գործը գերազանցապէս կապւած է հին և ընտիր ձեռագրերի ուսումնասիրութեան հետ :

Յայտնի է, որ այսօր աշխարհի գլխաւոր մատենադարաններում՝ Երեւանում, Երուսաղէմում, Վենետիկում, Վիեննայում, Փարիզում, Բեռլինում, Հոռոմում, Լոնդոնում, Օքսֆորդում և այլուր, որտեղ հայերէն ձեռագրեր են պահուում, ինչպէս նաեւ մասնաւորների մօտ, գտնուում են Հին և Նոր Կտակարանների ամբողջական և մասնակի (Սաղմոսարաններ, Աւետարաններ, առաքելական թղթեր և այլն) օրինակներ, որոնց թիւը, զանազան դր-

⁹⁶ Կարապետ վրդ. Տէր Մկր չեան, «Աստուածաշունչի նոր հրատարակութիւնը», էջ 1076 - 1077 :

չազիր ժողովածուներում պահպանուած բեկորների հետ միասին, հազարների է հասնում: Յոթ կարևոր խնդիր է աշխարհով մէկ ցրուած այդ ձեռագրերի մէջ որոնումն ու որոշումը այն հնագոյն ու լուսագոյն օրինակների, որոնց միջոցով հնարարը կը լինի երեւան բերել հայկական թարգմանութեան բուն՝ Սահակ-Մեսրոպեան բնագրական նկարագիրը, որը որոշ չափով եղծուել ու աղաւղուել է դարերի ընթացքում ընդօրինակութիւնների միջոցով:

Այդպիսի հին եւ ընտիր գրչագրերից մի քանիսն արդէն վաղուց է, որ աղաղութիւն են գրուել: Այդպիսիների շարքում համբաւաւոր է Մոսկուայի Լազարեան ձեմարանի մագաղաթեայ երկաթագիր Աւետարանը, որը գրուած է 887 թ. եւ այժմ գտնուում է Երեւանում⁹⁷: Մեծ է այս ձեռագրի գիտական նշանակութիւնը: Ժամանակին Մսեր Մսերեանցը հրատարակել է համեմատական մի փոքր ցուցակը բնագրական այն տարբերութիւնների, որ այս գրչագիրը ներկայացնում է Ամատերդամի 1698 թ. եւ Վենետիկի 1805 թ. տպագրութիւնների նկատմամբ⁹⁸. բայց նա կազմած ունէր նաեւ այդ ձեռագրի ամբողջական համեմատութիւնը, որը մնում է անտիպ, այսպիսի վերնագրով. «Համեմատութիւն Աւետարանաց, այն է՝ տպագրելոցն յԱմատերդամ յամին 1698 եւ ի Վենետիկ յամին 1805, ընդ գրչագրին վաղափարելոյ ի թուին Հայոց ՅԼԶ»⁹⁹: Հետագայում Միհրան Յովհաննէսեանի հրատարակած տեղեկութիւնների համաձայն Երուսաղէմի մատենադարանի մագաղաթեայ երկաթագիր Աւետարանը պիտի աւելի հին լինէր, քան Լազարեան ձեմարանինը, նրա գրութեան տարի համարելով 602 թուականը¹⁰⁰. բայց Մեսրոպ Վրդ. Տէր Մովսիսեանը համարել է, որ այս գրչագիրը է «ամենայն հաւանականութեամբ աւելի հին քան Լազարեան ձեմարանի ձեռագիրը, թէեւ դժուարանում ենք դարբնորոշելու»¹⁰¹: Անտոնեան միարանութեան Օրթագիրդի (Կ. Պոլիս) մատենադարանի մագաղաթեայ հին Աւետարանը ըստ ոմանց, եւ հաւանաբար, գրուած է 716 թ., ուստի եւ սա եւս աւելի հին է համարուել, քան Լազարեան ձեմարանինը¹⁰²: Իսկ Ն. Աղոնցի քննութիւնները կարծես հաստատում են, որ Մլքէթագուհու յայտնի Աւետարանը, որը գտնուում է Վենետիկում, 25 տարով աւելի հին է, քան Լազարեան ձեմարանի Աւետարանը՝ գրուած լինելով 862 թ.¹⁰³:

⁹⁷ Տե՛ս նրա Լուսատիպ հրատարակութիւնը. «Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց, գրեալ յամի ՅԼԶ թ. Հայոց եւ յամի տեառն 887: Լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան ձեմարանի Արեւելեան Լեզուաց: Արդեամբք պատուոյ հոգաբարձու ձեմարանի» իշխան Սիմէօնի Արամէլիք-Լազարեան: Մոսկուա, ՌՅԻԸ = 1899:

⁹⁸ Մ. Մսերեանց, «Հանգամանաց հնագոյն գրչագիր Աւետարանին» որ գտանի ի Մատենադարանի Լազարեան ձեմարանի», Փարիս, տետր ե, 1876, էջ 28-39:

⁹⁹ Հմմտ. անդ, էջ 39: Մեզ յայտնի է, թէ այժմ ուր է գտնուում Մ. Մսերեանցի այս թանկարժէք երկը:

¹⁰⁰ Մ. Յովհաննէսեան, «Հնագոյն Աւետարան», Բիւրակն, 1900, № 30, էջ 459: Նոյն, «Հնագոյն գրչագիր Աւետարան», անդ, № 38, էջ 595-597: Նոյն, «Հնագոյն հայ գրչագիր», Բաղասէր, 1900, էջ 117-118:

¹⁰¹ Մեսրոպ վրդ. Տէր-Մովսիսեան, «Հնագոյն Աւետարան Երուսաղէմայ Հայոց Ս. Յակոբայ վանուց», Բազմավէպ, 1908, էջ 103-109:

¹⁰² Ոկսնակ բանասէր, «Օրթագիրդի Անտոնեան միարանութեան հինաւորց մագաղաթեայ Աւետարան», Բազմավէպ, 1897, էջ 497-499: Մ. Հ. Սէքեան, «Անցք որ անցին ընդ հինաւորց մագաղաթեայ Աւետարանն Անտոնեան հարց», Բազմավէպ, 1901, Օգոստ. 1-ի յաւելում, էջ 13-15:

¹⁰³ Ն. Աղոնց, «Մլքէթի Աւետարանի գրութեան տարին», Սիոն, 1936, էջ 274-5:

Հ. Բ. Սարգիսեանը Մլխի Աւետարանի գրչութեան ժամանակը դնում է 851-922 թուականների միջև¹⁰⁴ :

Յիշեալ ձեռագրերի գրչութեան ժամանակի մասին յայտնուած կարծիքները դուրսէ եւ որոշ առարկութիւնների ենթակայ լինեն, բայց Լազարեան Աւետարանն ունի անառարկելի թուագրութիւն, ուստի և Գարեգին կթղ. Յովսէփեանը նրա մասին գրել է. «Այս Աւետարանը թուականով մեղանում մինչեւ այժմ յայտնի ամենահին ձեռագիրն է»¹⁰⁵ :

Սակայն մի կողմ թողնելով Հնութեան ախոյեանութեան իրաւունքը՝ նշենք որ այսօր դոյութիւն ունեն հին ու ընտիր գրչութեամբ և բնագրական տեսակէտից արժէքաւոր ձեռագրեր, որոնց մասին կարելի է մի ընդհանուր դադարաւար կազմել՝ Երեւանի, Երուսաղէմի, Վենետիկի և Վիեննայի յայտնի մատենադարանների տուեալների հիման վրայ :

Նախ նշենք Աստուածաշնչի՝ ԺԳ և ԺԴ դարերի մի շարք ամբողջական օրինակներ, նկատի ունենալով, որ այժմ աւելի Հնորը յայտնի չեն : Երեւանի Հնագոյն օրինակը՝ № 194 ձեռագիրը 1207 թուականից է. դրանից յետոյ Հերթականօրէն դալիս են № 178 (1253-55 թթ.), № 4243 (1263-66 թթ.), № 142 (1269 թ.), № 345 (1270 թ.), № 1500 (1282ից առաջ), № 195 (1284-88 թթ.), № 177 (1292 թ.), № 179 (1292 թ.), № 180 (1295 թ.), № 181 (1295 թ.), № 182 (1303 թ.), № 183 (1308 թ.), № 6230 (1314 թ.), № 353 (1317 թ.), № 206 (1318 թ.), № 2627 (1338 թ.), № 2705 (1368 թ.), № 352 (1367-71 թթ.), № 4113 (1384 թ.), № 346 (1390-1400 թթ.), № 184 (1400-01 թթ.), № 354 (ԺԴ դ.) և № 6569 (ԺԴ դ.) : Վենետիկն ունի միայն երեք ձեռագիր՝ № 1 (1319 թ.), № 12 (1332 թ.) և № 8 (1341-55 թթ.) : Միայն երկու ձեռագիր է մեկ յայտնի Երուսաղէմից՝ № 146 (1214 թ., թերի) և № 153 (1323 թ.). և երկու ձեռագիր էլ Վիեննայից՝ № 71 (ԺԳ-ԺԴ դդ.) և № 55 (1368-75 թթ.) :

Աւետարանի ձեռագիր օրինակները թէ՛ գրչութեամբ աւելի հին են և թէ՛ թուով շատ, քան Աստուածաշնչի ամբողջական օրինակները : Որպէս Թ-ԺԱ դարերից հասած օրինակներ՝ կը նշենք Հետեւեալները : Երեւանի Հնագոյն օրինակը, գրուած 887 թ., նախկին Լազարեան ձեռարանի Աւետարանն է, որն այժմ կրում է 6200 թուահամարը. այնուհետեւ ունենք՝ № 10110 (Թ/Ժ դդ.), № 6384 (902 թ.), № 7737 (965 թ.), № 7735 (986 թ.), № 2374 (989 թ.)¹⁰⁶, № 7739 (1001 թ.), № 4804 (1018 թ.), № 283 (1033 թ.), № 6201 (1038 թ.), № 3723 (1045 թ.), № 3793 (1053 թ.), № 3784 (1057 թ.), № 311 (1066 թ.), № 10434 (1069 թ.)¹⁰⁷, № 275 (1071-78 թթ.) և № 288 (1099 թ.) : Վենետիկի

¹⁰⁴ Հ. Բարսեղ Սարգիսեան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանցի վիենետիկ», հտ. Ա, Վիենետիկ, 1914, էջ 373-392 :

¹⁰⁵ Գաբեգին կթղ. Յովսէփեան, «Յիշատակարանք ձեռագրաց», հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 86 :

¹⁰⁶ Այս ձեռագիրը, որը նախկինում 229 թուահամարն էր կրում, գրականութեան մէջ յայտնի է լէ՛միածնի Աւետարանն անունով, ունի փոսկերայ կազմ : Ֆ. Մակլէրը 1910 է ընծայել նրա լուսատիպ հրատարակութիւնը՝ "L'Evangile Arménien. Edition phototypique du manuscrit 229 de la Bibliothèque d'Etchmiadzin, publiée sous les auspices de M. Léon Mantacheff, Paris, P. Geuthner, 1920" :

¹⁰⁷ Այս ձեռագրի յիշատակագրութիւններում գտնում ենք Անանիա Նարեկացի և Անանիա Վարադացի անունները : Ա. Վարադացին 1069 թուականին ձեռագիրն ընդօրինակել տուողն է, որն իր անձի մասին խօսում է համեստ որակումներով. իսկ Ա. Նարեկացին յիշատակում է երբորդ զէմքով և գովասանական որակումներով : Ուրեմն՝ նրանք տարբեր անձնաւորութիւններ են :

Հնադոյն օրինակը Մլքէ Թադուհու վերոյիշեալ Աւետարանն է, որը գրուած է համարուած 851-922 թթ. միջեւ եւ կրուած է 86 թուահամարը. գրանից յետոյ ժամանակագրական կարգով դալիս են՝ № 103 (Թ/Ժ դ.դ.), № 123 (նոյնպէս), № 116 (1007 թ.), № 108 (Ժ դ.), № 102 (ԺԱ դ.), № 106 (նոյնպէս) եւ № 159 (նոյնպէս): Երուսաղէմի մատենադարանից որպէս Հնադոյն օրինակներ մեզ յայտնի են № 2562 (Թ/Ժ դ.դ.), № 2555 (Ժ դ.) եւ № 3624 (1041 թ.): Իսկ Վիեննայի մատենադարանն ունի ԺԱ/ԺԲ դարերի գրչութիւն համարուող երկու Աւետարաններ՝ №№ 608 եւ 1031:

Թէ՛ ամբողջական Աստուածաշնչերի եւ թէ՛ Աւետարանների մէջ կան նաեւ հետադայ դարերի մի շարք ընդօրինակութիւններ, որոնք նոյնպէս Հին եւ ընտիր նախադադարներ են ունեցել: Այդպիսիներից է եղել, օրինակ, Մնկղիւրիայի Կարմիր վանքի № 45 ձեռագիր Աստուածաշունչը, որի նախադասութեամբ օրինակը 986 թուականից էր:

Աստուածաշնչի տարրեր մասերի Հին ընդօրինակութիւնների նմուշներից են նաեւ Երեւանի ձեռ. № 3845՝ Պօղոս առաքեալի Բղթերը (1173 թ.), Երուսաղէմի ձեռ. № 326՝ Յայտնութեան գիրք (1199-1202 թթ.), Փարիզի Աղլային Մատենադարանի հայ. ձեռ. № 27՝ Նոր Կտակարան՝ առանց Աւետարանների (ԺԲ դ.), և այլն: Կան նաեւ աւելի Հին գրչութիւն ունեցող Սաղմոսարաններ:

Պարզ է, որ, ձեռքի տակ ունենալով ձեռագրական այսպիսի հարուստ ժառանգութիւն, հայ րանասիրութիւնն այսօր հայկական Թարգմանութեան բնագիրը վերականգնելու համար լայն հնարաւորութիւններ ունի շարունակելու եւ աւարտին հասցնելու այն գործը, որ սկսել էր Զօհրապեանը: Եւ իրօք, առաջագոյն է, որ արտայայտուած էր անցեալ դարի վերջերին Էջմիածնի վանքում, Աստուածաշնչի քննական նոր բնագիր պատրաստելու աշխատանքներով: Աստուածաշնչի ձեռագրերի մեծագոյն եւ Հնադոյն մասը կենտրոնացած էր Էջմիածնի Մատենադարանում (այժմեան Երեւանի Պետ. Մատենադարան), ուստի եւ պատահական չէր, որ այդ նպատակի իրացմանը որոշել էին ձեռնամուխ լինել Էջմիածնի միաբանութեան գիտնական անդամները: Դեռեւս 1890-ական թուականներին կառարուող նախապատրաստական աշխատանքնե-

Ըստ երեւթիւնի՝ նրանցից առաջինը սոյն ձեռագրին նախադադարի ծառայած օրինակի ստացողն է եղել և հաւանաբար Ժ դարի մատենագիր Ա. Նաբեկացին է, Գրիգոր Նարեկացու հարադատներից և նրա ուսուցիչը (տես առաջ, հտ. Ա, էջ 721-730): Նրան վերաբերող յիշատակագրութիւնն է՝ Անանիայի Նաբեկացւոյ աստուածազան հոտորի և հզաւր վարդապետի է սուրբ Աւետարանս այս եւն. (էջ 25ր):

Երկրորդը՝ Ան. Վարազագին, 1169 թ. ընդօրինակուած սոյն ձեռագրի ստացողն է, ինչպէս պարզ երեւում է նրա յիշատակարանից. «Ի ՇԺԸ Թուարերութեանս Հայոց եւ՝ Անանիայ Վարազագի, նուազս ի կրօնաւորս եւ տրուպ եւ կրտսեր ի գիտնաւորս, ... ետու գրել զսուրբ Աւետարանս՝ Յովհանէսի գրչի և ստացայ զսա յիմոց արդար և [իր]աւացի արդեանց, զոր ի վեր համարիմ քան զամենայն աշխարհ ... մանաւանդ վասն [ստուգութեան] սորին և ընտրութեան բանից Աւետարանի և անհատի և ամենայն արուեստի, որ է վկայեալ աւրինակն յամենայն գիտնականաց Հայոց, զոր ասէին յաւանդութենէ՝ գրեալ ձեռամբ սրբոյն Մատթոյի վարդապետի և Թարգմանչի. և իմ այսմ ամենայնի հասու եղեալ և տեղեկացեալ վասն լաւութեան սորա, զոր ոչ արժէ աշխարհ զփորրիկս զայս, որ է մեծ և պատուական ի սրտի իմում և ամենայն գիտնականաց եւն. (էջ 28ր-287ա):

Այս յիշատակարանը միաժամանակ կրում է սոյն օրինակի հնութեան կնիքը:

րի մասին արձագանքում էր մամուլը¹⁰⁸։ Եղիա Վրդ. Հասան-Ջալալեանցը էջ-
միածնի Մատենադարանում Աստուածաշնչի ձեռագրերի համեմատութեան աշ-
խատանքներ էր կատարում¹⁰⁹։ 1900-ական թուականներին այդ աշխատանք-
ներն ստացել էին նոր թափ։ 1902 թ. Խրիմեան Հայրիկը Կարապետ Վրդ. Տէր
Մկրտչեանին պաշտօն էր յանձնել՝ Էջմիածնի ձեռագրանի ուսումնաւարտ եւ ու-
սանող սաների զործակցութեամբ հրատարակութեան պատրաստել Աստուա-
ծաշնչի բնագիրը՝ ձեռագրերի համեմատութեան հիման վրայ¹¹⁰։ Չղայի աշ-
խատանքներ էին կատարուել։ Մատենադարանի մի քանի տասնեակ ձեռագիր
Աստուածաշնչերն իրար հետ համեմատելուց յետոյ կանգ էին առել հիմնական
8 օրինակները վրայ՝ երկրորդական կարգի օգտագործման վերապահելով միւս
օրինակները. դրանց հետ միասին օգտագործում էին նաեւ Աստուածաշնչի ա-
ռանձին դրքերի (Աւետարաններ, Առակաց գիրք, Սաղմոսներ եւ այլն) բնո-
րինակութիւններ, որոնք յաճախ աւելի հին եւ աւելի ընտիր օրինակներ էն
հանդիսանում, ինչպէս Ճաշոցի նոյնպիսի օրինակներ, որոնք Հին եւ Նոր Կր-
տականներէց պարունակում են բազմաթիւ հատուածներ։ Ձեռագրական
տարբերակները բնորոշեան համար օգտագործում էին նաեւ յունարէն Եօ-
թանանից բնագիրը եւ երբայականը, վերջինս, ըստ երևոյթին, հետեւողու-
թեամբ Աստուածաշնչի՝ Կ. Պոլսի 1895 թ. հրատարակութեան, որ նշանակ-
ւած էն երբայական բնագրի բոլոր կարեւոր տարբերութիւնները։ «Բուն օրի-
նակը կազմելու համար, — գրում էր Կարապետ վարդապետը, — մենք վերցրել ենք
Կ. Պոլսի վերջին տպագրութիւնը եւ աչքի առաջ ունենալով՝ մի կողմից ձեռա-
գիրների տարբերութիւններն ամփոփող տետրակը եւ միւս կողմից երբայակե-
րէնի բնագիրն ու յունարէն Եօթանանից թարգմանութիւնը, սրբադրում ենք՝
տպագրի մէջ՝ զնելով այն ընթերցումը, որ ամենաուղիղն է երևում ձեռա-
գիրների մէջ՝ նոցա համեմատական արժէքին եւ բնագրի իմաստին նուաճ-
իսկ իրբեւ տարբերութիւն նշանակում ենք միայն այնպիսիները, որոնք պարզ
սխալ կամ թիւրիմացութիւն չեն եւ արժէք կարող են ունենալ կամ իմաստի,
կամ հայերէն լեզուի տեսակէտից»։ Այնուհետեւ Կարապետ վարդապետն աւե-
լացնում էր. «Իմաստը ճշգրիտ համար մենք նախապատուութիւն տալիս ենք
այն ընթերցումներին, որոնք բնագրին աւելի մօտ են՝ չանելով ի հարկէ ո՛չ
մի սրբադրութիւն, նոյնիսկ ակներեւ սխալների համար, եթէ դո՛ւք մի ձեռագ-
րի վկայութիւնը չունենանք։ Նախկին հրատարակութիւնների մի կարեւոր թե-
րութիւնը հէնց այն է, որ բնագիրն ի նկատի չունենալով եւ միայն յունարէնի
հետ համեմատելով՝ շատ անդամ բնորոշ են այնպիսի ընթերցումներ, որ յու-
նարէնին աւելի մօտ են, բայց նախնականը չեն, այլ ձեռագիրների մէջ սրբ-
ադրումը՝ յունարէն իմացողների ձեռքով»։

Այս հիանալի նախաձեռնութեան արդիւնքն այն եղաւ, որ 1903 թ.
սկզբներին Էջմիածնի տպարանից լոյս ընծայուեց, որպէս նմուշ, Աստուածա-
շնչի քննական բնագրի առաջին պրակը՝ 1 տպագրական մամուլ ծաւալով կամ
16 էջ, որին առանձին կցուած էր նաեւ ձեռագրական տարբերութեան
ցուցակը։ Այդ նմուշը քննարկման համար ուղարկուած էր մի շարք մասնա-
դէտների, որոնցից յայտնի բանասէր Հ. Կարապետ Տէր Սահակեանը¹¹¹ եւ դր-

¹⁰⁸ Հայրենիք, 1894, Մարտի 26, № 705։

¹⁰⁹ Արարտ, 1896, էջ 312, ծան.

¹¹⁰ Այս շրջանի աշխատանքների մասին տե՛ս Կարապետ վրդ. Տէր Մկրտչեանի տեղեկատուութիւնը, Արարտ, 1902, էջ 474-477 եւ 1079-1088։

¹¹¹ Բազմավէպ, 1903, էջ 343-349։

բարարազէն Գալսիս Գուրգէն¹¹² օգտակար դիտողութիւններով ու թելադրանքներով հանդէս էին եկել մամուլում: Դժբախտաբար փորձնական պրակտիկ տեսանկյունից յետոյ այդ աշխատանքները դադարեցին, յայտնի չէ, թէ ի՞նչ պատճառներով. եւ այսօր աւելի քան 60 տարի է, որ լուռ թիւն է տիրում այդ մասին: Նոյնիսկ յայտնի չէ, թէ կատարուած աշխատանքերի անտիպ նիւթերը ո՛ւր են գտնուում այսօր¹¹³: Եւ սակայն՝ Հայկական Աստուածաշնչի բնագրի քննական հրատարակութեան խնդիրը հայ բանասիրութեան համար մնում է օրակարգի կարեւորագոյն խնդիր: Վրացական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիան, ակադեմիկոս Ա. Շանիձէի գլխավորութեամբ, վաղուց է ձեռնամուխ եղել հրատարակելու Աստուածաշնչի վրացերէն թարգմանութեան քննական բրնագիրը՝ որպէս վրացերէն լեզուի դասական չրջանի արտագրութիւն, եւ Հին ու Նոր Կտակարանների մի շարք զրբեր արդէն լոյս են տեսել: Հայկական բրնագիրը՝ դասական այն բնագիրը, որը լոյս աշխարհ եկաւ Ե դարում մեր անմահ թարգմանիչների անգույ ջանքերով եւ հանդիսանում է հայ ոսկեդարեան լեզուի թանկագին կոթողը, նոյնպէս արժանի է հրատարակ գալու իր հարազատ՝ անեղծ ու անաղարտ դիմագծով. եւ, աղատուելով դարերի ընթացքում կրած խաթարումներից ու դրչադրական աղաւաղումներից, սեփականութիւնը դառնալու գիտութեան: Հայկական բնագրի արժանիքը կայանում է ոչ թէ լույս տեսնում, որ հայ դասական լեզուի հարստութիւնների շտեմարանն է հանդիսանում եւ ունի ազդային մշակոյթի առումով խոշոր նշանակութիւն, այլև ներբանում, որ համաշխարհային մշակոյթի ուսումնասիրութեան համար ունի նոյնպէս խոշոր նշանակութիւն, որպէս մի թարգմանութիւն, որն անսահման հնարաւորութիւններ է պարունակում իր հերթին օգնելու վերականգնմանը յունարէն այն բնագրերի, որոնցից թարգմանուած է եւ որոնց բնագրական ներկարգիրը տուժել է դարերի ընթացքում: Այս վերջին առումով էլ արդէն վաղուց է, որ հայկական թարգմանութիւնը գրաւել էր բանասիրական աշխարհի ու չադրութիւնը:

Ժէ դարի վերջերին Սորբոնի դոկտորներից Պիլը գտնում էր, որ հայկական թարգմանութիւնը մեծ ծառայութիւն կը մատուցանի յունարէն բնագրերը վերականգնելու¹¹⁴: Նոյն կարծիքին էր եւ Լակրոպը¹¹⁵: Հայկական բրնագրի տարբերակներն օգտագործելու փորձեր են կատարել Վիլֆրուան (1775 թ.), Գրիսարիսը (1796 թ.), Հոլմեսը (1798 թ.) եւ հետագայում ուրիշներ¹¹⁶: Պ. Ս. Լուրգէն 1780-90-ական թուականներին հայկական բնագիրը լատիներէնի էր թարգմանում՝ նպատակ ունենալով այն հրատարակել Վալտոնի յայտնի բարգմանական Աստուածաշնչի մէջ. այս աշխատանքը, որ հեղինակի մահամբ կիսատ է մնացել՝ ընդգրկելով միայն Մինդոց զրբից մինչեւ Մակարա-

¹¹² Բիւզանդիոն, 1963, Մարտի 18, № 1963:

¹¹³ Երևանի Պետ. Մատենադարանի գիւանական բաժնում մեր կատարած որոնումներն ազարդին փոստին: Դուցէ այդ նիւթերը լինեն Կաթողիկոսական գիւանում, որն այժմ գտնուում է ՍՍՀ Պետական Արխիւում:

¹¹⁴ Հմմտ. Aug. Calmet, "Dictionnaire ... de la Bible", t. I, Petit-Montrouge, 1846, p. 871. Հ. Գ. Զարբնապետի, Մատենադարան..., էջ 241:

¹¹⁵ Հմմտ. "Mosis Chorenensis Historiae Armeniacae, libri III", p. IX-X.

¹¹⁶ Հմմտ. Գ. Ա. Շուսլիպ - Հ. Գ. Զարբնապետի, Մատենադարան..., վեհերի, 1895, էջ 91: Հ. Գ. Զարբնապետի, Մատենադարան..., էջ 244: Բազմապէս, 1900, էջ 296, 340:

յնցւոյն Բ գիրքն ընկած մասերը, այժմ պահուած է Միւնխենում¹¹⁷։ Եղել են նըմանօրինակ ուրիշ ձեռնարկումներ եւս, բայց հայկական բնագրի լատիներէն մի ամբողջական թարգմանութիւն, որը զեռ մնում է անտիպ, կատարել է վենետիկեան Միխիթարեան Հ. Եղիա Թոմասնեանը¹¹⁸։ Այդպիսի մի աշխատութեան հրատարակութիւնը, կասկած չկայ, որ մեծ ծառայութիւն կը մատուցանէր բանասիրութեանը՝ վեր հանելով հայկական բնագրի գիտական անփնտրածանիքները։

Այնուամենայնիւ, ինչպէս ասացինք, հայկական թարգմանութեան դասական բնագրի վերականգնման խնդիրը կանգնած է առաջին դժի մրտ։ Եւ մնում է հրամայական պահանջ, որի իրագործման համար մեր օրերում կան աւելի շատ հնարասիրութիւններ, քան կային մեր դարի սկիզբներին։ Դրա մասին մեր մասնագէտները պիտի մտածեն թէ՛ յօդուտ հայրենի գիտութեան եւ թէ՛ ի շահ ոչ միայն հայ-յուսկական, այլեւ հայ-սօսորական եւ հայ-վրացական մշակութային հնօրեայ կապերի ճիշդ լուսարանման, կապեր, որոնց անխարդախ վկան է հանդիսանալու Սահակ-Մեսրոպեան վերականգնուած բնագիրն իր գիտական կերպարանքով։

Հայագիտութեան հերթական խնդիրներից մէկը պէտք է լինի Աստուածաշունչ մատեանի հայ դասական բնագրի վերջնական վերականգնումը։

Յ. Ս. ԱՆՍՅԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

¹¹⁷ Հմմտ. Հ. Գ. Գալեմիսեան, «Յուդայի հայերէն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխենում», Վիեննա, 1892, ձեռ. № № 19 և 20։

¹¹⁸ Հմմտ. Հ. Գ. Զարբնանալեւն, «Մատենադարան ...», էջ 244։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ ՏԱՐՈՆՈՅ

Հայ մատենագրութեան ուրոյն ու արժէքաւոր ստեղծագործութիւններէն է «Պատմութիւն Տարօնոյ» երկը:

Նրա առաջին տպագրութիւնն իրագործուել է երախտաշատ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի միջոցով 1719 թ., Կ. Պոլսում¹:

Ինչպէս յայտնի է, այս տարի Հանդիսաւորապէս նշուելու է նրա ծրնընդեան 300-ամեակը, նկատի ունենալով իր ծանրակշիւ ծառայութիւնները եկեղեցական, կաղամկերպչական, բարենորոգչական, վարչա-տնտեսական, կրթական, մատենագրական, մշակութային եւ ազգային-հասարակական մարզերի մէջ հաւասարապէս: Ըստ որում՝ քիչ չեն նաեւ նրա ջանքերով ու նիւթական միջոցներով կատարուած հրատարակութիւնները ժամանակի այնքան ծանր պայմաններում: Յատուկ նշման արժանի է բնոյթով ու յօրինուած լով իւրապատուկ այս դրաւոր յուշարձանի վերոյիշեալ հրատարակութիւնը՝ իրրեւ առաջնեկի:

Հրատարակութեան պատճառն ու նպատակը բխում են ժամանակի ազգային-եկեղեցական կեանքի բարդ ու դժուարին իրավիճակի թելադրանքից: Թէ՛ Կ. Պոլսոյ, թէ՛ Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռում ու համար ստեղծուած էր եկեղեցա-կաղամկերպչական ու վարչա-տնտեսական խիստ բայթալուած կացութիւն: Յատկապէս Երուսաղէմի պարագային կար նաեւ Հայ եկեղեցիները, մանաւանդ Սրբոց Յակոբեանց մայրավանքը եւ տէրունական սրբատեղիները այլազգիների ու Յոյն եկեղեցականութեան յախուռն կռակոտ տոնձգութիւններից ու խորգաւանքներից զերծ պահելու պարտաւորիչ անհրաժեշտութիւնը: Տառապալին մտահոգութեան նիւթ էր հանուր Հայութեան ազդիտայի վիճակը ազգային, քաղաքական, տնտեսական, կրթական եւ հոգեւոր-մշակութային տեսակէտից առհասարակ: Հարկ էր, ըստ այսմ, հոգեւոր-կաղամկարական հիմք ու մղում տալ այս առնչութեամբ կաղամկերպչուած համաժողովրդական պայքարին՝ Հայ իրականութեան եկեղեցական եւ աշխարհիկ ոլորտներից ներս: Բանաւոր խօսքի հետ, անտարակոյս, օժանդակ հուժկու միջոց էր մանաւանդ դրաւոր խօսքը: Այս առիթով խելամիտ ու նպատակամէտ բնարութիւն կատարելով, յիշեալ պայքարի դրօշակիր ռազմիկան եւ ուսուցիչները դերակատար Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը որոշում է հրատարակութեան յանձնել «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» յիշեալ երկը, որն իր բովան-

¹ «Գիրք Պատմութեան Երկրին Տարօնոյ, որ կոչի Զննոր», Կ. Պոլս, 1719: Արք. Բեր հրատարակուած կան նաեւ՝ «Առ սուրբն Յովհաննէս՝ ժեճն ի մարգարէս, Պաղտատար պարտաւոր դպրի տապեալ», «Նորին՝ դարձեալ առ սուրբն Յովհաննէս», «Նորին յետնելոյ տապեալ առ սուրբն Գրիգորիոս Լուսաւորին Հայաստանեայց» (երեքն էլ՝ չափածոյ) եւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի՝ «Յիշատակարան պատմագրաբար» գործերը:

դակութեամբ, զազափարական ու նպատակային միտումով, յօրինուածքով, ժողովրդական-բանահիւսական բնոյթով, մատչելիութեամբ, լեզուա ռճական կառուցուածքով միանգամայն համապատասխան ու բաւարար էր եղած պահանջին: Ըստ հրատարակչի, որ ինքը՝ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքն է, «զորո՞ք պատմութեան է ծանուցանել զեղեալ իրն, որ փակի ընդ անցեալ ժամանակաւ: Եւ շահաւէտութիւն նորին այն է, զի զեղեալն ի վաղ ժամանակաց՝ կացուցանէ առաջի աչաց մերոց այնպէս, որպէս թէ այժմ իցէ եղեալ»²: Կանխենք ասելու, որ սոյն երկի բուն իսկ յօրինումը պայմանաւորուած էր նմանապէս Հայ Եկեղեցու կազմակերպչական-տնտեսական, հոգեւոր-ազգային պայքարը խրախուսելու հայրենասիրական յստակ դիտաւորութեամբ: Կրկնուող պատմական պահանջը նրա կրկին անգամ հրապարակ դալու առիթ է ստեղծում: Ուստի, այս նկատառումներով ձեռնարկուած սոյն հրատարակութեամբ պատմական անցեալը պէտք էր վկայակոչել, տեսնել, ապրել «որպէս թէ այժմ իցէ եղեալ»: Այստեղ իսկ է դրա շարժառիթը, նպատակն ու նշանակութիւնը:

Սակայն եւ այնպէս կարեւոր ու մեծ է սոյն հրատարակութեան մատենադրական, պատմական ու գիտական արժէքը: XVIII դարի սկիզբներին Հայ հասարակութեանը ներկայացուած է առնուազն մէկ հազարամեակ հնութիւն ունեցող բնագիր, որով այն ոչ միայն միանգամընդմիջ փրկուած էր կորսուելու վտանգից, այլեւ դրում էր լայն շրջանառութեան մէջ: Գիրքն ունի փոքրիկ առաջարան՝ «Բան սակաւուկ առ բարեմիտ ընթերցողսդ» եւ «Յիշատակարան տպողի»: Վերջինիս մէջ ի միջի այլոց որոշակի վկայուած է, թէ հրատարակութիւնը կատարուած է միաժամանակ «Արդեամբք եւ ծախիւք նորին հեղինակի՝ Տեառն Յօհաննիսի վերոյիշեալ բարունապետի»³: Ուրեմն, այն հիմնովին Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի երախտիքն է:

Իսկ ի՞նչ է ինքը՝ «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» բուն երկը:

Մեզ հասած հայերէն բազմադարեան բնագիրներից է եւ վաղուց է գրուել ընթերցողների ու մասնագէտ բանասէրների ուշադրութիւնը:

Աւանդական տեսակէտն հիմնականում այն է, թէ «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» սոյն երկը IV դարի ասորերէն շարադրանք է Զենոբ Գլակ անունով Ասորի մի վանական-վանահօր կողմից՝ Գրիգոր Լուսաւորչի իսկ հրահանգով: Հեղինակն իրեն ներկայացնում է ոչ միայն իրրեւ ականատես ու դէպքերին զործօն մասնակից, այլեւ՝ Գրիգոր Լուսաւորչի «բարտուղար»: Հայերէն է թարգմանուել VII դարում Յովհան Մամիկոնեան Եպիսկոպոսի միջոցով, որը առնթիւր յաւելեալ գլուխների հեղինակն է միաժամանակ:

Սակայն, պատմա-բանասիրական հետազայ հետազոտութիւնները, յանդելով ստոյգ պարզարանումների, միանգամայն քննական տարրեր եղրակացութիւն գոյացրին: Այս առնչութեամբ յիշատակութեան արժանի են առաւելապէս Գրիգոր Խալաթեանի, Մանուկ Արեղեանի եւ Աշոտ Արբաճամեանի ուսումնասիրութիւնները:

Առաջինը, կատարելով «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» երկի գերազանցապէս ազդիւրադիտական քննութիւնը, աներկբայ ցոյց է տալիս, որ հեղինակը օգտուել է մասնաւորաբար Աղաթանգեղոսի եւ Մովսէս Խորենացու Պատմութիւններից: Օրինակ.

² Նոյն տեղում, էջ Գ:

³ Նոյն տեղում, էջ 2Ը:

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ
ՏԱՐՈՆՈՅ»

Եւ ի կատարել երկրորդ ամին, մինչդեռ կամէր արշաւել Սոսրով ի Պարսիկս ի գարնանային ժամանակս, ի ժամ որոյն մեկուսի առեալ զՍոսրով Անակայ՝ որպէս թէ բան ինչ ունի առել, յանկարծակի զէնս ի վերայ յարուցեալ զԹագաւորն զԹաւայ կայսրացանէր: Եւ ինքեանք ջրասոյց եղևա կործանեցան իւրայօքն ամենեքումք, ոչ ժամանեալ ի Պարսիկս: Բայց Թագաւորն Պարսից զօր մահուն Սոսրովայ տն կարգեաց...

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ
ՏԱՐՈՆՈՅ»

Արդ, մինչ ի խաղաղութեան էր Սոսրով, այր մի որ կոչէր Բուրդար՝ ի նշանաւոր ազգէն Պարսից՝ ելեալ զկնի Անակայ, եւ եկեալ մինչեւ յԱրտաղ, եւ անտի ելեալ զնաց պանդխտել ի կողմանրս Գամբաց: Եւ եկեալ ի Կեսարիա, եւ առեալ իւր կին ի հաւատացիւց զմեծատան ուրեմն քոյր՝ անուն Եթաղէ, եւ քոն Սոփի: Եւ կացեալ ամ մի ի Կեսարիա, եւ դարձեալ առ զկինն իւր Բուրդարս այս, եւ զնաց ի Պարսիկս: Զորոյ զհետ մտեալ Եւթաղեայ, հասանէ ի գաւառին Այրարատեան, եւ դադարեալ և վաղարշապատ քաղաքի, մտանէր Սոփի՝ ստնտու մանկանն Գրիգորի, եւ իրրեւ զգայեակ համարձակ սնուցանէր զմեր Լուսաւորին:

Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս

«Պ ա տ մ ու ր ի ու ն»

Իսկ իրրեւ եկին հասին աւուրք ջերտո հարաւակողմն գարուն դրւանցն բանայոյ. . . ի միտ առ քաղաւորն. զամարտակ առնէր անդրէն արշաւել ի կողմանս Պարսից. . . տոնոյր (Պարթեւն) գրաւորն մեկուսի. . . Իւրոս ի պատճառս ինչ գրոսանաց, իրրու խորհուրդ ինչ խորհելոյ ընդ նմա. . . յանկարծ. . . զէնս մերայցուցեալ գրաւորն դիքաւալ կացուցեալ. . . իրրեւ յուս գայտ քաղաւորն Պարսից, զուարճանայր. . . տոն մեծ ուրախութեան առնէր զօրն զայն⁴:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

«Պ ա տ մ ու ր ի ու ն»

Այր ումն ի Պարսից ոչ ի փոքունց և յաննշանից, որում անուն էր Բուրդար, զնացեալ անտի եւ եկեալ ի կողմնաս Գամբաց, պանդխտեալ ի Կեսարիայ: Եւ առեալ կին ի հաւատացելոց, որում անուն Սոփի կոչէր, դարձաւ անդրէն գնալ յերկիրն Պարսից հանդերձ կնաւ իւրոյ, գորոյ զհետ հասեալ աներոյ Եւթաղեայ, համոզեալ արդելոյր: Որոյ հանդիպեալ ծննդեանն մերոյ Լուսաւորին ըստ պատահման մտանէ որոնտու մանկանն⁵:

4 Գ. Խալաբեամ, Զենոր Գլակ՝ համեմատական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1893, էջ 6-7:

5 Նոյն տեղում, էջ 8-9:

Որ «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» երկի հեղինակն է օգտուողը եւ ոչ՝ հակառակը, դա յստակ նկատելի է, որովհետեւ Ազաթանդեղոսի եւ Մովսէս Խորենացու համադրատախտան հաղորդումները «մի անընդհատ ամբողջութիւն են կազմում», մինչդեռ իր պատմածը «հատուկորէն է, պատառ-պատառ եւ նկատելի կերպով ամբողջութիւնից քաշած, հանած, մուրացածոյ կտորներ»⁶։ Ըստ Գ. Խալաթեանի, նա օգտուել է նաեւ Սերէոսի Պատմութիւնից⁷։

Նա գիտականօրէն միաժամանակ հասել է այն վաւերական եզրակացութեան, որ թէ՛ Զենոր Գլակին, թէ՛ Յովհան Մամիկոնեանին վերադրուած մատերի «յեզուն եւ ոճը, այլ եւ ուղղութիւնը, միասնակցութեամբ, հայեցակէտը եւ նպատակները նոյն եւ մի են... միեւնոյն հեղինակի գրչի, մտքի եւ նպատակի արդարեք», հետեւորար «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» աշխատութիւնը ամբողջութեամբ «էլ դարու մի Հայի կարկառանք համարելու է»⁸։

Սրանից յետոյ, եւ յատկապէս Գր. Խալաթեանի հետազոտութեան աւելցուցեալով Միհրան Յովհաննէսեանի Զանգերի ի զօրու չեղան հերքելու նրա հիմնաւոր եւ անարկալական փաստարկումները եւ ըստ մեծի մասին պաշտպանելու կամ վերականգնելու աւանդական տեսակէտը⁹։

Մանուկ Աբեղեանի հանգամանալից քննութիւնները աւելի պարզորոշ դարձրին խնդիրը եւ գիտական լուրջ փաստարկումներով հատուակեցին ու յրաշարհին Գր. Խալաթեանի եւ այլոց նման քննական տեսակէտները։ Դեռ աւելին։ Ըստ նրա, նոյնիսկ Յովհան Մամիկոնեանի հեղինակ լինելը հաւատարի է։ Ինչպէս յայտնի է վերջինիս թողած «Յիշատակարան»ից, նա իրեն համարում է VII դարում ապրած, ուստի եւ իր պատումները՝ ակնհայտաբար օտոյզ վկայութիւններ։ Մինչդեռ՝ «նա տուած է, թէ իր գիրքը գրել է ի ժամանակս Թադաւորութեանն Հերակլեայ (610-641 թթ.), եւ ի մահուն Խորսովու (590-628 թթ.), հրամանաւ Ներսիսի Հայոց կաթողիկոսի (կաթողիկոսացած ոչ վաղ քան 641 թ., վախճանուած 662 թ.) եւ յիշանութեան Մամիկոնեան Վահանայ, զոր մայրենեօք Կամսարական կոչեն»։ Այս Մամիկոնեան Վահան Կամսարականը, սակայն, մի տեղ (էջ 56 եւ հան) արդէն մեռած է եւ իր որդի Տիրանն է իշխում՝ յառաջ քան զգնայն Հերակլի ի Պարսիկս՝ եւ երբ Ներսէ Հերակլ եւ սպանանէ զԽորսով (590-628 թթ.)։ Ութ տարի յետոյ, ուրեմն 636 թուին, ըստ պանուտ է նոյնիսկ Վահանի որդի Տիրանը՝ Մահմէդի քնոորդի Արդաահիմի զէմ կոռելիս։ Մի ուրիշ տեղ, սակայն (էջ 36), ի թուականութեանն Հայոց հարիւր եւ երեսուն, (130+551=681 թուին) դեռ իշխում է նոյն Վահան Կամսարականը՝ Ներսէս Կաթողիկոսի հետ, որն այդ ժամանակ մեռած էր։ Այսպէս, իր ապրած՝ ժամանակի համար շիտթ տեղեկութիւն ունի գրողը, եւ շատ պարզ է, որ նա կարող է ապրած լինել ամենաօտար 8-րդ դարի սկիզբներում։

⁶ Նոյն տեղում, էջ 77։

Ա. Աբրահամեանը զանում է, որ «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» աշխատութեան «էջ Ազաթանդեղոսի ու Մովսէս Խորենացու Պատմութիւններից հանուած քաղուածները հետազայ ընդմիջարկութիւններ են, բայց, մեր կարծիքով, յարգելի պրոֆեսորը ընթերցողին համոզելու բաւարար փաստարկումներ չի ներկայացնում»։

Տե՛ս Եովհանն Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատութեամբ եւ առաջարկեալով պատմ. գիտութիւնների թեկնածու Աշ. Աբրահամեանի, Երեւան, 1941, էջ XXVII։

⁷ Գ. Խալաթեան, Նշուած աշխատութիւնը, էջ 7, 9։

⁸ Նոյն տեղում, էջ 78, 1։

⁹ Մ. Եովհաննիսեան, Զենոր Գլակի հանդէպ արդիական քննադատութեան, Կ. Պոլս, 1912։

Այդ երեւում է և դրբի նիւթից»¹⁰։ Պարզ ու մեկին եզրակացութիւն։ Ամբողջացնելով իր տեսակէտը, Մ. Արեղեանը եւս յայտնում է, որ «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» երկի երկու մասերի հեղինակը միեւնոյն անձն է, դիտում-նաւոր թաքնուած Զենոր Գլակ եւ Յովհան Մամիկոնեան զոյգ անունների տակ, որոնք իրր ժամանակակիցներ են նկարագրուող իրադարձութիւններին, ուստի և երկը ամբողջութեամբ ականատեսի շարադրանք է, ստոյգ ու վաւերական, թէեւ իրականում այն «Տ-րդ դարից ոչ վաղ զանազան աղբիւրներից քաղած տարբած մի պատմութիւն է»¹¹։

Այստ Արրահամեանը հիմնականում համերաչի է Գ. Խալաթեանի ու Մ. Արեղեանի հետ գլխաւոր հարցերում, սակայն, ունի իբր ակներեւ նկատառումները, որոնք երբեմն տարբեր եզրակացութիւնների են տարել նրան։

Ըստ նրա, «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» աշխատութիւնը «պատմական նիւթերի ժողովածու է», և «ոչ թէ մէկ կամ երկու հեղինակի գործ»¹²։ Այն մեզ հասել է թերի վիճակում, ոչ լրիւ, քանի որ, ինչպէս ճիշդ նկատում է, X դարի պատմիչ Ուխտանէսի օգտագործած ձեռագրի բնագիրը ունեցել է այլ նիւթեր եւս, որոնք առկայ բնագրերում պակասում են։ Բայց նաեւ հակառակըն է տեղի ունեցել։ Ինչպէս ցոյց է տալիս ձեռագրերի համեմատութիւնը, «Պատմութիւն դիտելոյ, զպատճառս Միծոան խաչին...» ու «Վասն Բաճւան Տիրանայ» գլուխները հետագայ ընդմիջարկութիւններ են, որովհետեւ բաղմամբիւ ձեռագրերում դրանք տեղ չեն գտած, ինչպէս, օրինակ, Մաշտոցեան Մատենադարանի ԹԹ. 1903, 2748, 6724, 2618 և այլ գրչագրերում¹³։

Ա. Արրահամեանի կարեւոր բացայայտումներից է նաեւ այն, որ «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» երկը մեզ է հասել մէկից աւելի խմբագրութիւններով, որոնք ունեն զգալի տարբերութիւններ, իսկ Թ. 1770 ձեռագրում պահպանուած բնագրի տարբերակը «նոր խմբագրութիւն է։ Տարբերութիւնն այնքան մեծ է, որ հնարաւոր չէր համեմատութեան մէջ օգտագործել»¹⁴։

Սակայն, մեզ թւում է, անհրաժեշտ հիմնաւորում չունեն Ա. Արրահամեանի պնդումներն այն մասին, թէ իրր Յովհան Մամիկոնեանը չի կեղծում իրեն, իր «Յիշատակարան»ում եղած «և թարգմանեալ ի նմանէն (Մարմարո կրօնաւոր... Փ. Ա.) ԻԸ պատճեան և Ժ ի դրի առ իս կայր, և բոլան զակեալ արարի ԻԸ պատճեան՝ ի մի գիրս...» վկայութիւնը ճշմարտացի է, ԹԼ «Յիշատակարան»ում նկատուած «անախրոնիզմ»ը հետագայ ընդմիջարկութեան արդիւնք է, որոչ «հնագոյն» նիւթերի աստիճանից թարգմանուած լինելը հաւանական է, եւայլն¹⁵։

«Պատմութիւն Երկրին Տարօնոյ» աշխատութեան ձեռագրերում պահպանուած բնագրական ու գրչագրական վիճակի մասին յստակ պատկերացում ունենալու համար շատ արժէքաւոր է 23 ձեռագրերի, որոնց պատմականօրէն նա 6 խմբի է բաժանում, իր տուած բանասիրական տեսութիւնը։ Բնական է, տուուել արժէքաւոր ներդրումն այն է, որ կազմել և հրատարակութեան է յանձնել նրա քննական բնագիրը¹⁶։

10 Մ. Արեղեան, Երկեր, Գ., Երեւան, 1968, էջ 448։

11 Նոյն տեղում, էջ 447։

12 Ա. Արրահամեան, Նշուած աշխատութիւնը, էջ XXV։

13 Նոյն տեղում, էջ XV, XVI, XVIII։

14 Նոյն տեղում, էջ XV։

15 Նոյն տեղում, էջ XXV, XXVII, XXVIII։

16 Նոյն տեղում, էջ XLXXI և սարմբեր բնագիրը։

Հատ որում, այն փաստը, որ Ձենոր Գլակը խոստովանում է, թէ ինքը ծանօթ է Ազաթանդեղոսի Պատմութեան եւ պարտաւորում է աւել, թէ ինքը աւելի վաղ է շարադրել իր երկը, կամ՝ յետոյ (միայն մի դէպքում)¹⁷, Ազաթանդեղոսի իսկ հետեւութեամբ իրեն յայտարարում է Գրիգոր Լուսաւորչի «քարտուղար» ու իրը նրա հրամանով է ձեռնարկել իր յիշեալ աշխատութեան, ինքնին լուստարանման չկարտող աղայոյց է այն բանի, որ ինքը, յամենայն դէպս, Ազաթանդեղոսից (V դարի կէսերին) յետոյ ապրած անձնաւորութիւն է։ Որպէսզի նրա գրածը կարենար շատ աւելի առասպելախառն ու զանազան անհաւատալի բանահիւսկան չափազանցութիւններով եւ անխորհրդով յայեցած լինել, քան էր Ազաթանդեղոսի պատմածը նոյնի մասին, անկասկած, պիտի բաւականին երկար ժամանակ անցնէր։ Այսքանը ինքնին աւանդական վերոյնշեալ տեսակէտի հերքումն իսկ է, ինչպէս ժամանակին արդէն նշուել է հայ բանասիրութեան մէջ։

Յովհան Մամիկոնեանի յիշատակութեան պարագային եւս տեսնք, թէ ինչ բնոյթի ինքնարդարելում կայ եւ թէ ինչպէս իր իսկ մասին գրածը ինչո՞ւ եւ ի՞նչ չափով լիովին ճշմարիտ լինել չի կարող։ Աւելացնենք նաեւ բանասէրների այն կարեւոր դիտողութիւնը, ըստ որի, թէ եւ Յովհան Մամիկոնեանին վերադրուած մասի բովանդակութիւնը ժամանակագրականօրէն հիմնականում վերաբերում է Սեբէոսի Պատմութեան մէջ նկարագրուած իրադարձութիւններին ու ապրած ժամանակահատուածին, սակայն նոյնպէս առատօրէն յեղյեղուած առասպելախառն վիպական բնոյթի զանազան տարրերով, դարձեալ անտարակուսելի կը մնայ այն, որ Յովհան Մամիկոնեանը իրօք կարող էր ապրած եւ իր այս բաժինը գրած լինել VII դարի կէսերից շատ ուշ, որպէսզի այդ օրերի իրադարձութիւնները ժողովրդի կողմից կարողանային ոչ ոք աստիճանի վիպականացուել։

Բանասիրութեան մէջ իրաւամբ աւելի շատ արժատեսցած է այն կարծիքը, թէ յիշեալ երկի երկու պայմանական մասերն էլ իրենց ոճական յօրինւածքով, ժողովրդական բանահիւստութեան ներքնկալմամբ, միասնամով, հոգեբանութեամբ ու լեզուական-խօսակցական ուսակարանութեամբ, ստեղծագործական նոյն հասարակաց գրոշմով պատկանում են միեւնոյն հեղինակին, որը մի դէպքում իրեն Ձենոր Գլակ, միւս դէպքում իրեն Յովհան Մամիկոնեան է ներկայանում, բայց եւ ոչ մէկն է յիշեալներից։ Ուստի, «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» աշխատութիւնը կարող էր գրուած լինել միայն VII դարի վերջին կամ, աւելի ստոյգ, VIII դարի սկզբներին Յովհան Մամիկոնեանի, լիբեւս եւ իրապէս առ այսօր անունով մեզ անյայտ մի անձնաւորութեան կողմից։ Այս ինքնաթողարկման եւ այլ անուաններին վերադրումներ տնվաւ ստիւրոյթը միակը չէ մեր եւ ոչ միայն մեր ժողովրդի մատենագրութեան պատմութեան մէջ։ Նման քայլի հիմնական մտահոգութիւնը եղել է համապատասխան երկի վաղեմութիւնը, վաւերականութիւնն ու հեղինակութիւնը ամբացնել։ Այս պարագային՝ նոյնպէս։

«Պատմութիւն Երկրին Տարօնոյ» երկը, հսկառակ իր դարաւոր վաղեմութեան, խորագրի թեւադրանքին եւ ընդդրեղած նիւթի պատմականութեան, կարելի չէ լիբեւս կերպով դասել մեր պատմագրական երկերի շարքը։ Կարելի չէ պատմագրական ուսումնասիրութեան հիմք ծառայեցնել, որովհետեւ այդ անուանութեամբ չունի պատմաճանաչողական եւ աղբիւրադիտական բաւարար դորձնական բովանդակութիւն։ Թէ եւ այն Հայաստանում տեղի ու-

17. Նոյն տեղում, էջ XXXVII: Երկու մասն էլ իրենց անունով հայտնի են։

նեցած իրադարձութիւններին է վերաբերում եւ մասամբ ծաղկաքաղ է Հայ նախնեմաց պատմագիրներէ աշխատութիւններէ, սակայն այնպէս է ամէն ինչ անցած ժողովրդական բանասիրական ստեղծագործական բովից, այնչափ չափ է խմբուած միակական, դիւցազներգական, առասպելական տարրերով, աղբյւրին-Հայրենասիրական միտումնաւոր չափադանցութիւններով, հրաշապատում եղելութիւններով, որ պատմական ճշմարտութեան միայն արձագանքըն է մի կերպ պահպանուել, որը, այդուհանդերձ, ներկայացնում է պատմագրական սրտչ հետաքրքրութիւն:

Սակայն այն յատուկ նշանակութիւն ու արժէք ունի հենց իր վերոյնշեալ հիմնական բնոյթով ու յատկանիշներով, իրեւ Հայ ժողովրդի բանասիր ստեղծագործութեան ամենահին յուշարձաններից մէկը, թէկուզ եւ չափ տեղայնացուած եւ ի մասնաւորի վերաբերում է Տարօնի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնների կեանքին ու դործունէութեանը: Արդէն, ինչպէս ճիշդ նկատուած է, զրա գրառման բուն իսկ երակէտը, պատճառը «Տարօնն ու Մամիկոնեաններին դովերգելու եւ առանձնապէս Ս. Կարապետի վանքի փառքը բարձրացնելու համար» հետապնդուած նպատակն է¹⁸: Գրառումը ժամանակագրականօրէն ուղղակի տանջւում է Հայաստանում արաբական տիրապետութեան ծանր, բայց Հայ ժողովրդի ազատագրական շարժումից մասնաւոր շահեցած ժամանակաշրջանին: Առաջատար տեղամասն ու ղեկավար ուժը Տարօնն էր եւ Մամիկոնեան տան մէկը միւսին գերադանցող դիւցազունները:

Բայց այդ պայմաններում ու մթնոլորտում նախ հարկաւոր էր նրա իրականացնել հոգեւոր բերդը, պատմել այն յաղթական փորձութիւնների մասին, որոնք անցել էին այդ բերդի՝ Տարօնական աշխարհի գերազոյն սրբավայրի՝ Ս. Կարապետի վանքի գլխով իր սկզբնաւորութեան՝ Գրիգոր Լուսաւորչի ժամանակներից, շաղախել այս վանքի եւ Մամիկոնեան տան ճակատագիրը սկզբից եւեթ, ինչպէս յաջողութեամբ իրադարձուած իսկ է: Գեմետրէ ու Գիսանէ եղբայր-իշխանների զրոյցը, որը «Մամիկոնեան նախնիքների՝ Մամ-Կոնի (Մամիկ-Կոնակի) զրոյցի մի մթնացած արձագանք է»¹⁹, հիմնաւորում է այդ ճակատագրական միասնութիւնը, որովհետեւ Գեմետրէի եւ Գիսանէի անունով կերտուած կուռքերի, որոնց ծառայադրուած են Կուսո, Մեղաէս, Հոռեան եղբայրները՝ Մամիկոնեան տան իրենց ողջ տոհմով, քանդուած վայրում է բարձրանում Ս. Կարապետի վանքը²⁰: Այնուհետեւ վանքը յաճախ օգնում է թէ՛ Տրդատին՝ ինչպէս Վրաց օգնութեան հասնելու եւ ճնշելու «հիւսիսական զօրաց»՝ «Եւ առժամայն ոյժ տուեալ Տրդատայ քաջառնարար ձայն տուեալ յօգնականութիւն կարգալով զսուրբ Կարապետն», թէ՛, մանաւանդ, Մամիկոնեան տան իշխանաւորներին՝ իրենց մզած բազմաթիւ յաղթական մարտերում՝ «Եւ [Մուշեղ - Փ. Ա.] բանս ի բերան զօրացն զՍուրբ Կարապետն կոչել յօգնականութիւն, եւ միարան դայս բան առացեալ՝ յարձակեցան ի վերայ Պարսից. եւ ետ տէր ի ձեռս նոցա զթշնամիսն»²¹: Եւ այնուհետեւ շարունակ յաղթանակով են աւարտուած Հայոց մզած բոլոր կռիւները Մամիկոնեանների զլիաւորութեամբ եւ ընդհանրապէս ոչ առանց Ս. Կարապետի օգնութեան:

18 Մ. Արեղեան, նշուած աշխատութիւնը, էջ 449: Մ. Մկրտչան, Հին Հայ գրականութեան պատմութիւն, Երեւան, 1976, էջ 319:

19 Նոյն աւղում, էջ 449:

20 Ա. Արքախանյան, նշուած աշխատութիւնը, էջ 109-111:

21 Նոյն տեղում, էջ 131, 159: Տե՛ս նաեւ՝ էջ 178, 215, 216, 219 եւ այլն:

Առանձնապէս կենտրոնական դործող անձեր են Գրիգոր Լուսաւորիչը, Տրդատ Թաղաւորը, Մուշեղը, Վահանը («Գայլ»), որդին՝ Սմբատը, որդին՝ Վահանը (Կամսարական), որդին՝ Տիրանը: Բոլորն էլ ուժեղ անհատականութեամբ, մարմնական, իմացական եւ ոգեկան զօրութեամբ օժտուած անձինք, ժողովրդական սիրելի հերոսներ: Ակնառու են ընդդէմին այստեղ առանձնապէս այն է, որ ի տարբերութիւն պատմագրական մեր միւս երկերի, դործող անձերը ոչ թէ բնութագրական մակդիրներով ու նկարագրութիւններով են ներկայացուած, այլ, հակառակը, իրենց նկարագիրն ու բնութարանը ի յայտ են բերում համապատասխան դործողութիւնների, կենդանի շարժման, բախումների, մարտերի, երկխօսութիւնների ընթացքում: Վիպական տարբերի յաճախակի միջամտութիւնները թէեւ ընդհանրական, հիմնական մի յատկանիշ տալիս են նրանց, բայց եւ այնպէս ամէն մէկն ունի իր անձի, բնաւորութեան իւրովի դրսեւորման առանձնայատկութիւններն ու կերպերը: Եթէ Գայլ Վահանը առաւելապէս խեղացի է, հնարամիտ, ճարպիկ, հետեւողական, թշնամին ոչ անպայման առաջին իսկ հարուածով կործանելու վճռականութեամբ, Մուշեղը՝ առիւծի սրտով, թշնամու դէմ մշտապէս ճակատ-ճակատի հանդէս գալու, անպայման վսեմ արժանապատուութեամբ մարտնչելու եւ յաղթելու դիւցազն է: Այդ ինքն է, որ Յոյների զօրապետին պատասխանելով, զուշացրնում է այնպէս. «Կամեցայք դուք սպանանել՝ զիս նենդութեամբ. արդ մի՛ զարթուցանէք դուք զառիւծ, որ ի քուն է, եւ մի՛ զգայլ, որ զբարս իւր մոռացեալ է. ապա թէ ոչ՝ որ զութսուն հազարն յաղթահարեաց, կարող է եւ զեւթանասուն հազարդ յաղթահարել»²², մինչդեռ՝ երբ Պարսիկ Ասուրը Վահանին «Գայլ» է անուանում, Վահանը հանդիստ պատասխանում է. «Յիրաւի է այդ անուն իմ, քանզի դամ կոտորեմ, զնամ եւ այլ դամ»²³: Համապատասխանաբար նաեւ միւսները ունեն իրենց նկարագրի ու բնաւորութեան անհատական գծերը:

Իսկ թշնամի Բանակի ներկայացուցիչները, որոնք ամէն պարագայի տեսնու են տալիս իրենց մարտերը Հայոց դէմ, թէեւ բոլորովին չեն զրկուած ի յայտ եկող իրենց յաւակնոտ արութիւնից, բայց կենտոնակ, խելամիտ, միշտ վերջ պայքարը շարունակելու առակ չեն, յաճախ են ընկնում խայտառակ, ծիծաղելի դրութեան մէջ:

Անհատական թէ հաւաքական կռիւների նկարագրութիւնները կարեւոր տեղ են զբաղում սոյն երկի մէջ: Դա միանգամայն հասկանալի է. պատեւազմը, երկրի պաշտպանութիւնը Մամիկոնեանների առօրեայ հիմնական դործըն էր: Ընդդէմին այն է, որ դրանք կրում են չափազանց աշխոյժ, գրաւիչ, հետաքրքրաշարժ, Հայ մարդու, մանաւանդ երբեմնի Տարօնական ժողովրդի, հայրենասիրական եւ ազատատենչ յուզումներն ու ակնկալութիւնները չոյրդ բնոյթ ու յատկանիշ: Ըստ այսմ էլ նրանց մարակիչ, ներդործող ուժը շատ մեծ է եղել եւ յաւազոյնս ծառայել է հեղինակի հետամտած նպատակին:

Զգացական տարրը շատ խիտ նստած է ամէն ինչի հիմքում՝ թէ՛ կրօնական-եկեղեցական, թէ՛ ազգային-հասարակական, տոհմասիրական, ինչպէս նաեւ՝ բարեկամ ու մէկը միւսի հանդէպ թշնամաբար տրամադրուած մարդկանց միմյալարեւութիւններին հաղորդուելու տեսակէտից:

Գոյների չափազանցուած խտացումները ոչ միայն չեն վնասում երկի դեղարուեստական ընկալմանը, այլ, հակառակը, նպաստում են: Այս առում-

22 Նոյն տեղում, էջ 162:

23 Նոյն տեղում, էջ 214:

մով նշելի է յատկապէս ժողովրդական հիմքը, որը տեղ-տեղ հասնում է բնականի ծաղրի, սակայն առանց շատ խիստ սահմանադանցելու բնականութիւնը: Բերենք թէկուզ մէկ օրինակ Գայլ Վահանի պատասխանից՝ Պարսից թաղաւորին.

«Վատ եւ թոյլ անձինդ Վաղթանկայ՝ ի խոշորոց դասուց, որ զողորմ ճաշակեն, ողջո՛յն: Թէպէտ եւ ընդ Միհրանայ մահն խնդացի, բայց զբռնմամբ ինդ լացի, որ դնորս մահն լսեցեր եւ զիմ կորսութիւնս ծանե(ա)ր, զոր ետ ինձ Աստուած: Թէ սէր եկիր արկանել, զկինդ ընդէ՞ր ածեր ի հետ. մի՞թէ որդիս խնդրես յերանաց մերոց...»²⁴:

«Պատմութիւն Երկրին Տարօնոյ» երկին ժողովրդական ստեղծագործութեան առանձին գրաւչութիւն են տալիս աշխոյժ, սրամտութիւններով, փոխադարձ հեղինակութիւն, պատկերաւորութեամբ, համեմատութիւններով ու մտկոյրներով համեմատած երկխօսութիւնները: Այս դէպքում, բնական է, միշտ էլ լատտես, վստահ, թշնամու նկատմամբ երբեմն կտրիճի անուարձութեամբ, նոյնիսկ արհամարհանքով հանդէս են դալիս Տարօնի զիւցաղունները: Նրանցից ամենակրտսերն անդամ պատրաստ է թշնամուն մահու սպառնալիք տալ, ինչպէս Սմբատը՝ Ասուրին.

«Իրրեւ Ասուր տեսեալ, թէ պատանի է, քամահեաց զնա եւ ասէ. Քաւբապաշտ հարճորդի, ի բա՛ց կաց, զի ի պատերազմող արսն անցանեմ: Իսկ նա (Սմբատ — Փ. Ա.) ասէ. Որդի սատանայի, յիրաւի է անուն քո Ասուր, զի սուրբո՛ւն է ինչ, եւ մարտուցեալ ընդ կտրիճս՝ ծանիցես զպարտութիւն քո՛: Եւ յանկարծ զէնս վերացուցեալ՝ կտրեաց զգլուխ երիւարին Ասուրայ, եւ զնա յերկիր ընկէց. եւ յարձակեալ ի վերայ նորա, կտրեաց զգլուխն...»²⁵:

Մարտական յաղթանակներից յետոյ տուեալ վայրերը նոր համապատասխան անուններով էին կոչւում եւ երգեր էին յօրինւում նման տրամագրութեամբ ու համաժողովրդական հեղինակութիւնով.

«Կերան դազանք զմարմինս զիակացն եւ զիրացան.

Կուզ կերեալ ուռեաւ իրրեւ զարջ,

Եւ ազուէն հպարտ եղեւ քան զառեւծ.

Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց,

Եւ արջ, զի զոր ուտէն՝

Չմնաց առ ինքն, ի սովոյ մեռաւ.

Անդեղք, զի ազա՛հ էին, նստան

Եւ ոյլ ոչ կարացին վերանալ.

Մկունք, զի շատ տանէին

Ի ծակս իւրեանց,

Մաշեցան ոտք նոցա»²⁶:

Ահա, այս կտրուի իր առանձնայատկութիւններով ու արժանիքներով «Պատմութիւն Երկրին Տարօնոյ» երկը, որտեղ արտացոլւած են մասնաւորաբար Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հայրենասիրութիւնը, ոգին, պատկերացումները, ստեղծագործական կարողութիւնները, բարբր, լեզուն, անտարակոյս, իր ուրոյն տեղն ունի մեր ողջ մատենագրութեան մէջ:

Փ. ԱՆԹՈՒՆԵԱՆ

²⁴ Նոյն տեղում, էջ 208-209:

²⁵ Նոյն տեղում, էջ 215:

²⁶ Նոյն տեղում, էջ 247:

ԽԱՐՐԻ — ՄԻՏԱՆԻՆԵՐ

20-18րդ դարերում (մ.թ.ա.) Միջագետքի հիւսիսային կամ հիւսիս-արեւմտեան մասերում հիմքն է դրւում մի պետութեան, որ պատմութեան մէջ յայտնի է Միտանի կամ Միտանիների թագաւորութիւն անունով: Այս պետութեան ու հասարակութեան պատմութիւնը յայտնի է դարձել մեղ Տել-Ամառնայի եւ Բողազքէոյի պեղումներից երեւան հանուած արձանագրութիւններից: «Միտանին, — ասում է պրոֆ. Աճառեանը, — բառիս բուն իմաստով մի կայսրութիւն էր: Նա իր զարգացման ամենարարձր զաղաթնակէտում տարածւում էր Կապադովկիայից մինչեւ Նինուէ՝ Ասորեստանի մայրաքաղաքը, որ նրա հպատակն էր, նրանք են հիմնել եւ իրենք էլ եղել են այդ երկրի հնադոյն բնակիչները»¹:

Նրանց տիրապետութեան տակ մտել են Ասորիքը (Հիւսիսային Սիրիան), Պոնտոսը, Հայաստանը, Միջագետքը, Կովկասը: Նրանք հարկառու են դարձրել Ասորեստանը եւ Կիլիկիան ու արշաւանքներ կազմակերպել մինչեւ Պաղեստին: Բաբելոնի ու Եգիպտոսի արքունիքների հետ խնամիրական կապեր են հաստատել, թղթակցութիւններ ունեցել ու առեւտրական յարաբերութիւններ մշակել²:

Միտանիները շարունակական պատերազմների մէջ են մտել խեթական (հաթեան), բաբելոնական, ասորեստանեան ու եգիպտական պետութիւնների հետ: Այդ պատերազմների հետեւանքով Միտանի պետութիւնը թուլացել եւ 15րդ դարում (մ.թ.ա.) հզօրացող Ասորեստանի կողմից ծանր հարւածներ տառնալով՝ 14րդ դարում վերջնականապէս կործանուել ու դուրս է նետուել պատմութեան թատերաբեմից:

Միտանի պետութեան ազդարձակէութեան մէջ խիստ տարրորշապէս աչքի բնկնող ցեղերն են կազմել՝ Սուրարիները, Հուրրիները (կամ Խուրրիները): Այս ցեղերի մասին եղած անուանումները առաջ են դալիս խեթական (հաթեան) եւ ասորեստանեան արձանագրութիւններում եղած յորջորջումներից: Այսինքն՝ Ասորեստանցիները Միտանի պետութեան երկրի բնակիչներին անուանում են Սուրարիներ, իսկ Խեթերը՝ Խուրրիներ կամ Խարրիներ:

Ինչպէս ասուեց, երկրորդ Հազարամեակը Հնդեւրոպական ցեղերի դէպի նախասիւս կատարած արշաւանքների ժամանակաշրջանն է: Այս ժամանակ պատմութեան մէջ համարեա երեւան են դալիս այն ժողովուրդները, որոնք յայտնի են դարձել «Նեսիտներ» կամ «Նեսեր», «Միտանիներ» կամ «Խարրի-Միտանիներ» անուններով:

¹ Պրոֆ. Հր. Աճառեան, «Հայոց լեզուի պատմութիւն», Երեւան, 1940, Ա հատոր,

² Եղիա Ս. Քասունի, «Նախահայկական Հայաստան», Պէյրութ, 1950, էջ 43-44:

Նեաւ

սում է պրօֆ. Ռաշ

ու հաստատուած է, թէ

զուրկ ունի Հնդեւրոպական

գրաւում են հիթիթական երկրներ

եւ ստեղծում նոր հիթիթական կայսրութիւն, եւ այնուհետեւ կոչուել, ի
գիտնականների (Հրոզնի), Նեսիտներ: Այնուհետեւ, շարունակում է նոյն հե-
ղինակը, այս Նեսիտներից շատ քիչ վերջ մի նոր այիք յորժանք է տալիս Հնդ-
եւրոպական ցեղերի այդ միեւնոյն շտեմարանից եւ կոմկասեան ուղեղծով ծա-
ւալում է հայկական բարձրամանկի խոր ձորերում: Այնտեղից նրանց մի
թեւ իջնում է հարաւ եւ հարաւ-արեւմուտք՝ Սուրաբու (Շուրբիւ), գրաւե-
լով հիւսիսային Միջագետքը եւ բնակութիւն հաստատում այս պետութեան
մէջ: Նուաճելով տեղական Սուրաբու ժողովուրդին: Յեղերի այս երկրորդ
խումբը շնորհիւ իրենց թողած արձանագրութիւնների՝ Պարբի-Միտանինի եւ
կոչուում:

Միտանիններն իրենց անունը բերել են մի հեռաւոր հայրենիքից: Նա-
խախտ արչաւած Հնդեւրոպական ժողովուրդների հին բնակավայրերն են եղել
Մակեդոնիան եւ Թրակիան, իսկ նրանց շարժման բնթագրում երկրորդ հան-
դրուանը եղել է հարաւային Ռուսաստանի տափաստանը՝ Ազովի ծովի շրջանը
(Ազիսու ծովի մօտերը), որի հին անունը Մուլտես է եղել, որ թերեւս ասում
է Քասուին, հետեւելով պրօֆ. Ռաշատրեանին, հենց այդ անունով էլ կոչուել
է Maiotis: Հին արձանագրութիւնների մէջ յորջորջուել է Մաիտենի (Maiteni):
«Ալիսարհի թագաւոր», որ Միտանի անունն նախաձեւը պէտք է եղած լինի:

Այս ժողովուրդներին Եգիպտացիներն անուանել են Մաի-Մատի, Ա-
ւորեստացիները՝ Մանտա, Մատա, Մանա: Յոյն ու Հռոմէացի պատմիչները
նրանց ծանօթ են Մատին, Մեդ, Մադեան ու Մարդ անուններով: Իսկ Հայե-
րը նրանց անուանում են՝ Մար, Մեդ եւ Մարդ (Մարդաստան): Իսկ Վինքլե-
րը առաջին գիտնականն է եղել, որ «Պարբի» բառի մէջ գտել է «Արի» բառը:
Հարբիները (Պարբիները) ոչ միայն Արիացի, այլեւ ինքնուրուիւն Եգիպտոսի
են եղել: «Հարբի»ն նոյնն է Արի (այցի) անունն հետ:

Պարզում է, ուրեմն, որ Պարբի-Միտանին, ասում է պրօֆ. Ռաշա-
տրեանը, նոյն պետութեան անունն է եղել եւ որ գրաւել է հայկական բարձրա-
մանկի ու հիւսիսային Միջագետքը: Այս մեծ պետութիւնը բաժանուել է եր-
կու պետութեան, Պարբին՝ վերին Հայաստանում, իսկ Միտանին՝ ստորին Հա-
յաստանում եւ հիւսիսային Միջագետքում: Թէ Պարբի-Միտանին միեւնոյն
պետութեան անուններն են եղել, ապացուցել են Էդ. Մեյերը, Հրոզնին, Կէօթ-
ցէն (կամ Գէօթցէն) եւ նրանց յարող՝ Ա. Ռաշատրեանը:

Բայց այստեղ հենք կարող չնշել, որ ակներեւ ինչ որ հակասութիւն
կայ: Եթէ մէկ կողմից պնդում են, որ Պարբի-Միտանին (իրեւ արիացի Մի-
տանիններ կամ արիացիների տէր Միտանի) միեւնոյն պետութեան անունն է հա-
մարում, հապա ինչպէ՞ս միւս կողմից արհեստական բաժանում է մտցւում նր-

³ Պրօֆ. Ա. Խաչատրեան, «Հայաստանի Սեպ. Շրջ. Պատմութիւն»,
էջ 150-151:

⁴ Եղիա Ս. Քասունի, «Նախահայկական Հայաստան»:

⁵ Ա. Ալաջանեան, «Կեսարիոյ պատմութիւն», էջ 95:

⁶ Պրօֆ. Ա. Խաչատրեան, նշուած աշխատութիւնը, էջ 230:

բանց միջև եւ խորքիներին իրրեւ առանձին պետութիւն տրւում է վերին Հայաստանը, իսկ Միտանիներին՝ ստորին Հայաստանը եւ Հիւսիսային Միջագետքը։ Դուրս է գալիս, որ նրանք տարբեր ցեղերի կամ ցեղային տարբեր ճիւղերի զանակցային կառավարութիւն են, այնինչ՝ միեւնոյն պետութեան յարադրական անուններն են։

Այսպիսով, երկրորդ Հաղարամեակը նախասիայի պատմութեան մէջ Հնդեւրոպական նոր ցեղերի, նոր քաղաքական կազմակերպութիւնների տեղեւորման մի եռուն ժամանակաշրջան է, երբ յիշեալ աշխարհամասի տարբեր կէտերի վրայ Հիմնական տեղաշարժեր ու փոփոխութիւններ են տեղի ունենում։

Եթէ ամփոփենք վերեւ ասուածները եւ հերթականք Հնդեւրոպական ցեղերի արչաւանքներով առաջացած պետական ու քաղաքական նոր կազմաւորումները, կ'ունենանք հետեւեալ պատկերը։

ա. Փոքր Ասիայի կենտրոնում առաջանում է Հաթեան կայսրութիւնը։

բ. Հայաստանի եւ Հիւսիսային Միջագետքի մէջ խորին-Միտանի մեծ պետութիւնը։

գ. Բարեյոնի մէջ Կասեան (Կասիդ-Գասիթ) թագաւորութիւնը։

դ. Եգիպտոսի մէջ Հիւքսոսների տիրապետութիւնը։

Կրկենք մի անգամ եւս, թէ պատմադէտների ոմանց մօտ Հուրրիներն ու Միտանիներ միանում են իրար եւ պատմական միեւնոյն իրադարձութիւնների մէջ փոխարինում մէկը միւսին, որքան էլ պատմադրութեան փանքերը աշխատել են նրանց սահմանազատել միմիանցից։ Այս տեսակէտից, պատահական չէ, որ պատմաբան Ն. Ալոնցի մօտ երկրորդ Հաղարամեակի պետական ու քաղաքական նոր խմբաւորումները հետեւեալ ձեւով են հանդէս գալիս։ Երկրորդ Հաղարամեակը, ասում է Ն. Ալոնցը, յատկանշւում է էթնիկական նոր տարրերի հեղեմոնիայով։

ա. Հիթիթները գրաւում են Փոքր Ասիան։

բ. Հուրրիները՝ (կամ Հուրրիթները) վերին Միջագետքը կամ Սուրարուն։

գ. Գասիդները յարձակում են ստորին Միջագետքի կամ Բարեյոնի վրայ։

Ուրեմն, Միտանիները, իրրեւ Հնդեւրոպական ժողովուրդների մի հեղեղ, երկրորդ Հաղարամեակում խուժում են Սուրարուն երկրի վրայ, նուաճում են նրան ու գրաւում նրան պատկանող բոլոր երկրամասերը։ Նրանց մի ճիւղը՝ Հիւքսոսները, արչաւում են Եգիպտոս ու իրենց թագաւորութիւնն են հաստատում։

Ինչպէս քիչ վերեւ տեսանք, գիտնական Գէօթցէն Եգիպտոսը գրաւած Հիւքսոսներին (Հիդ Շաուու, «Աւագակների թագաւոր» անուանել են եւ Եգիպտացիները այս հովիւ ցեղերի թագաւորներին, որ Յոյները տղաւորելով դարձրել են «Հիւքսոս» -իէօ, հ. Ա. էջ 38) համարում է «Հուրի» կամ «Պարի» ծագումով ցեղեր, որոնց արչաւանքը Եգիպտոս եւ Հուրրիների նուաճողական յարձակումները Միջասիայի վրայ կապակից շարժումներ են նկատել եւ Նոյնիսկ միեւնոյն շարժման յաջորդական ալիքները։ Այս տեսակէտից տարբեր չէ պատմաբան Ալոնցի կարծիքը, երբ յայտնում է, թէ Հիւքսոսների արչաւանքը Հուրրիական ցեղերի ծոցից ծագած մի շարժում էր։ Իսկ պրօֆ. Պաշաւանքը Հիւքսոսներին՝ մի շարք պատմադէտների կարծիքների հիման վրայ

7 N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946:

համարում է Պարրի-Միտանիների մի ճիւղ։ Իսկ Լէօն, հիմնուելով Մասպերոյի (Maspero) կարծիքի վրայ, աւելի հաւանական է համարում այն ենթադրութիւնը, թէ Հիւքսոսները Հիթիթներն էին, որոնք ապրում էին Հայաստանի արեւմտեան մասերում։ Հիւքսոսների մասին գիտնական Փորրերը գրել է. «Ենթէ նրանց մեկնակէտն է Սուրարտուն, ուրեմն հաստատ է, որ նրանք Պարրի-Միտանիներն են», որովհետեւ նրանք հաստատուելով Սուրարտուն երկրում, 18րդ դարում (մ. թ. ա.) նուաճողական արշաւանքներ էին սկսել դէպի Սիրիա, Պաղեստին ու Եգիպտոս։ Ահա այդ արշաւանքների մէկ հոսանքն է եղել Եգիպտոս մտնող Հիւքսոսների ալիքը։ Իսկ գիտնական Օպպենհայմը վճռականապէս գրել է. «Ամենայն հաւանականութեամբ Հիւքսոսները, որոնք 1700 թուականին նուաճեցին Եգիպտոսը եւ մօտ 100 տարի պահեցին, Սուրարի ժողովուրդները պէտք է լինէին Միտանի իշխանների ղեկավարութեամբ»։ Պատմապէս ներքի այս համընկնող տեսակէտների հիման վրայ պրօֆ. Պաշտրեանը եզրակացնում է. «Կասիտների, Հիւքսոսների, Պարրի, Միտանիների արշաւանքները իրեն միեւնոյն ժողովուրդների տարբեր ճիւղերի տարբեր ուղղութեամբ առաջնադարումն էր, որոնց օրինակը տեսնում ենք այսպէս կոչուած Մովս-ժողովուրդների՝ արշաւանքով դէպի Փոքր Ասիա» (Պաշտրեան, «Հայաստանի սեպ. շրջ. պատմութիւն», էջ 83)։

Եւ վերջապէս Ադոնցը պարզ կերպով շեշտում է այս առթիւ. «Այն կարծիքը, որ ամէն օր առաւելալիւս զետիւն է ձեռք բերում՝ վերին Միջագետքի նուաճումը Հուրրիների կողմից, Հիւքսոսների արշաւանքը Եգիպտոս եւ Կասիթների (Պասիթների) հաստատումը Բարելոնում, միմեանց սերտօրէն կապւած միեւնոյն երեւոյթի արտայայտութիւններն են (Histoire d'Armenie, 1946)։

Ինչպէս տեսանք, Միտանիների մասին պատմութիւնն իր տեղեկութիւնները քաղել է եգիպտական ու հայկական արձանագրութիւններից։ 1887 թուականին միջին Եգիպտոսի պեղումներից երեւան են հանուել Տել-Ամառնայի պեղակիտներ կոչուած հուշակաւոր հաւաքածուն, որ պարունակելիս է եղել արքաների թղթակցութիւններ։ Երեւան հանուած նամակ-աղիւսները գրուած են եղել, բեւեռագրով եւ մեծ մասամբ՝ ասորա-բարելական լեզուով (Արկադե-րէն), որ իր ժամանակի միջազգային քաղաքական յարաբերութիւնների լեզու է համարուել։

Միտանիների թագաւորութեան նշանաւոր միտպետներից են համարւել՝ Սաուլչատարը, Արտատամին, Շուտառնան, Տուչրատտան։ Նրանց իշխանութիւնը աւատապետական գրութեամբ կառավարուող մարշակարդ է եղել, որոնց ազնուականները խրոխտ ու խիզախ քաջեր են եղել, եւ որոնք իրենց անւանել են «Մարիանի» որ հեղկերէնում ունեցել է «ձիաւոր» նշանակութիւնը։ Նրանց պետութեան նաեւ «Պանիգալրատ» անունն է տրուել Եգիպտոսի փարաւոն Ամենիխի Գ-ի կողմից Տուչրատտային գրուած մի նամակում, որից յետոյ այդ անունը դարձած է նաեւ Ասորեստանցիներն ու Բարելոնացիները Միտանիի համար։ Միտանի պետութեան մայրաքաղաքն է եղել Վասուգանին կամ Վաչուգանին, որ բառ պրօֆ. Պաշտրեանի, տեղադրում է այժմեան Ռաս-էլ-Այնի ջրամուկների մօտ։

Միտանիների թագաւորութիւնը փայլել է Առաջաւոր Ասիայի պատմութեան հորիզոնում մօտ մէկուկէս դարուց աւել, որի ընթացքում Միտանին ապրել է բարդաւաճման աննախընթաց վերելք։ Բայց Միտանիները չեն կարողացել զժրախտաբար ամուր ու միասնական պետութիւն ստեղծել եւ այդ պատճառով էլ չուտով անկման են դիմել։ Յատկապէս, նկատում են պատմապէս-

ներ, նրանց զինուորականութեան մէջ թափանցել ու կարեւոր տեղ են դրակել տեղական բնակչութիւնից ոչ-Միտանի տարրեր, օրինակ նրանց համար վարձկան զինուորական ծառայութիւն են արել Հուրրիները, ինչպէս եւ ուրիշների համար, որոնք եւ արգելք են դարձել միատարր ու ամրակուռ կենտրոնական իշխանութեան ստեղծման (Քառունի)։ Այդ պատճառով էլ հազիւ մէկ կամ մէկուկէս դար իշխելուց յետոյ Միտանիները 1250 թուականին (մ.թ.ա.) հզօրացող Ասորեստանի հարուածների տակ վերջնականապէս ջնջոււմ են եւ իրենց իշխանութիւնն ու երկրներն էլ անցնում այս վերջինիս։

Տեղ-Ամառնայի արձանագրութիւններում Եգիպտոսի Փարաոնի կամ Միտանիի Տուշրատտա թագաւորի կողմից զրուած՝ յիշատակուել են միայն Միտանիները։ Սուրարիները չեն յիշատակուել։ Սրա պատճառը այն են համարում պատմագէտները, որ Սուրարիները իրեն հպատակ ժողովուրդ տեղ չեն դրել զիւանազրտական յարաբերութիւնների մէջ, քանի որ այդ յարաբերութիւնների տէրը իրեն գերիշխող ժողովուրդ՝ Միտանիներն էին ճանաչում։

Բայց սրան հակառակ, Բաբելոնացիներն ու Ասորեստանցիներն էլ իրենց արձանագրութիւններում Միտանիներին չեն յիշում, այլ միայն Սուրարիներին՝ իբրեւ երկրի հնազոյն ու բնիկ ժողովուրդ։ Դա էլ ունեցել է իր պատճառը, որովհետեւ Ասորեստանցիները պատերազմների մէջ լինելով շարունակ Միտանիների հետ՝ նրանց համարել են թշնամի եւ չեն ուղեցել ճանաչել նրանց, մինչեւ անցում այն ժամանակ, երբ վերջիններս տիրապետող դիրքերում էն դնուել։ Եւ իշխել նոյնիսկ Ասորեստանի վրայ։

Այս ամփոփ ու հակիրճ տեղեկութիւններով մենք ծանօթացանք նախապատմական Հայաստանի եւ կամ նախաուրարտական ցեղերին ու նրանց մասին արժարժուած պատմագէտների կարծիքներին։

Բայց ուշադրութեամբ հետեւելով պատմութեան փաստերին ու պատմագէտների կատարած ուսումնասիրութիւններին, գալիս ենք այն եզրակացութեան թէ հայկական բարձրամակար տնտեսման յիւ, չենք կարող առաւելապէս Սուրարիներից, Հուրրի կամ Պարրի-Միտանիներից, բնակեցուած երկրի համարել, մինչդեռ նրանց պատմական միջավայրն ու պետական կենտրոնը եղել ու մնացել է Միջագետքը, Միջագետքի վերին կամ հիւսիսային մասերը։ Այսպիսով, Սուրարիները եւ ապա՝ Պարրի-Միտանիների բուն հայրենիքն ու պատմական կենտրոնամասը, ուր հիմնեցին իրենց թագաւորութիւնը, Միջագետքն է, որքան էլ միանգամայն նրանց բնակութեան սահմաններն ու իշխանութեան ազդեցութիւնը տարածուած լինէին ընդարձակ երկրամասերի վրայ, ընդհուպ՝ հայկական լեռնաշխարհը։ Եթէ նոյնիսկ ընդունենք, որ հայկական բարձրամակար Սուրարիներ եւ ապա՝ Պարրի-Միտանիներ են ապրել ու իշխել, դեռեւ չի նշանակում, որ նրանք են եղել ամբողջապէս երկրի էթնական ու գերակշիռ ցեղերն ու բնակիչները։ Մինչդեռ տեսանք, որ Սուրարի աշխարհը վերին Միջագետքն էր, որին հետագայում տիրեցին Պարրի-Միտանիները, եւ որոնք միայն կարողացել են իրենց ենթարկել հայկական լեռնաշխարհի որոշ մասերը հարաւային կողմերից։ Արդէն տեսանք, որ հիւսիսային եւ կենտրոնական վայրերում նրանց տիրապետութիւնը հաստատուած իրողութիւն չէ։ Այսուամենայնիւ, ընդունելով հանդերձ նրանց գոյութիւնը նախապատմական Հայաստանում, միաժամանակ չենք կարող ընդունել, որ հայկական բարձրամակար հիմնական բնակչութիւնը նրանցից է կողմնուած եղել եւ կամ նրանք են եղել գերակշիռ հանգամանք մերկայացնող բնիկներ։

Նրանք Հայաստանում վերաբնակուած ցեղեր են եղել, դադուքներ կամ դադ-
թօջաններ, որոնք Հաստատուելով Հայկական երկրամասերի վրայ, իրենց բը-
նակութիւնն ու իշխանութիւնն են հիմնել և հետագայում ձուլուել տեղի բնակ-
չութեան հետ: Նրանք Հայաստանում տիրապետող բնակիչներ չեն եղել եւ հե-
տեւաբար՝ կենտրոնական իշխանութիւն ու բնակավայր չեն ունեցել, այլ ի-
րենցմով բնակեցուած տարածութիւնները եղել են լոկ իրենց ազդեցութեան
շրջանակներն ու գոտիները: Այսպիսով, նրանց մասին վկայող տեղագրական
մի շարք անուններ, նրանցից մնացած նախարարական տոհմեր, յատուկ ա-
նուններ, որոնք փոխանցուել են Հայաստանի յաջորդ դարերի պատմութեան
ոչ միայն չեն ժխտում, այլեւ ընդհակառակը, հաստատում են այս տեսակէ-
տը, ինչպէս տեսնելու ենք ստորեւ:

Յարզ, գիտնականների ցուցմունքներից մենք տեսանք, որ Սուբարի-
նների եւ ապա՝ Սարրի-Միտանիների պատմական հայրենիքը կամ պետական
կենտրոնավայրը Միջագետքն է եղել: Յայտնի է, որ հին Արեւելքի պատմու-
թեան մէջ «Սուբարի երկիր» ասելով հասկացուած է Միջագետքը (վերին):
Պատմաբան Ագոնցը իւր յայտնի աշխատութեան 46-րդ էջում գրում է. «Le
terme de Subari désignait à l'origine toute la Mésopotamie»

Պատմագէտ Վուլլին, ինչպէս տեսանք, Միջագետքի խաղաղասէր բը-
նակչութեան վրայ յարձակուող նոր ցեղը Սուբարիներին էր համարում:

Մի շարք այլ գիտնականներ՝ Հրոգնին, Ֆորբերը, Հ. Տաշեանը, Մի-
տանի թագաւորութիւն ասելով միշտ հասկացել են վերին Միջագետքը: Հրոգ-
նին գրել է. «Les Mitanni ou Maiteni, peuple d'origine indo-européenne aryenne,
plus exactement "indienne" concentré dans Mésopotamie autour de la ville de
Vassuggani».

Պրոֆ. Սաչատրեանն իւր ծանօթ գրքում հանդամանօրէն կանդ առնե-
լով Սուբարիների վրայ՝ հարուստ փաստեր է բերում պատմագէտներից, ո-
րոնք Միջագետքն են համարում նրանց հայրենիքը: Վկայակոչելով օրինակ
Յարլիլին (History of Assyria), մէջբերում է. «Ասորեստանեան ու բաբելոնե-
ան աւանդութիւնները համաձայնում են, որ Ազադի հարստութեան ժամա-
նակ Ասորեստանի հիւսիսային ու արեւելեան մասը կոչուած էին Սուբարու:
Նրանց նախնադոյն բնակավայրը պէտք է, որ ներառէր Ասորեստանի երկրի
մի մասը... ուր որ ասորեստանեան աստղագէտներն ու նոր բաբելոնեան ժա-
մանակագիրները համաձայնում են, ինչպէս այս դէպքում, թէ նախնադոյն
սումերեան շրջանում Սուբարուին ներառում է ասորեստանեան երկիրը»:
Ապա գիմելով էդ. Մեյերի կարծիքին, պրոֆ. Սաչատրեանն արձանագրում է.
«Ասորերալիտ նուաճել էր Մոգրի երկիրը եւ ընդարձակ Շուբարիի մարտա-
կան զօրութիւնը ցրել (Շուբարին աւանդական յորջորջում էր Միջագետային
աւանդատին)»: Եւ այնուհետեւ գիմելով Բիլարեւին պրոֆ. Սաչատրեանն
յայտնում է, թէ Սուբարուին աշխարհագրական յորջորջումն է Բաբելոնի հիւ-
սիս ու հիւսիս-արեւմուտքի համար...: Իսկ գիտնական Սմիթի համաձայն.
«Սուբարու ժողովուրդը բուն Միջագետք կոչուած շրջանից տարածուած էր
դէպի Չագրոշ լեռները, երկհազարեակի կէսին գլխաւոր տարրն էր Ասորես-
տանցիների նախնադոյն ժողովրդի»: Անուանի հիթիթագէտ Կոնտրնօ իւր հեր-
թին ընդունում է, որ Միտանիների քաղաքակրթութիւնն ու պատմութիւնը Սու-

բարիններից կամ Սուրարտականից կտրականապէս անջատ չէ եղած, ինչպէս նախահաթեան եւ ապա՝ յետհաթեան պատմութիւնը: Եւ վերջապէս՝ պատմա-
գէտ Եղ. Քասունին շատ զիպուկ նկատում է. «Ի սկզբան կը կարծուէր, թէ
Հուրրիներու պատմական բնակավայրը Հայաստանն էր, յատկապէս անոր ա-
րեւմտեան մասը... սակայն արձանագրութիւնները ուշադրութեամբ վերլու-
ծելով կը գտնենք, որ Արածանիէն եւ Հայկական Տաւրոսէն հարաւ՝ վերին Տիգ-
րիսի աւազանին մէջ կրնային տեղ եւ իշխանութիւն ունենալ Հուրրիները նախ,
եւ ապա՝ Միտանիոյ պետութիւնը: Այնուամենայնիւ, երկուքին ալ պատմա-
կան կենտրոնը եւ հայրենիքը պէտք է նկատել Միջագետքը: Անոնք Հայաստա-
նի դրացիներն են» (ընդգծումը մերն է — Գ. Հ.): Նմանապէս հարկաւոր է յիշ-
ել բարձրագոյն պրոֆ. Հր. Աճառեանի տեսակէտը, որ այս առթիւ գրել է.
«Նախքան Հայաստան (Ուրարտու) մտնելը, երբ Հայերը (Արմէններ — Գ. Հ.)
բնակուում էին Փոքր Ասիայում, փոքր ասիական ժողովուրդների թւում պէտք
է չփման մէջ մտնէին նաեւ Միտանիների հետ: Իսկ Հայաստան մտնելուց յե-
տոյ այդ չփումը աւելի եւս պէտք է ընդարձակուէր, որովհետեւ Միտանիներն
էլ Հայաստանի բնակչութեան մէկ մասն էին կազմում» (ընդգծումը մերն է —
Գ. Հ.):

Մէջբերուած վկայութիւններից պարզ ու յստակ երևում է, որ Սու-
րարիների եւ ապա՝ Խարրի-Միտանիների բնակութեան պատմական կենտրո-
նավայրը հիւսիսային Միջագետքն է եղել: Ծշմարիտ է նաեւ, որ նրանք իրենց
բուն երկրից դուրս տարրեր երկրամասերում տարածուել ու բնակութիւն են
հաստատել, ինչպէս զիցուք Փոքր Ասիայի տարրեր վայրերում, Ասորիքում,
Հայաստանում եւ այլուր: Բայց հիմնականում նրանք եղել ու մնում են Մի-
ջագետքի ժողովուրդ եւ հետեւաբար՝ նրանք համարուում են Ասորեստանի ժո-
ղովուրդների նախնիներ, քան քէ Հայկական Լեռնաշխարհի նախնաւոր-
տական ցեղեր: Որովհետեւ, յայտնի է, որ Ասորեստանի թագաւորութիւնը
Միջագետքում կազմաւորուեց ու բարձրացաւ թէ՛ տեղադրականորէն եւ թէ՛ ցե-
ղագրական իմաստով Խարրի-Միտանիների թագաւորութեան աւերակների վը-
րայ, որին նուաճեց եւ ապա՝ տիրացաւ նրա ընդարձակ երկրամասերին: «Ա-
սորեստանի տարածման ամենամեծ մասը, — ասում է Ե. Քասունին, — եղած էր
Միտանիոյ մասսովը» (էջ 143): Յիշենք նաեւ քիչ վերեւ բերուած պրոֆ. Ա-
ճառեանի խօսքը. «Կիչ ցեղի եւ Միտանիների ձուլումից առաջանում է Ասո-
րեստանեան ժողովուրդը»: Այսպիսով, Սուրարիները եւ (Հուրրիներ) Խարրի-
Միտանիները իրենց ժամանակաշրջանում իշխելով ու ապրելով Հայկական
բարձրավանդակի որոշ մասերում, այնուամենայնիւ նրանք հիմնական բնա-
կիչներ չեն կարող համարուել, որովհետեւ «բուն Հայկական բարձրավանդա-
կէն դուրս են Հուրրիները եւ Միտանիները», ինչպէս իրաւամբ գիտել է տա-
լիս Քասունին (էջ 77):

Նախաուրարտական այս ցեղերին բացառապէս Հայկական լեռնաշ-
խարհի նախնիներ համարող պատմագէտներից ոմանք (յատկապէս պրոֆ.
Ա. Սաչատրեան) ընկնելով ծայրայեղութեան մէջ, մոռացութեան են տալիս
այն կարեւոր հանգամանքը, որ Փոքր Ասիայի կենտրոնում առաջացել էր ա-
ռաջին հերթին Հաթեան կայսրութիւնը, իրեն նախասիայի այն հզօր ցեղերից
մէկը, որ տիրում էր Փոքր Ասիայի կենտրոնից (Կապադովկիա, Կիլիկիա) մինչ-

չեւ Այլիս զեռի հովիտները, մինչեւ Լիւդիա, Մակեդոնիա, հիւսիսային Ասորիք եւ իջնում մինչեւ Սուրարտու, եւ որ հանդիսանում էր Փոքր Ասիայի ժողովուրդների մեծագոյն ժողովուրդը եւ իր քաղաքակրթութեամբ ու քաղաքական իշխանութիւնով, իր առեւտրով ու վաճառականութեամբ խաղում էր մեծ դեր նախասիայի կեանքում :

Պրոֆ. Թաշատրեանը եւ իր հետեւորդները խիստ անուշադրութեան են մատնում Հաթերի դերն ու նշանակութիւնը, նրանց ունեցած կապն ու յարաբերութիւնը հայկական բարձրամակարդակի բնակչութեան հետ : Յարգելի պրոֆեսորը թէեւ աշխատում է Հաթերին նոսահական (inferieure) մի դեր վերադրել, նրանց համարելով Հայաստանի հնագոյն ազգաբնակչութեան «բաղկացուցիչ մասը», այնուամենայնիւ, չի կարողանում չզիմել նրանց վկայութիւններին, նրանց միջնորդութեան, նրանց առնչակից յարաբերութիւններին, եւ վերջապէս՝ նրանց միջոցով լուծելու իրեն զբաղեցնող հնագոյն պատմութեան կարեւորագոյն հարցերը :

ԳԷՈՐԳ ՀԱՏԻՏԵԱՆ

ԱՐՄԱՇՈՒ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԸ

Տարադրութեան ու եղեռնի տարին, 1915, Արմաշու Դպրեվանքին մէջ կ'ուսանէինք: Ընդամէնը՝ 39 ուսանողներ, մէկ մասը Պոլսոյ եւ Բիւթանիոյ շրջակայ գիւղերէն, իսկ միւսը՝ Արեւմտահայաստանի ներքին դաւաճներէն:

Դպրեվանքը, քառորդ դարու մը շրջանին, 1890-1915, կրօնա-եկեղեցական եւ ազգային-գաղութարակչական աչքառու հաստատութեան մը համարաւը կերտած էր իր համար: Պոլսահայ թաղերու քարոզիչներն ու դաւաճի առաջնորդները նկատելի թուով մը Արմաշականներ էին, ազգին ու հայրենիքին նուիրուած հմուտ, լուսամիտ եւ ժրջան հոգիներ: Արմաշական մըն էր նաեւ Թրքահայոց նորընտիր պատրիարքը՝ յանձին Զաւէն Արքեպս. Եղիայեանին:

Դպրեվանքը, արդարեւ, բազմակողմանի առաւելութիւններով օժտուած կրթական բարձր հաստատութիւն մըն էր, բացառապէս օժտուած ուսուցչական հեղինակաւոր դէմքերու կազմով մը:

Մեսրոպ Եպս. Նաթոյեան*, վերատեսուչը, զբարբար եւ Հայ Եկեղեցական պատմութիւն կը դասաւանդէր:

Մինաս Մալեան՝ հայերէն եւ հայ դրականութիւն:

Մինաս Սէմէրեան՝ թուրքերէն եւ հայոց ու ընդհանուր ազգերու պատմութիւն:

Երուանդ Գարթալեան՝ ուսողական գիտութիւններ:

Րիչրտ Հարտի՝ Ֆրանսերէն:

Յակոբոս Այազեան՝ ձայնագրութիւն եւ երաժշտութիւն:

Ի դէպ այդ չքեղ իրականութեան, եւ դիւրաւ ընտելացած Դըպրեվանքի միջավայրին, կարգապահական կանոններուն, ուսմանց ծրագրին ու դաստաւանդութեանց, յամառօրէն փարած էինք մեր դասերուն, ապագայական երազներով օրօրուած:

Դպրեվանքի շրջափակէն ներս՝ արտաքին աշխարհի քաղաքական իրադարձութեանց շուրջ համառօտ եւ սահմանափակ տեղեկութիւններ մը կը ստանայինք միայն:

Սարաւէվոյի մէջ դահաժառանգի մը սպաննութիւնը համաշխարհային պատերազմի մը մղած էր ազգերը, պատերազմ մը, որուն մէջ մխրճուած էր նաեւ Թուրքիան:

Թաղական ճակատներու չփոթ, հակառակն ու չոնդալից լուրերու հետ հեռզհեռէ չարադուշակ տեղեկութիւններ կը ստանայինք մեր ազգային-համայնական կեանքի շուրջ: Պոլսոյ մէջ հայ մտաւորականներու ձերբակալութիւնն ու աքսորը, Ապրիլ 24-ին, Քաաններու կախաղանը Պայազկիտի հրապարակին միայն, Յունիս 15-ին, եւ զանդուածային բռնադատութիւն ու ջարդի պատմութիւններ սարսուռով կը համակէին մեր հոգիները:

Եացութիւնը զգալիօրէն կը վատթարանար, ու մենք դիւրէն ու դիւրէն խոռոված՝ դէպքերու զահավիժումը կը դիտէինք վախով ու երկիւղով:

* Դպրեվանքէն շրջանաւարտ 1905-ին: Յետագային Պատրիարք Թուրքիոյ Հայոց:

Դասարանի այն ուսանողները որոնք Պոլսոյ եւ Բաթանիոյ շրջակայ գիւղերէն էին, տուն վերադարձան, իրենց ծնողներու մօտ, իսկ Կարնեցի, Մըշեցի, Նըզնկացի, Բաքերդցի, Քղեցի, Խարքերդցի, Բաղէշցի, Խնուսցի, Տիգրանակերտցի, Սեբաստացի, Նուդկիացի, Ամասիացի եւ Արաքկիրցի ուսանողներն մնացինք Դպրեմանքի մէջ, որտեղէն սպասելով մեր ճակատագրին:

Այդ օրերուն, Յունիս-Յուլիս, 1915, Պոլսոյ կեդրոնական բանտի տընօրէն՝ մատահամարա Իսրահիմի հրամանով ու հսկողութեամբ Իզմիտի, Պարտիզակի, Օվսաճըզի ու Արսլանպէկի մէջ ծեծի ու չարչարանքի սպառնալիքով հայերը խմբովին կը տեղահանէին դէպի հեռաւոր ու անձանօթ վայրեր: Միայն խումբ մը քաջարի հայօրդիներ, մերժելով դժբաղդին ու դադիթի ամէն հրաման, լիւս բարձրացած էին, միշտ պատրաստ՝ գէնքի ու կռուի: Փառք հետններուն:

Յուլիսեան կէսօր մը, 1915, շրջանի թուրք չէթէն խարազանը ձեռքը՝ Դպրեմանք խուժեց իր արբանեակներով: Վանատան իր խուցին մէջ Յովհաննէս վարդապետը մահացու կերպով չարչարելէ եւ խոշտանգելէ յետոյ, մոլեղնած թուրքը բրտօրէն հրամայեց մեզ մեկնելու պատրաստուիլ «Հրաման կայ Իսթանպուլ դրկելու ձեզ, Պատրիարքարանը», գոռաց թուրք չէթէն, շնահան քրքիջ մը աչքերուն մէջ:

Լուռ էինք, անխօս էակներ, կասկածին ու յոյսին խորհուրդովը պարուրած:

Հրամանը հրաման էր:

Յաջորդ առաւօտ, անձնական դոյքերու բեռ մը շայակած, խմբովին ճամբայ կ'ելլենք դէպի Իզմիտ: Կը քալենք երեք ոստիկաններու հսկողութեամբ, կը քալենք դանդաղ ու մտածկոտ, կը քալենք ու եւ կը նայինք, անդամ մըն ալ, եւ անդամ մըն ալ դիտելու Դպրեմանքի լուսաւոր պատկերը, որ ալ կը հեռանար, կը փաթթուէր հորիզոնին եւ կ'անհետանար:

Իրիկունը Իզմիտ կը հասնինք, Իզմիտի բանտը, ուր հարիւրաւոր հայ կալանաւորներ խուճապի մատնուած՝ պատերուն կը դարնուին, խաւար ճակատագրի մը սեւ փոթթրիկը հոգիներուն մէջ:

Դիւերը բանտին մէջ մնացինք, բացօթեայ, յոյնած, անհանդիստ, քնատ ու մտահոգ:

«Հրաման կայ Իսթանպուլ դրկելու ձեզ, Պատրիարքարանը», այդպէս բռնի մեղի երէկ, ու այդ յոյսին կառնած հրամանի կը սպասենք:

Կէսօրին ոստիկանները մեզ կ'առաջնորդեն չողեկառքի կայարանը, ուր արեւին տակ փռուած մարդկային թշուառ էակներու բազմութիւն մը կը սպասէ, օրերով կը սպասէ ճամբայ ելլելու, ո՛վ գիտէ դէպի որ անձանօթ դողալթանները չարչարանքի ու մեռելութեան:

Յանկարծ «եալլա՛յ, եալլա՛յ» կը պոռչտայ մէկ ոստիկանը, դէպի մօտակայ չողեկառքը ուղղելով մեզ, եւ «Հայտար ֓աշա» ու «Իսթանպուլ» բառերը կը ծամծմէ ակոսներուն տակ, մի գուցէ խաբէական դիտաւորութեան մը բնայթով:

Բայց իրիկունը Պոլսոյ բանտին մէջ ենք: Ամէն վայրկեան նոր բանտարկեալներ կ'աւելնան, բոլորն ալ հայ, շուարած, խռով ու անհանդիստ, եւ թուրք ոստիկանները՝ դաժան ու հրամայողական:

Պատրիարքարանը տեղեակ է մեր կացութեան: Համաձայն կառավարական հրամանադրի, Պատրիարքարան պիտի փոխադրուինք: Դպրեմանքը Պոլսոյ Պատրիարքարանի հովանաւորութեան ենթակայ կրօնական հաստատութիւն մըն էր:

Վտանդաւոր ժամանակներ էին: Մինչեւ Սեպտ. 1915, մնացինք Պատ-
րիարքարանի մէջ, Պատրիարքարանի հակոգութեան ներքեւ, եւ միշտ Պատ-
րիարքարանի շրջափակէն ներս: Արդէն Պատրիարքարանն ալ խիստ հակոգու-
թեան տակ կը դռնուէր թուրք իշխանութեանց կողմէ:

Երբ դպրոցական տարեշրջանն սկսաւ, Սեպտ. 1915, Պատրիարքա-
րանի կարգադրութեամբ մեկնեցանք Մաքրի Գիւղ, Պէղազեան Երկրորդական
Վարժարանի մէջ շարունակելու մեր ուսումը:

Բարձրագոյն դասարանի աշակերտներ ենք, գիշերօթիկ: Շատ դո՛ւ
ենք, բախտաւոր եւ զրազած մեր դասերով: Պատկառելի դասախօսներ կ'այցե-
լեն վարժարանը, Եղիշէ Արքեպս. Դուրեան, Դաւիթ Սաշկոնց, հայր եւ որդի
Գարեգին եւ Գեղամ Գալաֆեաններ, Գէորգ Սիմֆէշեան, Կէլիպոլեան, եւ ու-
րիշ մեծութիւններ: Վարժարանի տնօրէնն ալ, Պօղոս Պէղազեան, կարեւոր
դէմք մը, մեծ մատահութիւն կը վայելէր կառավարական եւ ոստիկանական
շրջանակներու մօտ:

Համեմատաբար ազատ էինք վարժարանէն դուրս ելլելու, պտտելու
եւ զրօնելու:

Բայց դեռ անստոյգ եւ խաբուսիկ օրեր էին: Տարեշրջանի դպրոցա-
կան դասաքննութեանց ատեն, Յունիս 1916, ոստիկանները թակեցին վարժա-
րանի դուռը, եւ առանց քանի մը վայրկեանի թոյլտուութեան, Արմաշական
աշակերտներս առաջնորդեցին դէպի Մաքրի Գիւղի ոստիկանատունը:

Այդ օրերուն թուրք կառավարութիւնը կը մճէր ջնջել Պոլսոյ Պատ-
րիարքութիւնը եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ՝ Երուսաղէմի Հայոց
Պատրիարքութեան միացնել: Միաժամանակ, Զաւէն Պատրիարքն ալ Պաղատա
կ'աքսորուէր, իր ծննդավայրը, եւ մեզ ալ, որպէս կրօնական վարժարանի ու-
սանողներ, Երուսաղէմի Հայոց վանքը կը ղրկէին:

Մաքրի Գիւղի ոստիկանատան մէջ մեզ հետ էին նաեւ արմաշական
Մամբրէ եւ Կարապետ արեղաները: Նոյնպէս Պէղազեան վարժարանէն երկու
ուսանողներ, Կարնեցի Գարեգին Փաստրիմաճեանի հօրեղբորորդւոյն երկու
ղաւակները, Գեղամ եւ Վահէ, նախկին աշակերտներ Պոլսոյ Մխիթարեան
դպրոցի:

Պոլսոյ կայարանը Փաստրիմաճեան տղաները անջատեցին մեզմէ:
Յետադային տեղեկացումք թէ՛ Պրուսայի մօտերը անբացատրելի չարչարանք-
ներով սպաննած են զանոնք:

Պոլսէն մինչեւ Երուսաղէմ բռնադատ ճամբորդութիւն մը կը մտա-
հողէր մեզ: Անապահով կը զգայինք, ենթակայ թուրք չէթեներու յարձակում-
ներուն ու վայրագութեանց: Ուր երկաթուղու դիմ կար, կը ճամբորդէինք
չօգեկառօքով, այլապէս՝ հետիոտն, չարչարանքի ուղիներով:

Հայտար Փաշայէն երկաթուղային դանդաղ, երկար, ձանձրայի եւ
յոգնեցուցիչ զնացքէ մը յետոյ՝ մեր առաջին հանգրուանը եղաւ Գոնիայի խա-
ւար, խոնաւ եւ զարշահոտ բանտը:

Դուրսը՝ բանտին մօտ հետաքրքիր դէմքեր մեզ կը դիտեն կարեկցու-
թեան մը նայուածքներով: Անոնցմէ մէկը վարանոտ քայլերով կը մօտենայ եւ
հազիւ լսելի շունչով մը կը հարցնէ թէ ո՞վ ենք մենք:

— Արմաշական ուսանողներ», կը պատասխանենք եւ այդքան միայն:

— Ես Հոճա Գրիգորն եմ», ըսաւ մարդը եւ անհետացաւ:

Բանտին անկիւնը ծուարած, վաղուան պատահականութիւններու մա-
տին կը մտմտանք, վաղը որ անորոշ է եւ աւելի մտալիկի:

Գրեթէ երկու ժամ վերջ՝ Հոճա Գրիգոր եւ քանի մը Գոնիացի հայեր, որոնք դործի կապակցութեամբ տեղահանուած չէին, բանտի տնօրէնութեան կը դիմեն, եւ մեծ երաշխաւորութեամբ արտօնութիւն կը ստանան բանտէն հանել մեզ օրուան մը համար, տուն տանել, հիւրասիրել, պատսպարել դիշերը եւ յաջորդ օրը պաշար տալ մեզ եւ բանտ վերադարձնել, ապահով ճամբորդութեան մը հապար ու մէկ բարեմաղթութիւններով:

Այն, Հայուն բարախուն սիրտը, Հայուն ասպնջական ոգին:

Դեռ սկիզբն էր այդ մեր երկարածից ու անստոյգ ճամբորդութեան մինչեւ Պաղեստին, Երուսաղէմի Հայոց վանքը, եթէ այդպէս էր կառավարական հրամանը, որուն նուազագոյն վստահութիւնն անգամ չունէինք, բացի ստոյլիկեան տկարութեամբ բախտին յանձնելով գալիքը:

Ոստիկանական հսկողութեամբ՝ շոգեկապը Պօզանթի կը փոխադրէ մեզ: Ոստիկանները կը լքեն մեզ բանտին առջեւ, եւ կը սկսին ազահօրէն ճաշել ու մեր բախտին վրայ ծիծաղել:

Շատ խիստ հսկողութիւն մը չկայ: Սահմանափակ շրջանակի մը մէջ քայլեր կ'առնենք, շրջապատը դիտելու հետաքրքրութեամբ: Օդը խիստ տաք, եւ արեւը բոբր:

Աղետարչ տեսարան մը: Բաղձաթիւ Հայ կալանաւորներ, նիհար, դալուկ ու հեւասպառ, եւ քրտինքի մէջ ողողուած ճամբուն վրայ անընդհատ քար կը կոտրեն ծանր մուրճերով, շրջապատող թուրք ժանտարմաներու մըտքակներուն ու յուտանքներուն ենթակայ:

Իրիկունը մեզ կը չարտեն մութ յարդանոցի մը մէջ: Կը փորձենք քրնանալ: Ապարդիւն: Մտահոգութիւնը այն է, որ շոգեկապի դիժը կը վերջանայ Պօզանթիի մէջ, ու մենք լեռնային ճանապարհով պիտի քալենք դէպի Տարսոն:

Առաւօտը կը բացուի, պահակներէն մէկը կը բանայ յարդանոցի դուռը, բաներ մը կը մըթմըթայ, բայց խտուրթեան ու սպանձալիքի փորձեր մը չընեն:

Անճամբեր ու անհանդարտ՝ կը սպասենք ճամբայ կլլելու, բայց անպարանքի նշաններ մը չկան ու մենք, ոստիկանական հսկողութենէ ոչ շատ հեռու, արեւին տակ կը շրջադայինք:

Անտոյոր-եռուղեռ մը կը տիրէ Պօզանթիի մէջ: Բաղձաթիւ բեռնակառքերու խճողում մը: Գերման զինուորներ ռազմաթերք կը փոխադրեն Պաղեստին ճակատը, եւ բամպակի բեռներով կը վերադառնան: Զինուորական տարազով երկու անձեր ալ դէպի մեզ կ'առաջանան: Նախազդացում մը կ'արթըննայ մեր մէջ: Հայու կը նմանին, Հայու դիմադիժ, Հայու աչքեր:

Բախտաւորութիւնը... Գերմանացիներու մօտ զինուորական շուրթագմաններ են, որոնց քարեթօնութեամբ ու միջնորդութեամբ Գերմանական բեռնատար ինքնաշարժ կառքերով ճամբայ կ'ելլենք դէպի Տարսոն, Տարսոնին լեռներու քարքարոտ ու ամայի ուղիներով:

Տարսոնի ոստիկանատունը պարսպապատ ընդարձակ շէնքի մը մէջ ենք: Թշնամական սպանձալիքներ չեն ընեն: Տեղւոյն անուանի հայերէն՝ Շալիարճեան եղբայրները, որոնց վստահուած էր շրջանի թուրք բանակին համար զորքնի ու ալիւրի մատակարարումը, ոստիկանատուն կ'այցելեն, կը քաջայերեն մեզ, նաեւ դրամական օգնութիւն, հարկ եղած ժամանակ ոստիկանները կ'աշտուելու նպատակով, ի հաշիւ ապահով ճամբորդութեան:

Տարսոնի կը յաջորդէ Ատանայի բանտը, հազիւ կ'ծկուելու չափ խցիկ

մը, ուր խոսող ու խոսողէմ պահակներ, մէջ միայն կաթիլ մը քուր խմելու արտօնութիւն չեն տար, այլ եւ անդադար կը հայհոյեն, թուրք հայհոյարանական շատ ճոխ հոլովոյթներով:

Արդեօք ճնշումի ու բռնութեան նախափորձ մը:

Արդեօք չարագուշակ ազդարարութիւն մը դալիք վատ օրերու:

Մամբրէ արեղան¹, միշտ լաւատես, կը քննայ փարատել փախի ու վտանդի ամէն զգացում, եւ քրիստոնէական բարեմտութեամբ կը փորձէ խաղաղ ու պայծառ օրերու յոյսը ներշնչել մեզ:

Մինչ այդ՝ ճամբայ կ'ելլենք դէպի Ճիհուն, դէպի Օսմանիյէ, եւ Ամենոսի լեռնային կիրճերով դէպի Իսլահիյէ, ենթակայ հետիոտն ճամբորդութեան մը բազմապիսի դաժանութեանց:

Բալահիյէի բանտը եւ ոստիկանատան մէջ՝ ժէօն թուրք սպաներ «կեալութիւններու արիւնոտ սպանդին դէպքերը կը հաշուեն լրբօրէն, միաժամանակ զարմանք յայտնելով թէ ինչպէ՛ս թոյլատրուած չէր ոստիկաններուն, Արմաշական ուսանողներուն հաշուեյարդարն ալ կատարելու Ամենոսի ամալի ձորերուն մէջ:

Գիշերը մղձաւանջ մ'եղաւ: Անքուն աչքերով պահակներու շարժումներուն կը հետեւինք: Ժամերը որքա՛ն դանդաղ կը յառաջանան: Ողջո՛յն, բա՛րի առաւօտ: Պաւարին հետ փախը կը փարատի: Ոստիկանները կայարան կ'առաջնորդեն մեզ: Շոգեկառքը դէպի Հալէպ կը սուրայ:

Հալէպի բանտին մէջ մեզմէ շատերը կը հիւանդանան: Գլուխի ցաւ, պաղատութիւն, հազ, ջերմութիւն: Զինուորական բժիշկ մը կը քննէ մեզ: Հայ է, լրջախոհ ու բարեմոյն հոգի մը:

«Մի մտահոգուիք», կ'ըսէ հայ բժիշկը գուրգուրանքով, «չարաթի մը շտի կը պահենք ձեզ Հալէպի մէջ, կը լաւանաք ու ապահով կը շարունակէք ձեր ճամբորդութիւնը»:

Որքան երախտապարտ ենք Հայ բժիշկի՝ հոգածութեան ու դարմանումին:

Շարաթ մը փերջ՝ դէպի Դամասկոս: Հնադարեան այս քաղաքի բանտին մէջ թուրք ոստիկանութիւնը համեմատաբար մեղմ վերաբերմունք ցոյց կու տայ մեզ հանդէպ: Արտօնութիւն կը արտօնենք Դամասկոսի հայոց եկեղեցին ու առաջնորդարանը այցելելու, ուր տեղւոյն հովիւը՝ Արիստակէս Վրդ. Պաշտօնութեան շատ բարեսցակամօրէն կ'ընդունի մեզ, կը հիւրասիրէ, եւ ուրախութիւն կը յայտնէ, որ Դպրեմանքի ուսանողներուն թոյլ տրուած է քաղաքական այս վտանգաւոր օրերուն Երուսաղէմ փոխադրուիլ:

Յուլիսի փերջերը, 1916, ապահով Երուսաղէմ կը ժամանենք, եւ կ'ամփոփուինք Հայոց մանքին մէջ, որպէս կրօնական վարժարանի աշակերտներ:

Պատերազմական խիստ պայմաններու ենթակայ՝ տնտեսական անձկութեան մէջ կը դառուէր Վանքը այդ օրերուն, եւ խճողուած՝ հազարաւոր Հայ զաղթականներով: Երուսաղէմ տարադրուած էին նաեւ թրքահայ շատ մը բարձրաստիճան եկեղեցականներ: Ժամանակաւորապէս փոկ էր ժառանգութեանց Վարժարանը, բայց պատեհութիւն տրուեցաւ մեզ հետեւելու Օրմանեան

¹ Մամբրէ Աբֆ. Սիրունեան, Առաջնորդ Եգիպտահայոց, վախճանած 1966-ին:

Սրբազանի և Գարեգին Վրդ. Սալապուրեանի² կարգ մը դասախօսութեանց :

Պաղեստինի պատերազմական ճակատը հետզհետէ կը տկարանար, հակառակ թուրք և գերման ուժերու դիմադրական յամառ ճիգերուն :

Թուրք կառավարութեան կողմէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնն ալ իր Սինոդով կը փոխադրուէր Դամասկոս : Լուր կը տարածուէր թէ պատերազմական կացութեան հետեւանքով՝ քաղաքի ընդհանուր բնակչութիւնն ալ փոխադրուելու էր աւելի ապահով վայրեր, երբ Անգլիական բանակը բազմական ճարտար հարուածով մը դրակեց Երուսաղէմը 1917-ի Դեկտեմբերին :

Քաղաքը փրկուած էր : Անգլիական բանակի յառաջացումով Հայ դադթականներու նոր կարաւաններ կը հասնէին Երուսաղէմ :

Թրքական բանակի պարտութեան և Հայ Լեզգիականներու յաղթանակի լուրերը անշափօրէն կ'ոգեւորէին ու կը խանդավառէին մեզ :

Նոյեմբեր 11, 1918, դինադադար և վերջ Համաշխարհային Առաջին պատերազմի :

Այսօր, երկար տարիներ յետոյ, Արմաշու Դպրեւանքի վերջին դասարանի ապրող քիչերս, տարտղնուած Հայրենի Աշխարհէն մինչև հեռաւոր երկիրներ, ցաւով ու սարսուռով կը վերջիշենք ողբերգական երէկը, աւելի քան համոզուած՝ Հայ ժողովուրդի վերապրումի չքեղ ոգին, ստեղծագործ հզօր ճիգին և յուսովեղ ապագային :

6. ԹՈՐՈՅԵԱՆ

Տիրորոշ

² Դպրեւանքէն շրջանաւարտ 1905-ին և յետագային Պատրիարք Թուրքիոյ Հայոց 1951-1962 :

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԳԵՐՇ. Տ. ԱՍՈՂԻԿ ԱՐՔԵՊՍ. ՂԱԶԱՐԵԱՆԻ

Երկար և տանջալի հիւանդութենէ մը ետք, Հայաստանի մէջ 7 Մարտին վախճանեցաւ Իրաքի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Ասողիկ Արքեպս. Ղազարեան :

Հանդուցեալը ծնած էր Պեհկանի 1909-ին : Մեծ եղեռնին կորսնցուցած էր իր ծնողքը, և իրրիւ որբ ուրիշ հաղարատներու հետ մնացած Մուսուլի և Պաքուպայի որբանոցներուն մէջ : Ուրիշներու կարգին ինք ևս 1924-ին ընդունուած էր Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարան, ուր 1927-ին սարկաւագ ձեռնադրուած էր Երջնիկ Տ. Եղիշէ Պատրիարք Գուրեանի : Աւարտելով Ընծայարանի բաժինը, Երջնիկ Տ. Թորոզմ Պատրիարք Գուրեանի ձեռամբ կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր 1932-ին :

Իրրիւ Հովիւ Մանչուրիոյ, Ճարտնի և Զինաստանի Հայոց, 1937-ի դժուար օրերուն մեկնած էր իր պաշտօնատեղին՝ Պարպին. վերահաս պատերազմի տարիներուն, 1941-1945, դռնուած էր Ճարտնական կեդրոնացման ճամբարներու մէջ, ենթարկուելով բազում տառապանքներու : 1950-ին վերադարձած էր Երուսաղէմ, ապա նշանակուած Հովիւ Լոս Անճելըսի, մինչև 1954, երբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վաղդէն Ա Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ մեկնած էր Աւստրալիա :

1957-ին նշանակուած էր Հայրապետական Պատուիրակ Հեռաւոր Արևելքի. նոյն տարին ընդունած էր իր եպիսկոպոսական օծումը Վեհափառ Հայրապետին կողմէ :

1963-1965 պաշտօնավարած էր Ս. Էջմիածին, իրրիւ Ժամօրհնոյ Մայր Տաճարի և դասախօս՝ Հոգեւոր ձեմարանին մէջ :

1965-ին կ'ընտրուի Իրաքի Հայոց Առաջնորդ. պաշտօն՝ չոր կը վարէ մինչև իր վախճանումը մեծ ձեռնհասութեամբ և յաջողութեամբ, իր շուրջ ստեղծելով անկեղծ սիրոյ և յարգանքի ջերմ մթնոլորտ մը : 1975-ին կ'արժանանայ արքութեան պատիւի :

Իր վերջին փափաքը եղեր էր հանգստանալ Ս. Էջմիածնի մէջ. արդէն մահամեծ, զինք օղանաւով փոխադրեր էին Երեւան, ուր հազիւ հիւանդանոց հասած, իր աչքերը յաւէտ փակեր էր Հանդուցեալ Սրբազանը : Վերջին օծման կարգը և թաղումը կատարուեր է Մարտ 10-ին, Ս. Գայիանէի վանքի տաճարին մէջ և մարմինը ամփոփուած հանդուցեալ Տ. Հայկազուն Արքեպս. Արաւամեանի շիրմին մօտ :

Այսպէս իր աւարտին կու գայ կեանք մը անընդհատ ղործունէութեան և աշխատանքի՝ ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և յօգուտ մեր տառապած ժողովուրդին :

Աղօթք և խունկ հանդուցեալի մաքուր յիշատակին :

ՀԱՆԳԻՍՏ

ԳԵՐՇ. Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊՍ. ԱՊԱՏԵԱՆԻ

Դարձեալ կսկիծը կը լեցնէ մեր սիրտը՝ ի լուր մահուան սիրելիի մը, Աստուծոյ եւ ազգին պատուական պաշտօնէի մը՝ որ կ'իյնայ յանկարծ իր էեանքի ամէնէն պայծառ հանգրուանին, մարդկային հասակի այն կէտին՝ ուր կրթութեամբ եւ զարգացումով պիտի կարեմար աւելիով իրագործել ինքզինքը, ի նպաստ Հայ եկեղեցիին որ այնքան պէտք ունի նման առաջնորդներու, այս օրերուն մահաւանդ։ Ոչ եւս է Բարգէն Սրբազանը... Այս անուշ անունին առջեւ կը մթագնի մեր հոգին, մինչ իր քաղցր դէմքը կը շարունակէ կանգնած մնալ մեր կոտորած հայուածքին առջեւ, անգայտ մշուշի մը մէջէն ժպտուն, ինչպէս էր ինքը իր կենդանութեան։

Հեռագիր մը Պուէնոս Այրէսէն Երուսաղէմ, սեւ պարանի մը պէս կը բերէր իր մահուան գոյժը, որքան անակնկալ այնքան ցաւառիկ։ Գիտէինք թէ Ժամանակէ մը ի վեր Փիզիֆական տկարութիւն մը, սրտի եւ ջղային դրութեան հետ կապուած, երբեմն պզտիկ սազնապնք կը պատճառէր իրեն, սակայն չէինք երեւակայել թէ այսքան շուտ պիտի բաժնուէր մեզմէ։

Մահը կը պատահէր Ապրիլ 24-ին, Մանքէվիտեյի մէջ, ուր գացած էր նախագահելու Ապրիլեան եղեռնի հանդիսութիւններուն։ Թափօրին գլուխը՝ նահատակներու յուշարձանին ծաղկեպսակի գետեղումէն յետոյ, նոյն իրիկուն իր յարգանքի խօսքը կ'ընէր, փակելով հանդէսը, երբ սրտի կարուածով յախտնապէս հրաժեշտ կ'առնէր, խոր սուգի մատնելով ամբողջ գաղութը ոչ Հայաստանեայց եկեղեցին։

Իր մահով կարեւոր դէմք մը եւ արժէքաւոր ուժ մը կը պակսի Հայ եկեղեցւոյ կեանքէն։ Համակ շնորհ էր ան արդարեւ, իր բարբիւն, իր զգացումներուն, իր ընկերակցութեան եւ սիրոյն, յարաբերութիւններու ազնւութեանը մէջ։ Հեզ ու խաղաղ էր բնավորութեամբ, սակայն, ընդլզեցնող երեւոյթներու առջեւ յանախ սուրբ սրտմտութեամբ պայքրելու պատրաստ։ Իրեն եկեղեցական իր գործունէութեան մէջ պարագաները կշռել գիտէր, նպատակը միջոցներուն չգոհելու ողջմտութեամբ։

Բարգէն Արք. Ապատեան ծնած էր 1917-ին Հալէպ, Այնթապի ծրնողքէ։ Յանախած է Հալէպի ազգային վարժարանը եւ Կրթասիրաց դպրոցը, ուր առած է իր նախնական ուսումը եւ շրջանաւարտ եղած 1932-ին։ Նոյն տարին կուգայ Երուսաղէմ, իբրեւ աշակերտ Ս. Արք. Ժառանգաւորաց վարժարանին եւ Ընծայարանին։ Ժրամիտ եւ լուրջ էր եւ միշտ առաջինը կը հանդիսանար իր դասարանին։ Իր գլխաւոր ուսուցիչները եղան Թորգոմ Պատ-

լիարք Գուշակեան, Շահան Պերպլերեան, Յակոբ Օշական, Տիրան Սրբազան, Եղիշէ Պատրիարք, Սերովբէ Սրբազան եւ ուրիշներ :

1939-ին վեց ընկերներով կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Մեսրոպ Նշանեան Պատրիարքէն : 1945-ին կը նշանակուի Եափայի վանքին տեսուչ եւ հոգեւոր հովիւ համայնքին, նոյն տարին վարելով տեղւոյն Ս. Գլխադիր ազգային վարժարանին տեսչութիւնը :

1959-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ կը հաստատուի Պուէնոս Այրէս, որպէս Հայրապետական Պատուիրակ Հարաւային Ամերիկայի : Շուրջ քրտան տարիներ խոհեմօրէն կը վարէ բեմը, վայելելով ամէնուն սէրն ու յարգանքը :

Ամէն տեղ, իբրեւ իր կոչումին հաւատարիմ հոգեւորական, խղճմտօրէն կատարեց միշտ իր պարտականութիւնները, սրտանց սիրելով իր խնամքին լանձնուած ժողովուրդը եւ սիրուելով ամէնքէն : Ուրիշ կողմ մը իր նկարագրին, շատ քիչերու յատուկ դժբախտաբար, լուրջ եւ աշխատասէր մտաւորականի իր առաւելութիւնն էր : Հանրային ասպարէզի մէջ չմտցաւ գիրքն ու գրիչը, հասարակական կեանքի բոհութիւնն մէջ սրտին ամէնէն մաքուր սփռիւնքը բերող այդ գրադուսմը :

Յիշատակիդ առջեւ տրտմաւոր, ո՛հ արդէն իսկ յիշատակ դարձար, սիրելի Բարգէն Սրբազան, երբ ամէնքը որոնք նանչցած էին զքեզ՝ կը մտածէին այն կարելիութիւններուն մասին որոնց մէջ պիտի շարունակէիր գործդ աւելի յորդ արդիւնաւորութեամբ, պտղաբերելու կեանքդ ու կարողութիւններդ :

Կը հաւատանք քէ վերջին այն պահուն՝ երբ նայուածքդ կը փակէիր այս կեանքի ստուերներուն, քանալու համար գայն մեծ լոյսին, շրթներդ վերջին անգամ մըն ալ մրմնջեցին տէրունական խօսքը, «Եղիցին կամք քո» : Կը հաւատանք քէ զուարթ հոգիով պիտի կենաս Աստուծոյ առջեւ, սրբուած ու մաքրուած հոգիով, վասնզի քու կեանքդ Անոր քեզ շնորհած քանգարներուն շահաւորումը եղաւ երկրի վրայ :

Արցունք եւ խունկ յիշատակիդ, սիրելի Բարգէն Սրբազան :

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳԵՐՇ, Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊՍ, ԱՊԱՏԵԱՆԻ

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը խոր սուգի մատնուեցաւ անակնկալ վախճանումովը Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Բաբգէն Արքեպս. Ապատեանի: Գերաշնորհ Սրբազանին կկանրին թելը կը կտրուէր արտի տաղնապի մը հետեւանքով, Մոնթէվիտէոյի մէջ, Ապրիլ 24-ի երեկոյեան, երբ արգէն նախագահը էր Ապրիլեան եղեռնի ողբ-կոչումի հանդիսութիւններուն եւ ըրեր իր յարգանքի խօսքը:

Հանդուցեալ Սրբազանը ծնած էր Հալպ, 1917-ին: Մենդալաբին Ազգային ինչպէս նաեւ Այնթապի Կրթասիրաց վարժարաններուն մէջ ստանալէ ետք իր նախակրթարանային ուսումը, 1932-ին ընդունուած էր Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը: Հոն ստացած էր բարձրագոյն ուսումը, իրեն ուսուցիչներ ունենալով Երջնի. Տ. Թորոգոմ Պատրիարք Գուշակեանը, Ս. Աթոռիս Գահակալ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրաէրեանը, Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Սերորէ Արքեպս. Մանուկեանը, Յակոբ Օշականը, Շահան Պէրպէրեանը եւ ուրիշներ:

1939-ին, աւարտելով իր ուսումը, Երջնի. Տ. Մեսրոպ Պատրիարք Նշանեանի ձեռամբ կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր վեց ընկերներու հետ:

Ձեռնադրութենէն ետք մինչեւ 1945 զանազան վարչական պաշտօններ վարած էր Ս. Յակոբեանց վանքէն ներս. նոյն տարին նշանակուած էր Խոֆայի վանքին տեսուչ եւ համայնքին հովիւ, միաժամանակ ստանձնելով տեղւոյն Ս. Գլխաղիր ազգային վարժարանին տնօրէնութիւնը: Մեծ ձեռնհասութեամբ եւ պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ վարած էր այս պաշտօնները, մանաւանդ 1947-էն ծայր տուած Արար-Փարայէլեան պատերազմի չփոթ ու դժուար օրերուն:

1959-ին եպիսկոպոս ձեռնադրուած էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսէն եւ նշանակուած Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ: Հաստատուելով Պուէնոս Այրէս, Հանդուցեալ Սրբազանը մինչեւ իր անժամանակ վախճանումը, մօտ քսան տարի խոհեմօրէն եւ իմաստութեամբ հովուած էր իրեն վստահուած ընդարձակ թեմը:

Գերշ. Տ. Բաբգէն Արքեպս. Ապատեանի վախճանումով, Ս. Յակոբեանց Միաբանութիւնն ու Հայաստանեայց Եկեղեցին կը կորսնցնեն նուիրուած եկեղեցական մը եւ ազգասէր հովիւ մը, պատրաստուած մտաւորական մը եւ քաղցրադոյն անձնաւորութիւն մը:

ՏԻԳՐԱՆ ՍՄՍԱՐԵԱՆ

1891 - 1978

Պատրիարքական Աթոս ցաւալի կորուստ մը արձանագրեց Տիգրան Սմաթեանի մահումը: Բարեկամ մը, համակեր մը եւ ամբողջական նուիրումով: Անտակարկ եւ խանդավառ պատրաստակամութեամբ, ան միշտ պատասխանեց մեր կոչերուն եւ հասաւ մեր օղնութեան, երբ հիմնեցինք «Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Բարեկամներու Միութիւնը»: Տաօը տարիներ շարունակ, ան եղաւ Միութեան քարտուղարը, որովհետեւ խորապէս կը հաւատար Երուսաղէմի առաքելութեան:

Տիգրան Սմաթեան ծնած էր Տիգրանակերտ 1891-ին եւ ծնողքին հետ Միացեալ Նահանգներ հաստատուած 1900-ին: 1912-ին ստացած էր Ամերիկեան իր հպատակութիւնը, եւ իրբեւ փաստարան վկայուելէ ետք Նիւ Եորքի Օրէնքի համալսարանէն, մտած էր կեանքի ապարդէ՞ղ՝ Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրքի նահանգներուն մէջ՝ դործելով:

Համաշխարհային Առաջին Պատերազմին զինուորագրուած էր, ծառայելով Ամերիկեան Մոլմոսթին մէջ: Այդ շրջանէն կը սկսի հանգուցեալին հանրային դործունէութիւնը, որ կը տարածուի իր ամբողջ կեանքին միայ, մինչեւ մահը: Ան հիմնադիրներէն եւ ղեկավարներէն էր Թէքէեան Մշակութային Միութեան, որուն ի նպաստ բազմաթիւ այցելութիւններ կատարած էր Միացեալ Նահանգներու զանազան նահանգները, Հարաւային Ամերիկա, Եւրոպա եւ Միջին Արեւելք: Գործօն եւ հիմնադիր անդամ էր Ետեմիրն Սիթիի (Նիւ Ճըրքի) Վարդանանց Ապոլոններու մասնաճիւղին: Անդամ էր նաեւ Հայ Ուսանողներու Միութեան, Հայկական Ուսումներու Ազգային Միութեան, Հայկական Իրաւունքներու Շարժումին եւ Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան:

Իրբեւ մասնագէտ հայկական հարցի, 1976 Մայիսին հանգուցեալը վկայութիւն տուաւ Միացեալ Նահանգներու Ներկայացուցչական Տան Միջազգային Գարարերութիւններու Բանձնաժողովին առջեւ, դատապարտելով 1915ի ցեղասպանութիւնը:

Տիգրան Սմաթեան ջերմ հաւատացեալ մըն էր, եւ անտակարկ աշխատած էր Հայաստանեայց Եկեղեցիի պայծառացման համար:

Իր բոլոր զբաղումներուն եւ աշխատանքներուն կողքին, տասնեակ տարիներէ ի վեր նկարչութիւն կ'ընէր (խղաներկ)՝ իր գործերէն ոմանք կ'յտնուին Ս. Աթոռիս Ալեքս եւ Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարանին եւ Ընծայարանին մէջ:

Տիգրան Սմաթեան կը մեռնէր Ապրիլ 25ին, սրտի կաթուածի իրր հետեւանք: Յուղարկաւորութիւնը տեղի ունեցած է 28 Ապրիլին, Եղնիլըն Սիթիի Ս. Պաշ Եկեղեցիին մէջ, իսկ հողահանդատեան մասնաւոր պաշտօն կատարուած է յաջորդ օր, Նիւ Եորքի Առաջնորդանիստ Ս. Վարդան Տաճարին մէջ:

«ՍԻՈՆ» իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ Այրի Տիկին Սաթևնիկ Սմաթեանին եւ զաւակներուն, աղօթք ու խունկ մատուցանելով ի Տէր հանգուցեալ Տիգրան Սմաթեանի յիշատակին:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

8701 - 1981

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՐՈՒՍԱՂԷՍ

1977 - 1978

Կիրառի, 11 Յունիս 1978, երկույեան ժամը 6.30-ն ձեղի ունեցաւ Ս. Թ. Երզնանցաց եւ Վարժարանի Ամսագրի Հանդէսը, նախագահութեամբ Ամենապատիւ Ս. Պատրիարք Զօ. Է. Ի ներկայութեան Ս. Յովնանայ Միաբանութեան եւ ժողովարդի բազմութեան:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ 1978 թուին յայտարարած էր որպէս Յովնանայի սարի մեծ տուն Տ. Յովնանէս Կոյոս Կ. Պապոյ Պատրիարքի ձեռնդրեալ երեւոյթութեամբ (1678 - 1978): Հետեւեալ ամսագրի հանդէսի յերթութեան պաշտօնը նախընտրած էր այն Յովնանի տուն կառուարութեան, որուն յայտագիրը կը գտնուէր այս ձեւակագրին:

Հանդէսի երկուրդ բաժնին մէջ կառուարեցաւ մեծանակներու եւ աւարտական դասարանի վարժականաց բաժնումը: Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր Զօ. Է. զարգումն ու օրհնութեան խօսքը: Իւր վարժարանի Գերաշնորհ Տեսուչը կարգաց իւր տեսչական տարեկան հետեւեալ ձեւակագրերը. որը կը յանձնենք մեր վարժարանի բոլոր պատուական նախաւորներուն եւ կրթութեւն բարեկամներուն ստացուցանեմք:

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիս. Տէրաւերեան,
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռայ,
Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Միաբանակից
եղբայրներ եւ յարգելի հանգիստականներ

Դպրոցական կրթական անմիջապէս աշխատանքի տարի մը եւս բոլորած բլլալու գոհունակութեամբ կանգ կ'առնենք այս բեմին, կատարելու համար 1977-78 դպրոցական տարեշրջանի Ս. Թարգմանչաց երկ. վարժարանի տեղեկատուութիւնը:

Կրթական այս պատասխանատու գործին մէջ տարւոյս ընթացքին մեզ հետ օժանդակ ունեցանք 27 հոգիանոց ուսուցչական անձնակազմ մը, որոնք անձնութեամբ ու բարեխնամութեամբ կատարեցին իրենց վստահեալ գործը եւ մենք այս հանգիստաւոր առիթով սրտագին

շնորհակալութեան խօսք ունինք միայն իրենց համար:

Իսկ մեր աշակերտութիւնը իբրեւ թիւ եւ որակ հետեւեալ պատկերը կը ներկայացնէ -

Մեր ընդհանուր աշակերտութեան թիւը տարւոյս ընթացքին 230 էր, բաժնւած հետեւեալ ձևով. -

Երկրորդական կարգեր	32 մանչ	
40 աղջիկ	համագումար	72
Նախակրթական կարգեր	45 մանչ	
50 աղջիկ	համագումար	95
Մանկապարտէզ	30 մանչ	
33 աղջիկ	համագումար	65
համագումար աշակերտութեան		230

Մեր աշակերտութեան 220-ը երուսաղէմի Հայ գաղութին գաւառներն են, իսկ 10-ը բերուած են Թուրքիայ ներքին գա-

ւառներէն, մասնակներ՝ որոնք անտեղեակ էին իրենց լեզուին, կրօնքին ու պատմութեան:

Չունեցանք աշակերտական կարգապահական դժուարութիւններ: Գոհութիւն Աստուծոյ, մեր աշակերտներու բարեկրթութիւնը շատ աչքառու իրականութիւն մըն է, ինչ որ արդիւնքն է թէ՛ մեր Երուսաղէմական-վանական հոգևոր ու բարոյական ընդհանուր մթնոլորտին և թէ՛ մեր Երուսաղէմական Հայ բնաժողովրդի շնորհաբերութեան ընտանեկան ընտիր շրջապատին:

Մեր ուսումնական ծրագիրը բոլոր դաստարաններուն համար ունէր հետեւեալ գլխաւոր տեսակաւորումները — լեզուական, հայագիտական, գիտական: Մանկապարտէզի մէջ ուսուցանեցան Հայերէն, Անգլերէն և Արաբերէն լեզուներ, իսկ գիտական ու պատմական դասերը ուսուցանեցան Հայերէն լեզուով: Նախակրթարանի մէջ ուսուցանեցան Հայերէն, Անգլերէն, Արաբերէն և Երբայեցերէն շորս լեզուներ: Իսկ պատմական-գիտական դասերը ուսուցանեցան Հայերէն լեզուով:

Երկրորդական դաստարաններուն մէջ դարձեալ ուսուցանեցան վերոյիշեալ շորս լեզուները առաւել Հայագիտական ճիւղեր, Հայերէն լեզուով, և գիտական ճիւղեր՝ Անգլերէն լեզուով: Նաև փորձեր եղան թուարանութիւն, գիտութիւն, արարական պատմութիւն ուսուցանել Արաբերէն լեզուով:

Երկրորդական բաժնին համար իբրև ուղեցոյց ունեցանք Անգլիական General Certificate of Education (London G. C. E.)-ի կրթական ծրագիրը և հետեւաբար, ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի ևս մեր աշակերտները մասնակցեցան Լոնտոնի G. C. E.-ի միջազգային քննութեանց:

Այս տարուան շրջանաւարտներուն G. C. E.-ի քննութեանց արդիւնքները առկաին չեն ստացուած:

Իսկ անցեալ տարուան շրջանաւարտներու G. C. E.-ի քննութեանց արդիւնքը եղած է հետեւեալը. —

Ալիք Տէր Վարդանեան յաջողած է, Ordinary level, Արաբերէն, Երբայեցերէն,

Անգլերէն և Մաթեմատիք ճիւղերու քըննութեանց մէջ, իսկ Advanced level Հայերէն լեզուի քննութեանց մէջ:

Արսա Գարեհեան յաջողած է հետեւեալ 5 ճիւղերու քննութեանց մէջ. — Հայերէն, (Advanced level) Արաբերէն, Անգլերէն լեզու, Անգլիական գրականութիւն և Պատմութիւն, բոլորն ալ Ordinary level.

Անգա Ներսիսեան յաջողած է հետեւեալ 4 ճիւղերու քննութեանց մէջ. — Հայերէն, Անգլերէն լեզուներ, Մաթեմատիք և յաւելեալ Մաթեմատիք, բոլորն ալ Ordinary level.

Անցեալ տարւոյ մեր վեց շրջանաւարտներէն վերոյիշեալ երեքը իրենց ուսումնական ընթացքը կը շարունակեն օտար համալսարաններու մէջ, իսկ մնացեալ երեքը կը գործեն զանազան անպարէզներու մէջ իբրև ամսականաւար պաշտօնականներ:

1977 Դեկտեմբեր 26 Գումար 7 1978 Ժամանակամիջոցին տեղի ունեցան մեր կիսամեայ քննութիւնները, իսկ 23 Մայիսէն 2 Գումար՝ ամառային քննութիւնները, որոնց իբրև արդիւնք մեր աշակերտներէն տասը կը ձախողին և կը կրկնեն իրենց դաստարանները, իսկ մնացեալները յաջողութեամբ կը շարունակեն իրենց ուսումնական ընթացքը:

Իսկ մեր աւարտական դաստարանէն հետեւեալները կը ստանան այսօր իրենց աւարտական վկայականները. —

- Արամ Գարեհեան
- Դանիէլ Մարգարեան
- Զարեհ Երզնկեան
- Կարօ Օտապաշեան
- Շուքրի Թաշեան
- Սարօ Նազգաշեան
- Վիգէն Տէմիրճեան
- Օհան Սիմոնեան
- Ազնիւ Սահակեան
- Արտա Տօնիկեան
- Լուսին Պոյաճեան
- Մէրի Տէտա

Մեր Մանկապարտէզի փոքրիկներէն 19 հոգի կ'անցնին Նախակրթարանի բաժին: Անոնք իրենց Մանկապարտէզի աւարտական վկայականները ստացան 1978

Յունիս 4-ին՝ Մանկապարտէզի Ամսօրերի Հանդէսի ընթացքին:

Շարունակեցինք այս տարի իսկ թէ՛ աղջիկներու և թէ՛ աղջց յառուկ ամենօրեայ մարմնամարզի վարժութիւնները, զեկամարտութեամբ Պր. Յակոբ Նաճարեանի, որ ամբողջ տարի մը անվարձ ծառայութեամբ բերու իր աշխատակցութիւնը, որոնք այս տարի ընկեր շնորհակալութեան օրով խօսքերու իսկ 14 Մայիս 1978 իրրակի կէսօրէ ետք սեղի ունեցաւ մեր վարժարանի տարեկան մարզահանդէսը, ուր մեծ իրարիկները, ի ներկայութեան ծնողներու և բարեկամներու բաղձութեան կատարեցին իրենց մարմնամարզական վարժութիւններու տարեկան ցուցահանդէսը:

Դասերուն յարակցաբար շարունակեցինք աղջկանց բաժնին յատուկ ձեռագործի պահերը, որոնց արդիւնքը ծախու դրուեցաւ մեր տարեկան պազարին, որ սեղի ունեցաւ 1978 Մայիս 20-ի 21 Շաբաթ և կիրակի օրերուն:

Պազարը կրաւ մեր գաղութին համար կերութեամբ, զուարճութեանց համախմբումի առիթ մը ու նոյն տոնէ վարժարանին տպահովեց առայժմ 39,000 խորանջէլեան լիւրայի եկամուտ մը որ պիտի երևի յառաջիկայ տարւոյ մեր հաշիւներուն մէջ:

Իսկ 1978 Յունուար 8-ին ունեցանք մեր Ամանորի խրախճանքի օրը, մասնակցութեամբ մեր դպրոցի բարեկամներու և ծնողներուն, որ իր կարգին համ-

դիստացաւ զուարճութեանց և ընկերային հանդիպումի ձեռնարկ մը ու վարժարանին տպահովեց 13,000 լիւրայի զուտ եկամուտ մը:

Ըստ նախընթացի մեր աշակերտները շարունակեցին մաս կազմել Հայ Երեսաստղէմի հոգեւոր-կրօնական արարողութեանց: Սովորական կիրակիներուն խմբովին առաջնորդեցինք զիրենք եկեղեցի, իսկ տօնական առիթներով մասնակցեցան թափօրներուն ու հոգեւոր երգեցողութեանց: Զուտի և Մնունդի տօնակատարութեանց առթիւ մասնակից եղան Ս. Հաղորդութեան խորհուրդին, ու նաեւ վարժարանէն ստացուած իրենց կրօնական դաստիարակութեամբ անոնք հաղորդակից դարձան մեր Եկեղեցւոյ ազգային-կրօնական հոյակապ ողբիւնութեան:

Այստեղ մասնաւոր շնորհակալութեամբ յիշատակութեան արժանի կը նկատենք այն ուր կրթական Նախարարութեան կողմէ վարժարանիս յատկացուած 45,000 խոր. Լիւրայի նուիրատուութեամբ մենք այս տարի կարելիութիւնը ունեցանք մեր վարժարանը ներկի և ծնկի ընդհանուր նորոգութեան մը ենթարկելու: Ինչ որ մեր վարժարանը օժտեց ներկայանալի տեսքով մը:

Մեր կրթական-բարոյական համաբարասութեան զուգրնթաց կը կատարենք նաեւ մեր վարժարանի տնտեսական-եղև մըղտկան հոշմեւտարութիւնը որ հետեւեալն է:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎՈՒՆԵՐՈՒ ԵՒՆԻՄՏԻՑ Ս. ԽԱՐԿԱՆԶԱՏ ԵՐԿՐ. ՎԱՐՃԱՐԱՆԻ

1977 Յուլիս 1 — 1978 Յուլիս 31

Մ Ո Ւ Տ Ք

Ի. Լ. Աւել

Պատրաստ ի գրամարկի անցնալ դպրոցական տարեւրջանէն	139,312.22
Նուիրատուութիւններէ	591,480.00
Աշակերտական տարեվճարներէ	144,890.00
Դասագիրքերէ և դասատետարներէ	12,300.00
Հանդէսներէ և ձեռնարկներէ (Պաղար, խրախճանք, Օրացոյցներ)	40,490.80
Բացառիկ (Բաղարապետարանէն նուէր)	45,000.00

Ընդհ. Մասը 573,479.02

Ե Լ Ք

Ամսականք պաշտօնէութեան	677,988.00
Դասագիրքեր և դասատետրեր	38,070.00
Գրենական պիտոյք	1,389.00
Թղթատարական ծախքեր	3,375.00
Ձեռագործի նիւթեղէնք	4,430.00
Մանր ծախքեր և մաքրութիւն	1,314.50
Տպագրական գործեր	7.5.00
Հանդիսական ծախքեր	1,430.00
Շինուածական ծախքեր և կահոյից նորոգութիւնք (գլխաւոր ծախք՝ գպրոցի ընդհ. վերանորոգութիւնք, ձեռք, ներկ և լին. 50.00 լիւրա, մնացեալները՝ մանր նորոգութիւնք խողովակաց, ապակիներու, կահոյից և լին.)	53,787.00
Բացառիկ ծախքեր (Տարբարածարանի գործիքներ, մանկավարժական խաղա- լիքներ և պատուատիրութիւնք)	12,717.10
Դպրոցի ինքնաշարժի ծախքեր (ներկ և ապահովագրութիւն, խոկ վարիչի և այլ ծախքեր փակուած օբյեկտներուն)	1,514.00
Sportի	300.00
	Ընդհ. ելք 790,069.00
Պատրաստի գրամարկզ սրով պիտի վճարուն ամսանային արձակուրդի ամսականները	176,809.42
	973,479.02

Ինչպէս կը տեսնէք մեր հաշուետուութիւնէն, մեր եկամուտի կարևորագոյն բաժինը գոյացած է վարժութեան արտասահմանական պատուական նուիրատուներու գումարներէն, որոնք այսպէս կը հանդիսանան մեր կրթական-գպրոցական յաջողութեանց աշխատարար Ստորե կուտանք անոնց ցանկը իրենց նուիրատուութիւններով մէկտեղ, յայտնելով անոնց մեր և մեր աշակերտութեան և ուսուցչական կազմին խորագգաց և սրտագին շնորհակալութիւնները, ազօթելով նոյն ասին որ մեր երկնաւոր Հայրը վարձատրուի ըլլայ անոնց իր երկնատուր և հոգևոր բազմազան շնորհներով ու բարիքներով:

UNRWA	Ընդհ. ելք
Սիմոն Գեղամ Զաքարեան, Ամերիկա	40.00
Ս. Փիլիպպոսեան Հաստատութիւն	100.00
Յ. Ա. Ունեան, Լոնտոն	25.00
Կարօ Զարմանեան, Ամերիկա	230.00
Հէրբէ և Մէրի Գրգըլեան, Ամերիկա	1300.00
Կրթ. Նախարարութիւն, Երուսաղէմ	700.00
Սամուրեան ընտանիք, Ամերիկա	17,022.00
Հայ Ամերիկեան վեթերաններ, Ամեր.	100.00
Ուէլլիէյի Տիկնանց Միութիւն	20.00
Լօրէնսի Կիրակնօրեայ Դպրոց	60.00
Տեառն և Տիկնանց Միութիւն	20.00

Ընդհ. ելք	Ընդհ. ելք
Երեցկին Վարդանուշ Աւագեան, Ամեր.	500.00
Դաւաւտ Կիւլպէնկեան Հիմնարկթ.	17,389.00
Տիկին Աննիցա Հէտիսըն, Ամերիկա	250.00
Տիկին Բիթըր Զէրեան, Ամերիկա	250.00
Տիկին Դանիէլ Տօրեան, Ամերիկա	250.00
Տիկին Ալպէլի Հինգլեան, Ամերիկա	250.00
Տիկին Արա Եազուպեան, Ամերիկա	250.00
Տիկին Դարլ Հինգլեան, Ամերիկա	250.00
Տիկին Մանուէլ Մարթին, Ամերիկա	350.00
Տիկին Յլօրէն Շաղալեան, Ամերիկա	350.00
Տիկին Իսահակ Քարչապեան, Ամերիկա	250.00
Յարութիւն Քէօրօպլանեան, Սիւրի	210.00
Գ. Կիւլպէնկեան Հիմնարկթ. Էրզրոն	1,520.00
Եղևարդ Ներսէսեան, Ամերիկա	100.00
Տքթ. ձ. Պէլլիսօրիս, Ամերիկա	5000.00
Կիւլպէնկի Կիւլպէնկեան Հաստթ.	110,000.00
Յ. Մուխաթեան, Լոնտոն	400.00
Վարդուհի և Ղուկաս Գրիգորեան, Լոնտոն	430.00
Գէորգ Թահթա, Լոնտոն	430.00
Օր. Արաքսի Թաշեան, Ամերիկա	1000.00
Տիկին Մարթա Պօպուեան, Ամերիկա	350.00
Ստեփան Բանիկեան, Աւստրալիա	300.00
Հայ Օգն. Միութիւն, Երուսաղէմ	2000.00
Ճիմ Աւագեան, Ամերիկա	10,000.00
Տիկին Էլիզապէթ Պէրպլեան, Ամեր.	1000.00
Օր. Հէլէն Մէնս, Ամերիկա	1000.00
Տիկին Վարդանուշ Թաշեան, Ամերիկա	600.00
Տիկին Սօֆիա Պէլլիս, Ամերիկա	250.00
Ճօրճ Կօթիկեան, Ամերիկա	400.00
Տիկին Զարթուխ Օրթոթեան, Ամեր.	200.00

Իս. Լիւրս Ակ.		Իս. Լիւրս Ակ.	
Յովհաննէս Քիւրքճեան, Լոնտոն	500.—	Էստէֆեան Եղբարք, Նիւտոն	1100.—
Գէորգ Քիւրքճեան, Լոնտոն	500.—	Ճորճ Գարաբէճեան, Ամերիկա	400.—
Սարգիս Քիւրքճեան, Լոնտոն	500.—	Հերբի և Մէրի Գրգրէան, Ամերիկա	250.—
Սասնիկ Պետրոսեան, Ամերիկա	350.—	Տըթ. Ճորճ Քիւրքճեան, Ամերիկա	700.—
Սիմոն Չաղբրեան, Ամերիկա	1200.—	Դասնիկ Պաղարեան, Ս. Փաւլոս	1000.—
Ճէրի և Ֆլորէնս Չաղբրեան, Ամեր.	2000.—	Դրիգոր Արափեան, Ս. Փաւլոս	1000.—
Վահան Պէլլոյեան, Ամերիկա	350.—	Խորէն Եսափեան, Ս. Փաւլոս	1000.—
Տէ. Նուարդ Գարաբէճեան, Ամերիկա	500.—	Իգնատիոս Բարսեղեան, Ս. Փաւլոս	700.—
Տիկ Արօյանիս Սողիկեան, Ամերիկա	350.—	Անդրէաս Ճաֆերեան, Ս. Փաւլոս	700.—
Մարթին և Վարսնիկ Արգարեան,		Կարպիս Քէլճիքեան, Լոնտոն	1300.—
Ամերիկա	2100.—	Աւետիս Քէլճիքեան, Լոնտոն	650.—
Օր. Հէյլէն Յակոբեան, Ամերիկա	350.—	Լեւոն Պալեան, Ամերիկա	750.—
Հայկ Ճիգմէճեան, Ամերիկա	300.—	Չարլս և Լիլիան Պոյասեան, Ամերիկա	1000.—
Ֆրէնչ Լեւոն Պէլլոյեան, Ամերիկա	350.—	Տէր և Տիկ. Կարո Դրիգորեան, Լոնտոն	700.—
Ճէք Նաճարեան, Ամերիկա	250.—	Օր. Թէրէզ և Թարայեան, Ամերիկա	500.—
Փօլ Արթեան, Ամերիկա	350.—	Յակոբ և Մակր Ստեփանեան, Ամեր.	130.—
Ճօն Փաշայեան, Ամերիկա	350.—	Տէ. Մարգարէ Միքայէլեան, Ամերիկա	520.—
Տէր և Տէ. Ճորճ Ստեփան, Ամերիկա	350.—	Օր. Արմինէ Տ. Յակոբեան, Ամերիկա	500.—
Ալիս և Նորայր Մարտիրոսեան, Ամերիկա	350.—	Տիկին Աշխէն Դարիկեան, Ամերիկա	1500.—
Մարկոս Թաշճեան, Ամերիկա	500.—	Վաղինակ Միքայէլեան, Ամերիկա	1000.—
Համարաձուժ Գարաբէճեան, Ամերիկա	350.—	Զապէլ Աթէշեան, Ամերիկա	520.—
Տըթ. Էմմա Կօրէք. Ամերիկա	1000.—	Փառէն Ի. Վ. Աւետիքեան, Ամերիկա	1000.—
Օր. Ալիս Մարտիրոսեան, Ամերիկա	350.—	Տիկին Ռոզ Զարգարեան, Ամերիկա	520.—
Տիկնանց Միլոթին Հայ Եկեղեցւոյ,		Տէր և Տէ. Էմ. Գաղանճեան, Ամեր.	520.—
Մօնթրէալ, Դանտա	450.—	Արեւի Աւետեան, Ամերիկա	1000.—
Օր. Մէլիստէս Սարաֆեան, Դանտա	300.—	Հայկ Դաւաճեան, Լոնտոն	700.—
Տիկին Գարմին Քէթլին, Դանտա	40.—	Արգար Ջաքարեան, Հայֆա	1250.—
Հայկ Դասարեան, Ամերիկա	44.—	Տէ. Հայկանոյ Մարտիրոսեան, Իրան	720.—
Տիկին Վերնիքէ Քէօսեան, Ամերիկա	870.—	Տէ. Թադէւն Դաւաճեան, Ամերիկա	500.—
Տէ. Թադէւն Դանիէլեան, Ամերիկա	300.—	Տէ. Բեկլիսէն Նաճարեան, Ամերիկա	750.—
Տէ. Ազնէս Գրգրէան, Ամերիկա	790.—	Սարգիս Ճիլնաւորեան, Ամերիկա	450.—
Սարգիս Տիարպէքիւրեան, Դարադաս	10,000.—	Դ. Դաւաճարեան, Ամերիկա	1000.—
Պատրիկ Այնապեան, Դարադաս	600.—	Օր. Ալիս Յակոբեան, Ամերիկա	520.—
Նուպար և Խոսէ Այնապեան, Դարադաս	600.—	Աննա և Վաղդէն Լաքցեան, Ամեր.	1500.—
Քանդ և Այտա Տօլլէթեան,		Ֆրանք Սըպէքթ, Ամերիկա	600.—
Վիլիամ Տէ Լուիս, Դարադաս	300.—	Տէ. Վարդանոյ թաշճեան, Ամերիկա	2700.—
Մոմէն Պետրոսեան, Դարադաս	600.—	Տէր և Տէ. Էմմա Մարշ, Ամերիկա	520.—
Մանուէլ Կիրակոսեան, Դարադաս	300.—	Օր. Մէրի Թոմպսոն, Ամերիկա	520.—
Պերճ Պալիկեան, Դարադաս	1200.—	Տէ. Բարսէյա Սարաֆեան, Ամերիկա	520.—
Լույս և Աննա Տօնարթ, Դարադաս	600.—	Օր. Անի Պէրպէրեան, Ամերիկա	520.—
Սարգիս Ազարապեան, Դարադաս	600.—	Տիկնանց Միլոթ. Ս. Ղեւոնդ Եկղց.	1500.—
Էմիլիո Փոնզա Կօմէզ, Դարադաս	300.—	Վահրամ Աղապապեան, Ամերիկա	520.—
Ճօն Քէթլ, Դարադաս	300.—	Երիտ. Տիկնանց Միլոթ., Պոթերն	1500.—
Պէքարեան Եղբարք, Դարադաս	600.—	Ճօղէֆ և Էլիս Չալմար, Ամերիկա	1500.—
Սիմիոն Եղբարք, Դարադաս	600.—	Տիկին Ֆլօրա Թօմպսոն, Ամերիկա	520.—
Կարօ Պօտոշեան, Դարադաս	600.—	Տէր և Տիկին Արա Հայկ, Ամերիկա	2200.—
Զարեհ Գրգրէան, Դարադաս	600.—	Սան Ֆրանչիսկոյի Կիրակ. Վրժեր.	520.—
Ճորճ Քնէֆաթի, Դարադաս	300.—	Վահրամ Պոյասեան, Ամերիկա	2100.—
Ռ. Ա. Սալադար, Դարադաս	300.—	Տիկին Կիւլի Քէլէշեան, Ամերիկա	520.—
Գրիգոր Ղաղարեան, Դարադաս	600.—	Միշրան և Մէրի Զօփաճապեան, Ամեր.	3700.—
Առաքել Ղաղարեան, Դարադաս	300.—	Անուշ և Վահէ Բարէլեան, Ամերիկա	950.—
Ղաղար Ղաղարեան, Դարադաս	300.—	Ալպէրթ և Մարգրիտ Բարթիլոմէան,	
Վարաձան Ղաղարեան, Դարադաս	300.—	Ամերիկա	750.—
Ռաֆայէլ Գարշիսիս, Դարադաս	300.—	Հայ Կին Ակոմբ, Պոթերն	1800.—
Վարդգէս Երէցեան, Դարադաս	300.—	Օր. Արլէն Եագուպեան, Ամերիկա	520.—
Սառա և Արշի Բակլայեան, Դարադաս	350.—		

Իսր. Լիթր. Ակ.

Սիմոն և Ալիս Թաշահան, Ամերիկա	1500.—
Ռոզ և Անի Գալսեֆեան, Ամերիկա	3150.—
Տէր և Տիկին Նշան Շիմշիրեան, Ամեր.	520.—
Փաթ և Արնի Թուպրինշիմէյն, Ամերիկա	3000.—
Տիկին Նուարդ Ճըրճըրեան, Ամերիկա	520.—
Տիկին Արմիսթրէ Սթալէյ, Ամերիկա	3000.—
Հէրի Կարապետեան, Ամերիկա	520.—
Ս. Գալսեֆեան Աննա Եղից, Շիրապէս	1000.—
Օր. Նուրա Նաճարեան, Ամերիկա	520.—
Ղազար Լիմին, Ս. Փաւլոս	400.—
Ճօզէ Տիշէքէնեան, Ս. Փաւլոս	400.—
Փաւլոս Ներսէսեան, Ս. Փաւլոս	400.—
Ճօզէֆ Սէրայտարեան, Ս. Փաւլոս	400.—
Տկ. Մէրի Քէօրօղլանեան, Սիւրբ	2800.—
Տկ. Մարթա Կէնտրիս, Ամերիկա	530.—
Տքթի և Տկ. Արան Դասպարեան, Ամեր.	530.—
Միհրան Մաթոսեան, Երուսաղէմ	2000.—
Սարգիս և Ալիսիս Թիսֆէնկճեան,	
Հար. Ամերիկա	1300.—
Համասերաստ. Վերաշ. Միսթիւն	9000.—
Գէորգ և Ատրինէ Վարդպարեան,	
Հար. Ամերիկա	15,000.—
Եղուարդ Սէֆէրեան, Հար. Ամերիկա	37,500.—
Նուար Խաչիկեան, Ամերիկա	520.—
Արթիւր Մարտա, Ամերիկա	520.—
Երիտ. Տիկնանց Միսթ., Սաքրամենթո	520.—
Կիրակնորեայ Դպրոց, Սաքրամենթո	520.—
Դասպար և Լիլիա Դասպարեան, Ամեր.	520.—
Վարդ Օհանէսեան, Ամերիկա	150.—
Փերսօփ Օհանէսեան, Ամերիկա	150.—
Յարութիւն Արապեան, Հար. Ամեր.	1500.—

Մեր զպրոցական տարեկան հաշուեալումը կը փակենք մասնաւոր չնորհակալութեան յիշատակութիւններով անձնաւորութիւններու և կողմակերպութիւններու, որոնք նիւթական և բարոյական բացառիկ քաջութեան քննարկ մեր հաստատութեան համար եղած են խթան կրթական նուաճումներու:

Երախտագիտութեան խօսք ունինք ազգիս սիրեցեալ և Վեհափառ Հայրապետին՝ Տ. Տ. Վաղգէն Ա. Սրբազնազոյն Կաթողիկոսին, որ վարժարանիս նկատմամբ ունի հայրական սէր ու խնամածութիւն: Նորին Թրութեան բարձր կարգադրութեամբ ամէն տարի վարժարանս կ'օգտուի Լսնալի Արքեպիսկոպոսին հիմնարկէն 500 Անգլ. Սթիւդիին օժանդակութեամբ:

Երախտագիտական խօսք ունինք Ս. Աթուռոյ Գահակալ Ամին. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր, որ իբրեւ պետք Հայ Ե-

Իսր. Լիթր. Ակ.

Արք. Ս. Ղեոնդ Եղից, Ամերիկա	1000.—
Տիկին Էլիս Տոնիկեան, Ամերիկա	450.—
Յակոբ Տէլլաքեան, Ամերիկա	500.—
Ռէյզլէյի Տիկնանց Միսթիւն	370.—
Վահան Պէլոյեան, Ամերիկա	520.—
Օր. Մարի Հէրեան, Ամերիկա	300.—
Պարգե և Արփինէ Պապարեան, Ամեր.	1500.—
Տէր և Տիկին Թ. Տօրեան, Ամերիկա	500.—
Տիկնանց Միսթիւն Ս. Վարդան Եկեղեցւոյ, Օքլէնտ	1500.—
Տիկին Տօրի Չօյանեան, Ամերիկա	500.—
Տէր և Տկ. Եղ. Փանոսեան, Ամեր.	15,000.—
Փիթըր և Էլիզապէթ Թորոսեան Հիմնարկութիւն, Ամերիկա	16,330.—
Տկ. Չապէլ Ասարեկեան, Աստորալիա	2300.—
Տկ. Հոփսթէ Ասլանեան, Ամերիկա	1400.—
Հասարակ Դարակէօզեան Հիմնարկ.	15,000.—
Լտ. և Հէլէն Մարտիկեան, Ամեր.	15,000.—
Ռուսար Երիտ. Տիկնանց Միսթիւն	750.—
Տիկին Մարթա Պոպոսեան, Ամերիկա	500.—
Տիկին Հոփսթէ Մարթինս, Ամերիկա	500.—
Տիկին Ֆլորէնս Շաղապեան, Ամերիկա	500.—
Տէր և Տիկին Միսթիւն Ռիչարդ, Ամեր.	500.—
Տէր և Տկ. Ճոն Կապրիէլ, Ամերիկա	15,000.—
Կլարա և Ռիչարդ Մահապետեան, Ամերիկա	15,000.—
Տէր և Տիկին Ն. Ազարեան, Ամեր.	500.—
Կապուռիկ Սէֆէրեան, Ֆրանսա	45,000.—
Տէր և Տիկին Համարեան, Ամերիկա	150.—
Աննա և Ալպէրթ Հինգլիս, Ամերիկա	500.—

բուսակներն և վերին հովանաւորը մեր վարժարանին, եղաւ միշտ ալ քաջալերողը մեր կրթական յաջողութիւններուն: Շնորհակալութիւն նաեւ անձնապէս անոր համար որ տարիներ է ի վեր մեզի վստահած է Ս. Աթուռոյ այս հաւեական հաստատութիւններէն մէկուն զեկամարութիւնը:

Շնորհակալութիւններ Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան արժանւոր Նախագահ, Վսեմափայլ Տէր և Տիկին Ալեքս և Մարի Մանուկեաններուն թէ՛ անձնապէս և թէ՛ իբրեւ նախագահ Ազգապարծան Հ. Բ. Ը. Միսթիւն, որոնց օրին զոնեքք միշտ ալ կը մնան բաց ու համակրողից մեր վարժարանին նկատմամբ, որուն համար ալ մենք չմոռցիք ձեռնառնայն ամէն անգամ որ զիմեցինք իրենց աջակցութեան: Նորին Վսեմութեան իսկ կարգադրութեամբ մեր վարժարանը կը ստանայ ամէն տարի 1000

տալարի օժանդակութիւն մը Հ. Բ. Ը. Միւսթեան Փիթըր և Էլիզապէթ Թորոսեան հիմնադրամէն:

Ծնորճակալութիւններ հանրածանօթ մատարական Տէր և Տիկին Զորեհ Պատեհեաններուն, որոնք տարեկան 2300 տալարի նուիրատուութեամբ կը բերեն իրենց կրթութեան և ազնիւ Հայու ստատը մեր վարժարանի Մանկապարտէզին, որ իրենց մօրաքրոջ անունով կը կոչուի Մանիո Տ. Մեարտեան Մանկապարտէզ: Ան եղած է Սերասարիոյ առաջին մանկապարտիգպանութիւն:

Ծնորճակալութիւններ Հաււրթ Գարակէօղեան Հաստատութեան և իր նախագահին՝ ազգանուէր ու կրթատէր հայունի Օր. Լէյլա Գարակէօղեանին, որոնք տարեկան 1000 տալարի նուիրատուութեամբ մը կը բարերարեն ամբողջական դասարան մը, Հաււրթ Գարակէօղեան դասարան անունով:

Սրտագին շնորճակալութիւններ Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութեան, որ նախընթաց տարիներու նման այս տարի ևս օժանդակեց մեր կրթական գործին 3220 տալարի յատկացումով մը:

Զգածուած շնորճակալութիւններ Ամերիկայէն Տէր և Տիկին Եղուարդ Փանոսեաններուն: Ծնորճալի այս գոյգը տարեկան 1000 տալարի յատկացումով մը ամբողջական դասարան մը կը բարերարէ իրենց ընտանիքի անունով:

Սրտագին շնորճակալութիւններ մեծանուն գրագէտ Գրիգոր Զօհրապի դրսեակ Տիկ. Տօլօրէզ Լէյպմանին, որ ամէն տարի 350 տալարի նուիրատուութիւն մը կ'ընէ մեր կրթական գործին:

Ծնորճակալութեան սրտագին պարտքունինք Սահման Փիլիպպոսեան Հիմնադրամին և անոր նուիրեալ նախագահ Տիար Ալպէրթ Մոմճեանին, որ տարեկան 1000 տալարի նուիրատուութեամբ ամբողջական դասարան մը կը պահեն:

Դարձեալ զգածուած շնորճակալութիւններ Հարաւային Ամերիկայէն Տիար Սարգիս Տիարպէքիբեանին, որ տարեկան 1000 տալարի նուիրատուութեամբ դասա-

րան մը կը բարերարէ իր ընտանիքի անունով:

Մեր խորին շնորճակալութիւնները Տէր և Տիկին Էստարտ և Հէլէն Մարտիկեաններուն, որոնք հայրենանուէր զգացումներով ապօրոյն, տարեկան 1000 տալարի նուիրատուութեամբ կը բարերարեն ամբողջական դասարան մը:

Սրտագին շնորճակալութիւններով կը յիշատակենք Հարաւային Ամերիկայէն Ալֆէրեան պատուական և ազգանուէր ընտանիքը, որուն երեք ճիւղաւորումները մեր վարժարանէն ներս կը պահեն երեք դասարաններ ըստ հետեւեալին.

1. Տիար Կոպեռնիկ Ալֆէրեան, Թրանսա. տարեկան 3000 տալարի յատկացումով:

2. — Տիար Եղուարդ Ալֆէրեան, Պ. Այրէս, տարեկան 2500 տալարի յատկացումով:

3. Տէր և Տիկին Գէորգ և Ատրինէ վարդապարսեան, Պ. Այրէս, տարեկան 1000 տալարի յատկացումով:

Սրտագին շնորճակալութիւններ ունինք Լոս Անճելոսեան Տէր և Տիկին Ուոլթըր Խարապեաններուն, որոնք ոչ միայն անձնապէս 1000 տալարի նուիրատուութեամբ ամբողջական դասարան մը կը պահեն իրենց անունով, այլև Թարգմանչաց կրթական գործին չափը հետաքրքրութիւն ստեղծած են իրենց բարեկամական շրջանակներէն ներս ևս, ու այսպէս իրենց միջոցաւ մեր կրթական գործին ծանօթ դարձած երկու պատուական ազգայիններ այժմ մաս կը կազմեն մեր կրթական գործին օժանդակողներու խումբին. ինչպէս Լոս Անճելոսէն Տէր և Տիկին Ճօն Կապրիէլ, որոնք տարեկան 1000 տալարի նուիրատուութեամբ կը պահեն ամբողջական դասարան մը: Իսկ միւսները Լոս Անճելոսէն Տէր և Տիկին Ռիչըրտ և Կլօրիս Մահեսեաններ, որոնք տարեկան 1000 տալարի յատկացումով կը պահեն ուրիշ դասարան մը: Մեր սրտագին շնորճակալութիւնները իրենց:

Մեր մասնաւոր շնորճակալութեանց ցանկը կը փակենք մեծագումար նուիրատուի մը յիշատակութեամբ — Նիւ Եորքի

Կիւլլուպի Կիւլպէնկեան Հաստատութիւնը, որ այս տարի 9000 տւարի բացասիկ յատկացումով մը շատ զբաղան դեր կատարեց մեր վարժարանի տարեկան պիւտճէին հաւասարակշռումին ի նպաստ:

Շնորհակալութիւններ Գարագաւէն Տիար Պատրիկ Այնաղեանին և Սան Փաւլոյէն Տիար Անդրէաս Ճաֆէրեանին, որոնք հակառակ իրենց բազմադարաւ ժամանակին, բացասիկ զօհողութեամբ ամէն տարի անձամբ կը կազմակերպեն Գարագաւէտի և Սան Փաւլոյի բարերարներուն օգնութեան գործը:

Մեր բոլոր յարգելի նախնականներն ալ, մանաւանդ Ս երկրի անտեսական տաղնապի այս օրերուն, մեզ համար եղած են փրկութեան լաստակ, որով մենք կրթական տարի մը ևս բարձրացինք, արդիւնատեսական անվերջով ընթացքով: Այսպէս մեզի կարելիութիւնը արեւած եղաւ ունի խանդավառ ու հաստատուն քայլերով անտեսել մեր ազգի Սողիմական դասակներուն հոգեւոր ու մտաւոր կրթութեան բարի գործը: Աստուծոյ օրհնութիւնը թող ըլլայ մեր բոլոր տղանի նախնականներն վարձատրութիւնը:

Շնորհակալութեան սրտագին պարտք ունինք նաև «Նոր Օր», «Ասպարէզ»,

«Լրարեր» և «Շարժում» թերթերուն խմբագրութեանց, որոնք ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի ևս օժանդակեցին մեր վարժարանին, կանոնաւորաբար հայթայթելով իրենց լրագրական հրատարակութիւնները:

Իսկ Արտաստճմանի Հայերի հետ Մշակութային կապի բնկերակցութենէն տարիներէ ի վեր ու այս տարի ևս շարունակեցինք ստանալ մանկական ու հասարակական թերթեր, օրաթերթեր, պարբերականներ, գիրքեր ու մանաւանդ Հայերէն լեզուի դասադիրքեր: Մայր Հայրենիքէն համեմատ այս շատ սրտագին ուշադրութիւնը մեր սրտերը կը լեցնէ ցնծալից ուրախութեամբ և հրախառն իտութեամբ:

Մեր սրտագին աղօթքն է որ Աստուծոյ իր երկաւոր շնորհներով առատացնէ Ս. Թարգմանչաց կրթական շարքը ու զայն հովանաւորող Ս. Յակոբեանց պանծալի Աթոռը ու պայծառափայլ ծաղկեցնէ Հայկական Երեսօտէզի, «Նորոյս Սիանի» հրաշակերտ Հաստատութիւնը:

Եղբայրական ջերմ սիրով ու խորին ակնածանքով՝

ԿԻՐԵՂ ԵՊՍ. ԳԱՅԻԿԵԱՆ

Տեսուչ

Ս. Թարգմանչաց Երկ. վարժարանի



Մ. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Շր. 4 Մարտ.— Ս. Իսահակայ Պարթևի Հայրապետին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխաղիբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնաւարեան:

* Կիր. 5 Մարտ.— Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արդ. Վալէմտէրեան:

* Դշ. 8 Մարտ.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Վարդանանց մեծահանդէս նախատօնակին:

* Եշ. 9 Մարտ.— Ս. Վարդանանց զօրավարացն մերոց՝ 1036 վկայիցն (Յիշատակ միոնիոց եւ տօն ազգային): Այս տօնը Ս. Աթոռիս մէջ Ժառանգաւոր սաներու տօնը նկատուած ըլլալուն, ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարազեց Վարժարանի Փոխ-Տեսուչ Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնաւարեան: Ապա Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վաղգէն Ա.—ի անուան տօնին առթիւ կատարուած «Հաւատարմական Մագթանք»ի արարողութեան: Ժառանգաւոր սաներ Ս. Հոգորդաւորեան ստացան: Ս. Պատարազի աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեանի:

* Ուր. 10 Մարտ.— Ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարազ մատուցուեցաւ Ուղղափառ Ասորիներու Ս. Մարկոս Աւետարանի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Ս. Պատարազէն ետք, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորիներու Գերշ. Եպիսկոպոսէն: Երթ ուղարձի թափօրները դիտարեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեան:

* Շր. 11 Մարտ.— Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն (381): Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխաղիբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

— Կէսօրէ ետք, նախ ի Ս. Հրեշտակապետ եւ ապա ի Ս. Յակոբ տեղի ունեցաւ խորաններու եւ սրբանկարներու վարդապետութիւն:

* Կիր. 12 Մարտ.— Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւագեա Արդ. Պալեան:

* Գլ. 15 Մարտ. — Սկիզբ կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արեւադայ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք՝ «Եղազական»ի առաջին ժամերգութիւնները:

* Ուր. 17 Մարտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ, որ Զեռագրատունն է Ս. Աթոռիս: Հանդիսապետն էր Զեռագրատան Տեսուչը՝ Գերշ. Տ. Նորայր Արք. Պողոսեան:

* Շր. 18 Մարտ. — Ս. Թէոդորոսի գորավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրամանքի Զեռագրատան՝ Ս. Թորոս եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ. Մելիզոնեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Մխարանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը վերնատան մեր մատուռին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբավայրերու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Պաշտուրեան:

* Կիր. 19 Մարտ. — Արտաքսման: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ապա կատարուեցաւ մեծահանդէս թափօր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղիին շուրջ, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր եւ երգեցողութեամբ Այսպիւրպութեան շարականներու:

* Գլ. 21 Մարտ. — Գիշերասկիզբին, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց Եկեղեցիի առաջին ժամերգութիւնը:

* Ել. 23 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախաղահեց եւ քարոզեց Գերշ. Տ. Շահէ Արք. Աճէմեան, պահեցողութեան եւ ապաշխարութեան կարեւորութեան մասին:

* Շր. 25 Մարտ. — Ս. Կիրղի Երուսաղիմացոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիրղի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 26 Մարտ. — Անառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարզ Արք. Տաւուշարեան: Քարոզեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան, խօսքը ուղղելով ուխտաւորարար Ս. Աթոռ գտնուող 100 Պարսկահայերու խումբի մը, յորդորելով դանձոք հաստատ մնալ մեր նախնիքներու հաւատքին եւ աւանդութիւններուն վրայ:

* Գլ. 28 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց նոյն վանքի Տեսուչ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեանը, մեկնաբանելով Ղուկասու Աւետարանին մէջ յիշուած անպտուղ թղենիին առակը:

* Ել. 30 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախաղահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
Ապրիլեան Խոհեր	Ա. Գ.	82
ԿՐՕՆԱԿԱՆ		
Խաւարում	ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ.	84
Յիսուսի առաքելութեան ըմբռնումը «Մեսիա»յի գաղափարի լոյսի տակ	ՎՐԷԺ ՍՐԿ. ՆԵՐՍԷՍԵԱՆ.	87
ՇՆՈՐՀԱՌՈՐԱԳԻՐՆԵՐ		
Ջատկական շնորհաւորագիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Կաթողիկոսէն		94
Ջատկական շնորհաւորագիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Ա եւ Գարեգին Բ Կիլիկիոյ Վեհա- փառ Կաթողիկոսներէն		95
Ջատկական շնորհաւորագիր Համայն Ռուսիոյ Պատրիարք Ն. Ամեն. Պիմեն Պատրիարքէն		96
Ջատկական շնորհաւորագիր Քենթըրպորիի Արքեպիսկոպոսէն		97
Ջատկական շնորհաւորագիր Վսեմ. Տիար Ալեքս. Մանուկեանէն		98
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
Քառեակներ	Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ	99
Աստուածաշունչ Մատեանի Հայկական Բնագիրը	Յ. ԱՆԱՍԵԱՆ	100
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
Պատմութիւն Երկրին Տարօնոյ	Փ. ԱՆԹԱՊԵԱՆ	122
ՊԱՏՄԱԿԱՆ		
Խարրի-Միտանիներ	Գ. ՀՄՏԻՏԵԱՆ	131
Արմաշու Դարեվանքին վերջին դաստիարակ	Յ. ԹՈՐՈՅԵԱՆ	139
ՏԻՐՈՒՆԻ		
Հանգիստ Գերշ. Տ. Ասողիկ Արքեպս. Ղա- զարեանի		145
Հանգիստ Գերշ. Տ. Բաբգէն Արքեպս. Ա- պատեանի		146
Կենսագրական Գերշ. Տ. Բաբգէն Արքեպս. Ապատեանի		148
Հանգիստ Տիար Տիգրան Սմաթեանի		149
ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ		
Տարեկան Տեղեկագիր Սրբոց Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի	ԿԻՐՐԵՂ ԵՊՍ. ԳԱՐԻԿԵԱՆ	150
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
Եկեղեցականք - Բնականք		158
Բովանդակութիւն		160